ՑՈՒԼԻՍ 1980

digitised by A.R.A.R.@

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մ. ԻՇԽԱՆ . . . . . Ժամադրութիւն

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ . . . . . Ո՛, Տալիթա

» » . . . . . Սադուռնական

Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ . . . . . Ածելիին շեղբը...

Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ . . . . . Ծննդոց

Յ. ԿԱՐԱՊԵՆՑ . . . . . Որդի, անունը՝ Մայքլ

Է. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ . . . . . Ճանաչենք մեր մեծ հարեւանին

Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ . . . . . Դիցահոգեբանութիւն

Վ. ՕՇԱԿԱՆ . . . . . Հայաստանի երիտասարդ բանաստեղծները

Շ. Ֆ. . . . . Հեքանոյշ Արշակեանի «Հոգիների արցունքը»

Կ. ՇԱՀԻՆԵԱՆ . . . . . Ատոմիս կամ այլափոխուելու ճիգը

ԱՏՈՆԻՍ . . . . . Բանաստեղծութիւններ

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ . . . . . Սպիտակ ու սեւ պատմութիւն

Ց. ՔԻՒՐՔՃԵԱՆ . . . . . Թիւրն ու թերին

8955-81p
digitised by A.R.A.R.@ 165-2UC'

Բազմակ

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԹ. ՏԱՐԻ. ԹԻՒ 7 ՊՈՒԼԻՍ 1930 ԳԻՇԵՐԱԹԻՒ

Մ. ԻՇԽԱՆ

ԺԱՄԱԳՐՈՒԹԻՒՆ

(ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԷԿ ԱՐԱՐ)

Վերջին տարիներուն, Մ. Իշխան իր ժամանակն ու ուժերը առաւելաբար տրամադրեց թատերգութեան, տեղծելով չորք մը թատերախաղեր, որոնցմէ մէկը՝ «Մեռնիլը արքան գժուար է», հատորի վերածուեցաւ եւ ապա բեմադրուեցաւ «Գասպար Իփէկեան» թատերախաղէն կողմէ, իսկ ուրիշ մը՝ «Մառնարանէն եկած մարդը», լոյս ընծայեց «Բապինոյի մատենաշարը»։

Հետաքրքիր էջերուն տրուած «ժամադրութիւնը» ժամ կը կազմէ Մ. Իշխանի նոր հատորին, որ կ'ամփոփէ վեց թատերախաղեր եւ լոյս կը տեսնէ ի մօտոյ։

Տեսարանը կը ներկայացնէ փոդոց մը, որ կը բացուի ծառուղիի մը վրայ։ Մայթին՝ կանգ ներկուած նստարան, որ կը ներառուրուի, որոշ չափով, փոդոցի էլեկտրական լամբով։ Նստարանի կողմին կը բարձրանայ այն սիւնը, որուն վրայ ամրացուած է լամբը։ Գիշեր. ցանցառ երթեւեկ։

Բեմը բացուելէն պահ մը ետք, երիտասարդ եւ շնորհեալի աղջիկ մը՝ ժաձէթ, արագ քայլերով կը դիմէ դէպի նստարանը եւ կանգ կ'առնէ էլեկտրական լամբը կրող սիւնին քովը։ Հագուած եւ յարդարուած է պարզ, բայց ժամադրութեան ցոյցեր օրիորդի մը խնամքով։

digitised by A.R.A.R.@

1.

Ժանէթ կը սպասէ մէկուն, որ կ'ուշանայ: Անչափ արտայայտութիւնը, պայուսակը բռնելու ձեւն ու շարժումները կը մատնեն անհամբերութիւն եւ որոշ անձկութիւն: Մերթ կը դառնայ ձախ, մերթ՝ աջ, նայուածքը յառած փողոցի վերի եւ վարի անկիւններուն: Կը նայի ժամացոյցին եւ կը հառաչէ: Քանի մը քայլ առաջ կու գայ, ապա կը վերադառնայ տեղը, սիւնին մօտ: Հազիւ տեղաւորուած նստարանին վրայ՝ ոտքի կ'ելլէ եւ կը հարցաքննէ ժամացոյցը: Երբեմն առջեւէն կ'անցնին թեւանցուկ զոյգեր կամ առանձին քալող անցորդներ: Ոմանք խուզարկու նայուածք մը կը ձգեն վրան, մինչ իր անհամբերութիւնը երթալով կ'աճի:

Վերջապէս երիտասարդ մը կը տեսնուի փողոցի ծայրէն, գիշերուան կիսալոյսին մէջ, եւ կ'առաջանայ դէպի նստարանը: Ժանէթ կ'ընդառաջէ յայտնապէս յուզուած, բայց յանկարծ կանգ կ'առնէ հիասթափ: Երիտասարդը, որ կը կոչուի Ժան, իր սպասած տղան չէ:

Ժան, *ոտքոտ* հագուած, կու գայ անայլայլ եւ կը կենայ նոյն նստարանին մօտ, Ժանէթէն քայլ մը անդին: Հանդարտ կը նայի ժամացոյցին եւ սիկառէթ մը կը վառէ: Ժանէթ եւ Ժան պահ մը անտարբեր կը ձեւանան իրարու հանդէպ, մերթ ընդ մերթ գաղտնի նայուածքներ նետելով իրարու վրայ: Աղջիկը իր անհամբեր շարժումներով յայտնի կ'ընէ, թէ հոն ժամադրուած է ուրիշի մը հետ: Տղան իր պզպարիւն սպասումով նոյն դիրքին մէջ է: Քանի մը վայրկեան լռութիւնը կը շարունակուի:

ԺԱՆ.— Ի՞նչ հրաշալի գիշեր...
ԺԱՆԷԹ (Լուռ է):
ԺԱՆ.— Այս տարի գարունը չուտ եկաւ, չէ՞ք կարծեր:
ԺԱՆԷԹ (Լուռ է):
ԺԱՆ.— Ուշացաւ, այնպէս չէ՞:
ԺԱՆԷԹ (Դժկամ եւ խիստ).— *Ո՞վ:*
ԺԱՆ.— Ան՝ որուն հետ ժամադրուած էք:
ԺԱՆԷԹ (Նոյն խիստ շեշտով).— *Ձեզի չի խառնուիր:*
ԺԱՆ.— Անշուշտ, բայց հաճելի չէ երկար սպասելը:

Ժանէթ միւս կողմ կը դառնայ եւ չի պատասխաներ:

ԺԱՆ (Գրպանէն սիկառէթի տրաբը հանելով).— *Կը ծխէ՞ք արդեօք...*
ԺԱՆԷԹ.— Ո՛չ, շնորհակալ եմ:
ԺԱՆ (Սիկառէթ մը վառելով).— *Սպասման վայրկեանները չդղալու լաւագոյն միջոցը ծխելն է:*
ԺԱՆԷԹ.— Ծխեցէք ուրեմն որքան որ ուզէք (դէմքը անդին կը դարձնէ):
ԺԱՆ (Ժպտուն).— *Ձեմ կարծեր, որ ես չատ ծխելու պէտք ունենամ. հիմա կու գայ...*

digitised by A.R.A.R.@

Լռութիւն: Ժանէթ քանի մը քայլ կ'առնէ ճեղուած եւ ետ կը դառնայ:

ԺԱՆԷԹ.— Ներողութիւն, ժամը քանի՞ է:
ԺԱՆ.— Ժամացոյց չունի՞ք:
ԺԱՆԷԹ.— Ունիմ, բայց վախնամ սխալ ցոյց կու տայ:
ԺԱՆ.— Ուրը քան կ'անցնի: Երկա՞ր առենէ կը սպասէք:
ԺԱՆԷԹ.— Ո՛չ, այսինքն, հազիւ վեց-եօթը վայրկեան կ'ըլլէ:
ԺԱՆ.— Միշտ այսպէս երկա՞ր կը սպասցնէ ձեզ...
ԺԱՆԷԹ.— Ո՞վ:
ԺԱՆ.— Ան՝ որուն կը սպասէք:
ԺԱՆԷԹ.— Ո՛չ, ճիշդ ժամանակին կու գար, նոյնիսկ քառորդ ժամ առաջ. չեմ գիտեր՝ այսօր ի՞նչ պատահած է:
ԺԱՆ.— Մի՛ մտահոգուիր. անպայման կու գայ:
ԺԱՆԷԹ.— Ո՞վ է մտահոգուողը. ուզէ՛ գայ, ուզէ չգայ: Փիլ մըն ալ կը սպասեմ, կ'երթամ:
ԺԱՆ.— Գիտէք, օրիորդ, կրնայ յանցաւոր չըլլալ: Կամքէ անկախ պատճառներ երբեմն արդելք կը հանդիսանան:
ԺԱՆԷԹ (Զդայլեն).— Ի՞նչ կ'ուզէ ըլլայ, մարդ պէտք է յարդէ իր տուած ժամադրութիւնը, մանաւանդ երբ...
ԺԱՆ.— Մանաւանդ երբ սիրային ժամադրութիւն է:
ԺԱՆԷԹ (Կը ժպտի).— Ի՞նչքան ալ նոյն ձեւով կը մտածէ:
ԺԱՆ.— Ո՞վ:
ԺԱՆԷԹ.— Ան՝ որուն կը սպասէք:
ԺԱՆ.— Չեմ գիտեր, բայց ես նոյն ձեւով կը մտածեմ: Ապացոյց՝ որ եկած եմ ահա ժամանակէն առաջ եւ կը սպասեմ:
ԺԱՆԷԹ.— Եթէ չգայ՝ ի՞նչ կ'ընէք:
ԺԱՆ.— Կախում ունի: Կը հարցաքննեմ եւ յետոյ կա՛մ կը նեղեմ, կամ կը պատժեմ:
ԺԱՆԷԹ.— Կը պատժէ՞ք, ինչպէ՞ս:
ԺԱՆ.— Շաբաթ մը ամբողջ չեմ տեսնուիր, հեռախօս ալ չեմ ըներ, մինչեւ որ...
ԺԱՆԷԹ.— Մինչեւ որ...
ԺԱՆ.— Մինչեւ որ ինք ոտքս գայ եւ ներողութիւն խնդրէ:
ԺԱՆԷԹ.— Օ՜, բաւական անդութ է. մեղք է աղջկան:
ԺԱՆ.— Սիրոյ մէջ գիջում չկայ. կտրուկ պէտք է ըլլալ, չէ՞ք կարծեր:
ԺԱՆԷԹ.— Այո, բայց կամքէ անկախ պատճառներ կան:
ԺԱՆ.— Կը հասկնամ. միայն թէ՝ ես քմայք չեմ կրնար հանդուրժել: Ամէնէն չսիրած բանս աղջիկներուն քմայքն է:
ԺԱՆԷԹ.— Ամէն աղջիկ քմայքոտ չ'ըլլար: Ձեր ընկերուհին քմայքո՞տ է:
ԺԱՆ.— Ո՛չ դանդատելու չափ. բայց եւ այնպէս՝ հրեշտակ մը չէ:
ԺԱՆԷԹ.— Գիտի ուզէ՞ք հրեշտակի մը հետ սիրաբանիլ:
ԺԱՆ (Ընդվզած).— Օ՜, ո՛չ:
ԺԱՆԷԹ.— Կ'ենթադրեմ, որ չատ ձանձրալի պիտի ըլլար:
ԺԱՆ.— Անշուշտ: Իմինս հրեշտակի եւ սատանայի խառնուրդ է:
ԺԱՆԷԹ.— Ինչպէս բոլոր աղջիկները՝ այր մարդոց կարծիքով:

digitised by A.R.A.R.@

ԺԱՆ.— Սխա՞լ է։
ԺԱՆԷԹ.— Ի՞նչ դիտեմ. ձեր դրած ակնոցներէն կախում ունի։
ԺԱՆ.— Ես առանց ակնոցի կը նայիմ աղջիկներուն։
ԺԱՆԷԹ.— Վա՜յ է եկեր ձեզի, եթէ կարճատես էք։
ԺԱՆ.— Այդ կասկածը պիտի չունենաք բնաւ Անժելը տեսնելով։
ԺԱՆԷԹ.— Անժե՞լ է անունը։
ԺԱՆ.— Այո։
ԺԱՆԷԹ.— Խարտեա՞շ է թէ թուխ։
ԺԱՆ.— Աւելի թուխի վրայ է, բայց աչքերը խոժ են, կանանչի զարնող։
ԺԱՆԷԹ.— Գեղեցիկ է ուրեմն։
ԺԱՆ.— Կ'ենթադրեմ. դեղեցկութիւնը վիճելի է, ճաշակի հարց։
ԺԱՆԷԹ.— Փօղն ալ այդպէս կ'ըսէ։
ԺԱՆ.— Փո՞լ է անունը։
ԺԱՆԷԹ.— Այո։
ԺԱՆ.— Կը ճանչնա՞ս արդեօք։
ԺԱՆԷԹ.— Չեմ դիտեր։ Պաշտօնեայ է պետական դրասենեակի մը մէջ։
ԺԱՆ.— Արտաքինո՞վ։
ԺԱՆԷԹ.— Բարձրահասակ, ամրակազմ։ Կը սիրէ կոկիկ հագուիլ եւ սուզնոց փողկապներ կրել։
ԺԱՆ.— Ինձի պէս անփոյթ եւ թափթփած չէ ուրեմն։
ԺԱՆԷԹ.— Դուք թափթփած չէք. ձեր ոճը տարբեր է։
ԺԱՆ.— Ես կը նեղուիմ օձիք-փողկապի մէջ։

Փողոցի ծայրէն բարձրահասակ երիտասարդ մը կ'երեւի։ Ժանէթ fայլ մը առաջ կը նետուի։

ԺԱՆԷԹ.— Փօղն է կարծեմ։ Վերջապէ՛ս...

Երիտասարդը կու գայ, կ'անցնի անտարբեր։

ԺԱՆԷԹ.— Վա՜հ, ինչպէ՛ս խաբուեցայ. ինքը չէ։
ԺԱՆ.— Մի՛ յուզուիք. կու գայ։ Անպայման կամքէ անկախ պատճառներ կան։ Նստեցէք քիչ մը. կը յոգնիք այդպէս ոտքի վրայ։

Կը նստին կոֆէ-կաֆէի։

ԺԱՆ.— Սիկառէ՞թ։
ԺԱՆԷԹ.— Այո, հիմա հատ մը կը ծխեմ։

Երկուքն ալ կը վառեն սիկառէթները եւ պահ մը կը ծխեն առանց խօսելու։

digitised by A.R.A.R.@

ԺԱՆ.— Փօլը չատ ուշացաւ, այնպէս չէ՞։
ԺԱՆԷԹ.— Անժելն ալ։
ԺԱՆ.— Այո, Անժելն ալ։
ԺԱՆԷԹ.— Դուք միշտ այս նստարանին վրա՞յ կը ժամադրուիք։
ԺԱՆ.— Ո՛չ, այս երկրորդ անգամն է։ Իսկ դո՞ւք։
ԺԱՆԷԹ.— Ինձի համար յարմար է այս վայրը. մեր տան դիմին վրայ կ'իյնայ։
ԺԱՆ.— Տունէն չէ՞ն հետաքնդրեր. արգելք չէ՞ն դներ։
ԺԱՆԷԹ.— Ո՞վ, հա՞յրս։
ԺԱՆ.— Հայրդ կամ եղբայրդ։
ԺԱՆԷԹ.— Հիմա առանկ բա՞ն կայ։ Զարմհաս եմ, կ'աշխատիմ։ Ազատ չէ՞մ ուզածս ընելու։
ԺԱՆ.— Ի հարկէ, ազատ էք։ Անժելը այդպէս չէ։
ԺԱՆԷԹ.— Հապա ինչպէ՞ս է։
ԺԱՆ.— Ծնողքի իշխանութեան տակ։ Հայրն ու մայրը շատ կը նեղեն զինք։ Վախ ու դողով կու գայ ժամադրութեան։
ԺԱՆԷԹ.— Ինչ՛ղճ աղիկ...։ Բաւական յետամնաց ծնողք ունի եղեր։
ԺԱՆ.— Յետամնաց չեն, այլ՝ պահպանողական։
ԺԱՆԷԹ.— Դուք կը հաւնի՞ք անոնց ընթացքը։
ԺԱՆ.— Ի հարկէ՛ հաշուիս չի գար, բայց միւս կողմէ...
ԺԱՆԷԹ.— Ի՞նչ՝ միւս կողմէ...
ԺԱՆ.— Կը խորհիմ, թէ ծնողք մը իրաւունք ունի հսկելու իր զաւկին վրայ, մա՛նաւանդ երբ աղջիկ զաւակ է։
ԺԱՆԷԹ (կը խնդայ բարձրաձայն).— Մեծ հօրս կարծիքները ունիք։ Բնաւ չէի խորհեր, թէ դուք այդքան... ինչպէ՞ս ըսեմ, պահպանողական կրնաք ըլլալ։
ԺԱՆ.— Ես բարոյական սկզբունքներ ունիմ։
ԺԱՆԷԹ (Հեզգիեսէ տոմճալով).— Ժամադրուիլը, մէկու մը հետ դուրս ելլելը անբարոյութի՞ւն է։ Դուք ինչո՞ւ նոյնը կ'ընէք այն ատեն։
ԺԱՆ.— Նայած թէ որո՞ւն հետ դուրս կ'ելլէք. ծնողք մը պէտք է գիտնայ...
ԺԱՆԷԹ.— Աղջի՛կը պէտք է գիտնայ, թէ որո՞ւն հետ դուրս կ'ելլէ։ Ծնողքը ի՞նչ կը խառնուի։
ԺԱՆ.— Կրնայ անփորձ ըլլալ, միամիտ։
ԺԱՆԷԹ.— Հիմա անփորձ եւ միամիտ աղջի՞կ կայ։
ԺԱՆ.— Ես քոյրս չեմ ձգեր, որ դուրս ելլէ, մինչեւ չհասկնամ, թէ ազան ո՞վ է։
ԺԱՆԷԹ (Բարկացած ոտքի ելլելով).— Կը նեղէք, բաւական յետամնաց եւ բռնակալ մէկը կ'երեւիք...
ԺԱՆ (Նոյնպէս ոտքի, ոգեւոր շեշտով).— Մի՛ բարկանաք, օրիորդ, թոյլ տուէք, որ միտքս լաւ բացատրեմ։
ԺԱՆԷԹ (Զղայրեն).— Ո՛չ, ո՛չ, հասկցայ։ Լա՛ւ որ ձեզի հետ չեմ ժամադրուած...։ Ինչ՛ղճ Անժել...

Ժան լուռ կը նայի իրեն, ներքոգամիտ ժպիտով։ Ժանէթ մտնիր քայլերով կ'երթեւեկէ մայթին վրայ եւ անձկալից նայուածքներ կը նետէ փողոցի ծայրերուն։

digitised by A.R.A.R.@

ԺԱՆԷԹ.— Ժամը քանի՞ եղաւ։

ԺԱՆ.— Ութուկէս։

ԺԱՆԷԹ.— Ո՞ւր մնաց այս տղան։

ԺԱՆ.— Համբերող եղէք. հիմա կու գայ, անպայմա՛ն կու գայ։

ԺԱՆԷԹ.— Ինչէ՞ն գիտէք։

ԺԱՆ.— Եթէ ձեզ կը սիրէ՝ կու գայ. չի կրնար չգալ։

ԺԱՆԷԹ.— Ինչէ՞ն գիտէք, թէ դիս կը սիրէ։

ԺԱՆ (խորունկ նայելով աղջկան աչքերուն).— Կարելի չէ ձեզ չսիրել։ Դուք այն աղջիկներէն էք, որոնց առջեւ տղաքը զինաթափ կ'ըլլան. առանց պայմանի անձնատուր կը դառնան։

ԺԱՆԷԹ (Ուրախ).— Իսկապէ՞ս...։ Ես շողոքորթութենէ չեմ ախորժիր, դիտցած եղէք։

ԺԱՆ.— Շողոքորթութիւն չէ ըրածս. ճշմարտութիւնն է, որ կ'ըսեմ։

ԺԱՆԷԹ.— Շատ ազնիւ էք. բոլոր տղաքն ալ նոյնը կ'ըսեն։

ԺԱՆ.— Փօլը ըսա՞ծ է ձեզի, թէ սքանչելի աչքեր ունիք, խորունկ եւ վճիտ, կախարդիչ եւ խորհրդաւոր...

ԺԱՆԷԹ (Կարմրելով).— Իսկապէ՞ս...։ Փօլը շատ ժլատ է իր արտայայտութիւններուն մէջ։

ԺԱՆ.— Զարմանալի՜...

ԺԱՆԷԹ.— Դուք նման բոմբիլիմանիներ յաճախ կ'ընէ՞ք Անժելին։

ԺԱՆ.— Կ'ընեմ՝ երբ պէտք է ընել, երբ սիրտս պահանջէ կը զգայ պոռթկալու։

ԺԱՆԷԹ.— Երանի՜ Անժելին...

ԺԱՆ (Ոգեւորուած).— Գեղեցկութիւնը, օրիորդ, այնպիսի գանձ մըն է, որուն մեզի տուած բերկրանքն ու երջանկութիւնը չենք կրնար ծածուկ պահել. պէտք չէ, որ պահենք։ Գեղեցկութիւնը պաշտամունքի եւ փառաբանութեան կը կարօտի...։ Եւ ձեր աչքերը գեղեցիկ են, չա՜տ գեղեցիկ։

ԺԱՆԷԹ (Հիացած կը լսէ, հետզհետէ աւելի յափշտակուելով).— Շնորհակալ եմ։

ԺԱՆ.— Փօլը իր հիացումն ու վերացումը չի՞ յայտներ ձեզի, երբ կը գրկէ ձեր ճկուն իրանը. իսկապէս շատ նեղդաչնակ եւ բարեձեւ մարմին ունիք...

ԺԱՆԷԹ.— Իսկ դուք՝ խօսելու դիւրութիւն։ Ամէնո՞ւն ալ նման խօսքեր կ'ըսէք։

ԺԱՆ.— Ո՛չ, երբե՛ք. ես ամէն աաեն այսպիսի բաներ չեմ ըսեր. չեմ կրնար ըսել. բայց երբ դէմս կեցած բլլայ ձեզի նման հմայիչ աղջիկ մը, սիրտս է, որ կը սկսի խօսիլ եւ բառերը կու գան ինքնաբերաբար, ազօթքի պէս...

ԺԱՆԷԹ.— Կարծեմ ակսանք մեր դերերը մոռնալ։ Դուք հոս եկած էք Անժելը սպասելու, իսկ ես՝ Փօլը։

ԺԱՆ (Հառաչելով).— Ա՜խ չդ է...։ Ես անոնք կ'ուզեմ։

ԺԱՆԷԹ.— Կու գան, եթէ անշուշտ ձեր Անժելը մինչ այդ ուրիշ մէկը չդտաւ։

ԺԱՆ.— Զար էք, կ'ուզէք դիս տանջել։

ԺԱՆԷԹ.— Իսկապէս կը տանջուի՞ք, եթէ լսէք, թէ ուրիշի մը հետ է ան։

digitised by A.R.A.R.@

ԺԱՆ.— Ձեմ գիտեր. մինչեւ հիմա ինձի այդպիսի բան չէ պատահած։

ԺԱՆԷԹ.— Շատ ինքնավստահ մի ըլլաք։

ԺԱՆ.— Ըսել կ'ուզէք՝ աղջիկներու հաւատարմութեան վրայ հաւատք չունենամ։

ԺԱՆԷԹ.— Այդ ըսել չուզեցի։

ԺԱՆ.— Ուրեմն ըսել կ'ուզէք, թէ ես այն թիփը չեմ, որ կարենամ աղջիկ մը երկար ատեն ինձի կապուած պահել։

ԺԱՆԷԹ.— Ինչո՞ւ սխալ կը հասկնաք։

ԺԱՆ.— Հապա ինչպէ՞ս հասկնամ։

ԺԱՆԷԹ.— Կ'ուզէք, որ ձեզ գովէ՞մ, ըսեմ՝ աղուոր երիտասարդ էք, առնական, անդիմադրելի, հմայիչ։

ԺԱՆ.— Օ՛, ի՜նչ չարայուրթիւն...։ Երանի մէկ տասներորդը հիւղ ըլլար։

ԺԱՆԷԹ (Տղուն աչքերուն մէջ խոր նայելով եւ ժպտուն).— Աւելի՛ն, աւելի՛ն...

ԺԱՆ.— Հաւատա՞մ։

ԺԱՆԷԹ.— Այո՛, հաւատացէք։

ԺԱՆ.— Ափսո՜ս, որ աւելի կանուխ չեմ ծանօթացած ձեզի։

ԺԱՆԷԹ (Հառաչելով).— Է՜հ, հիմա Անժելը կու գայ...

ԺԱՆ.— Եւ Փօլը...

ԺԱՆԷԹ.— Քիչ մը նա՛ս նստինք, յոգնեցայ։

Կը տեղաւորուին նստարանին վրայ։ Սիրահար զոյգ մը կ'անցնի մօտէն, իրարու մէջքէն գրկած։

ԺԱՆԷԹ.— Երանի՛ իրենց, երջանիկ կ'երեւին։

ԺԱՆ.— Աբսաքին երեւոյթներէն պէտք չէ խաբուիլ։

ԺԱՆԷԹ.— Երջանկութիւնը ուրիշ ի՞նչ ձեւ կ'ունենայ. երիտասարդ են, սիրով բռնկած, յաղող ժամադրութեամբ մը իրար դտած։

ԺԱՆ.— Կը քալեն կողք կողքի, ուս ուսի...

ԺԱՆԷԹ.— Քիչ եաք իրարու գիրկ նետուելու համար։

ԺԱՆ.— Եւ կամ իրարու հետ կռուելու։

ԺԱՆԷԹ (Զարմացած).— Ինչո՞ւ պիտի կռուին։

ԺԱՆ.— Ո՛չ գիտէ. տասը տեսակ պատճառ կրնայ լլալ. պահանջներ, քմայքներ, նախանձներ...

ԺԱՆԷԹ.— Ես կ'ատեմ նախանձոտ մարդիկը։

ԺԱՆ.— Նախանձը, օրիորդ, սիրոյ կրակին տեսանելի ծուխն է։ Երբ ծուխ չկայ՝ կրակ ալ չկայ։

ԺԱՆԷԹ.— Պարապ խօսք. երբ երկու սրտեր անկեղծօրէն իրար կը սիրեն, ի՞նչ պէտք ունին նախանձելու։

ԺԱՆ.— Է՛հ, ճի՛շդ այդ պատճառով անկեղծ եւ խորունկ սէրը անհանդուրժող կը դառնայ։

ԺԱՆԷԹ.— Ես ժապը ձգեցի՝ նախանձոտ ըլլալուն համար։

ԺԱՆ.— Փօլը նուա՞զ նախանձոտ է։

digitised by A.R.A.R.@

ԺԱՆԷԹ.— Ձեմ գիտեր. առիւաւին նախանձի պահերուն չեմ հանդիպած։

ԺԱՆ.— Օրինակ, եթէ հիմա յանկարծ յայտնուի եւ մեզ տեսնէ քով քովի նստած, սիրալիր խօսակցութեան մէջ, ի՞նչ կըսէ...

ԺԱՆԷԹ (Մտածելով).— Այդ մասին իրաւ չեմ խորհած։

ԺԱՆ.— Ես կը խորհիմ, թէ սաստիկ կը զայրանայ եւ մինչեւ իսկ կրնայ վրաս յարձակիլ։

ԺԱՆԷԹ.— Բայց ինչո՞ւ, գէշ բան ըրած ունի՞նք։

ԺԱՆ.— Ո՛չ, երկուքս ալ նստած կը սպասենք. դուք՝ Փօլին, ես՝ Անժելին։

ԺԱՆԷԹ.— Ուրեմն ինչո՞ւ պիտի նախանձի։

ԺԱՆ.— Ձեմ գիտեր, կրնայ ըլլալ, ըրածս ենթադրութիւն է։

ԺԱՆԷԹ.— Կը վախնա՞ք։

ԺԱՆ.— Վախնա՞լ... Ինչո՞ւ պիտի վախնամ, դուք հոս էք։

ԺԱՆԷԹ.— Այո՛, այո՛, ես հոս եմ. թոյլ չեմ տար, որ վնաս հասցնէ ձեզի։

ԺԱՆ.— Ի՞նչ կ'ընէք։

ԺԱՆԷԹ (Ոտքի կ'ելլէ եւ կը կատարէ շարժումները).— Առաջ կ'անցնիմ այսպէս, ձեր երկուքին մէջտեղ կը նստիմ եւ կ'ըսեմ. «Բայց Փօլ, օտար մէկը չէ, զարմիկս է»։

ԺԱՆ.— Ես ձեր զարմիկը չեմ։

ԺԱՆԷԹ.— Հոգ չէ, կարեւորը այդ վայրկեանին Փօլի դայրոյթը մեղմելն է։

ԺԱՆ.— Իսկ եթէ Փօլի դայրոյթը չմեղմանայ եւ ուզէ քիթս ու բերանս ջարդել կամ ատրճանակի հարուածով մը սպաննել զիս, դուք ի՞նչ դիրք կը բռնէք։

ԺԱՆԷԹ.— Ձեմ խորհիր, թէ այդքան առաջ երթայ։

ԺԱՆ.— Ենթադրենք, թէ գնաց, ի՞նչ կ'ըլլայ ձեր դիրքը, որո՞ւն կողմը կը բռնէք։

ԺԱՆԷԹ (Պահ մը կեցած է լուռ եւ շուարած, փնտռելով պատասխանը).— Այդ տեսակ դժուար հարցումներու առջեւ մի դնէք զիս։

ԺԱՆ.— Կեանք է ասիկա. ամէն բան կրնայ պատահիլ. դուք պէտք է որոշէք ձեր բռնելիք դիրքը։

ԺԱՆԷԹ.— Աւելորդ հարցումներով մի չարչարէք զիս։ Ես ձեզի ըսի արդէն, թէ կ'ատեմ նախանձոտ մարդիկը։

ԺԱՆ.— Բայց ի սէր ձեր գեղեցիկ աչքերուն է, որ Փօլ պիտի արիւն թափէ։

ԺԱՆԷԹ (Վախցած).— Արի՞ւն թափէ։

ԺԱՆ.— Շատ հաւանաբար, երբ ձեզ եւ զիս տեսնէ այսպէս քով քովի։

Ժանէթ ոտքի կ'ելլէ եւ կ'երթայ կը կենայ սիւնին տակ։

ԺԱՆ.— Արդէն իսկ նահանջեցիք։

ԺԱՆԷԹ.— Աւելորդ արիւնահեղութենէ պէտք է խուսափիլ։

Ժան կը մօտենայ Ժանէթին.

digitised by A.R.A.R.@

ԺԱՆ (Մտերմօրէն).— Շա՞տ կը սիրէք Փօլը. կը տառապի՞ք իրեն համար։

ԺԱՆԷԹ.— Պայմա՞ն է տառապիլը։

ԺԱՆ.— Սէրը տառապանք է, քաղցը տառապանք։

ԺԱՆԷԹ.— Չեմ հասկնար։

ԺԱՆ.— Օրինակ, գիշերները անքուն կը մնա՞ք Փօլին համար։

ԺԱՆԷԹ.— Դուք իմ խոստովանահա՞յրս էք, ի՞նչ է։

ԺԱՆ.— Ի՛նչ կ'ըսէք, նոյնիսկ դեռ չենք ծանօթացած իրարու հետ։

ԺԱՆԷԹ (Գշրռուս).— Անունս Ժանէթ է։

ԺԱՆ.— Զարմանալի՛ բան։

ԺԱՆԷԹ.— Ի՞նչն է զարմանալի։

ԺԱՆ.— Իմ անունս ալ Ժան է։

ԺԱՆԷԹ (Թեթեւաւտտ).— Չեմ հաւատար. շինծու է, յարմարցուցիք։

ԺԱՆ.— Կ'երդնում... ձեր գեղեցիկ աչքերուն վրայ. կ'ուզէ՞ք՝ անձնաթուղթս ցոյց տամ։

ԺԱՆԷԹ.— Հարկ չկայ. հաւատացի։

ԺԱՆ.— Չէ՞ք կարծեր, որ այս զուգադիպութեան մէջ նախախնամութեան մատը կայ։

ԺԱՆԷԹ.— Ո՛չ, չեմ կարծեր։ Աշխարհիս մէջ շատ ժանէթներ եւ ժաներ կան։

ԺԱՆ.— Բայց քիչ անգամ դիպուածը զանոնք քով քովի կը բերէ այսպէս, նոյն նատրանին վրայ, նոյն սիւնին քով, սպասման նոյն նպատակով։

ԺԱՆԷԹ.— Ի՞նչ ըսել կ'ուզէք. եւ Փօլին կը սպասեմ, դուք՝ Անժելին։

ԺԱՆ.— Այո, հարկաւ, բայց միասին կը սպասենք...

ԺԱՆԷԹ.— Կը սպասենք մեր սէրերուն...

ԺԱՆ.— Ճիշդ է, կը սպասենք մեր սէրերուն, միայն թէ՝ միասին կը սպասենք. եւ միասին սպասելը միշտ աւելի դիւրին է։

ԺԱՆԷԹ.— Դիպուա՛ծ...

ԺԱՆ.— Քանի այդ դիպուածը մեզ քով քովի դրաւ՝ եկէք եւ ձեր խոստովանահայրը ըլլամ պահ մը։

ԺԱՆԷԹ.— Այսքա՞նքն...

ԺԱՆ.— Վստահեցէք ինծի։

ԺԱՆԷԹ.— Ի՞նչ վստահիմ։

ԺԱՆ.— Ձեր գաղտնիքները։

ԺԱՆԷԹ.— Ես գաղտնիք չունիմ. կը սիրեմ Փօլը եւ ան ալ զիս կը սիրէ։

ԺԱՆ (Տրտմած).— Շա՞տ կը սիրէք։

ԺԱՆԷԹ.— Տէ՛ր Աստուած, այս որքա՞ն հետաքրքիր էք. ձեզի ի՞նչ։

ԺԱՆ.— Իրաւունք ունիք. ինծի չի խառնուիր, բայց պիտի ուզէի այս ատթիւ ձեզի քանի մը խորհուրդներ տալ... եղբօր մը պէս։

ԺԱՆԷԹ.— Ես խորհուրդի պէտք չունիմ։

ԺԱՆ.— Անշո՛ւշտ, չափահաս էք եւ, ինչպէս կ'երեւի՝ բաւական փորձառու... ժագը, Փօլը, ես ի՞նչ գիտցամ տակաւին ա՛լ։

ԺԱՆԷԹ.— Դուք միայն Անժե՞լը ճանչցած էք։

digitised by A.R.A.R.@

ԺԱՆ.— Ե՛ս եմ խոստովանահայրը. ես պիտի հարցնեմ եւ դուք պատասխանէք։

ԺԱՆԷԹ (Տղուն ուսին դպելով).— Զգո՛յշ, Անժելը կու գայ կոր կարծեմ։

ԺԱՆ (Կը շտկուի խկոյն եւ ուշադիր ակնարկ մը նետելէ ետքը հեռուէն եկող աղջկան).— Ինչէ՞ն դիտցաք։

ԺԱՆԷԹ.— Սիրտս վկայեց։

ԺԱՆ (Պահ մը լուռ կը հետեւի աղջկան քայլերուն).— Է՛հ, ան չէ, ձեր սիրտը սխալ վկայեց։

Աղջիկը արագ քայլերով կու գայ եւ կ'անցնի, խիստ նայուածք մը նետելով իրենց վրայ։

ԺԱՆԷԹ.— Ժամադրութեան ուշացած մը, որ կ'ամաչարէ։

ԺԱՆ.— Երանի՛ ժամադրուած ըլլար. վախնամ մինակ մնացած մըն է, որ դեռ կը փնտռէ։

ԺԱՆԷԹ.— Մե՛ղք է։ Աւելի դժուար է փնտռելը, քան թէ գտածիդ ոպասելը։

ԺԱՆ.— Սպասումը միշտ հաճելի է, երբ դիտես, թէ մէկը կայ, որ պիտի գայ։

ԺԱՆԷԹ.— Իսկ երբ չի գար ու կը ոպասցնէ փողոցին մէջ։

ԺԱՆ.— Դարձեալ հաճելի. անակնկալ հանդիպումներ կը ստեղծէ այսպէս։

ԺԱՆԷԹ (Կը ժպտի, ապա ժամացոյցին նայելով).— Կարծեմ ալ չի գար, շատ ուշացաւ, այնպէս չէ՞, ի զուր ժամավաճառ կ'ըլլանք, մեկնինք։

ԺԱՆ.— Քիչ մըն ալ ոպասենք. տուն երթանք՝ ի՞նչ պիտի ընենք։ Բանկարծ կու գան եւ մեզ չեն գտներ. մեղք են։

ԺԱՆԷԹ.— Մեղք է որո՞ւն։

ԺԱՆ.— Թէ՛ Փօլին, թէ՛ Անժելին։

ԺԱՆԷԹ.— Զէ՞ք կարծեր, որ երկուքն ալ արժանի են պատիժի։ Աղուոր դաս մը պիտի տամ Փօլին. այս ի՞նչ խայտառակութիւն է։

ԺԱՆ.— Խայտառակութիւն չէ, այլ՝ բարեբախտութիւն. պատճառ եղան, որ իրարու ծանօթանանք։

ԺԱՆԷԹ.— Այս մէկը հաշուի մէջ չկար։

ԺԱՆ.— Դժգո՞հ էք։

ԺԱՆԷԹ.— Ոչ մասնաւորապէս...։ Զրկուեցանք այս գիշերուան սորթիէն։

ԺԱՆ.— Քիմար բան է կեանքը, օրիորդ Ժանէթ, յիմար բան է նաեւ սէրը։

ԺԱՆԷԹ.— Օ՛, չէի պիտեր, թէ փիլիսոփայ էք։ Եթէ սէրը յիմար բան է, այն ատեն ինչո՞ւ կեցած կը ոպասէք ձեր սիրածին։

ԺԱՆ.— Կը ոպասեմ, որովհետեւ ուրիշ ընելիք չկայ։ Բոլորս ալ կը ոպասենք։

ԺԱՆԷԹ.— Անկեղծ չէք։ Վստահ եմ՝ հիմա ուրախութենէն ձեր աչքերը պիտի փայլին, երբ Անժելը գայ։

Ժան լուռ է։

digitised by A.R.A.R.@

ԺԱՆԷԹ.— Զափազանց հետաքրքիր եմ Անժելը տեսնելու. երանի թէ հիմա գար եւ տեսնէի:

ԺԱՆ.— Ցաժենայնդէպս, եթէ գայ, ձեր վրայ չի յարձակիր, հանգիստ եղէք:

ԺԱՆԷԹ.— Ես չա՞տ հանգիստ եմ: Կ'ուզէի միայն գիտնալ, թէ ի՞նչ տեսակ մէկն է այդ օրիորդը:

ԺԱՆ.— Ձեր աչքերը չունի:

ԺԱՆԷԹ (Ուրախ).— Իրա՞ւ: Հասակը ինձմէ բա՞րձր է:

ԺԱՆ.— Պէտք է քովէ քովի կենաք, որ ըսեմ:

ԺԱՆԷԹ.— Խօսակցութի՞ւնը ինչպէս է:

ԺԱՆ.— Կը խօսի, շատ կը խօսի, բոլոր կիներուն պէս:

ԺԱՆԷԹ.— Կը ներէք, ես շատ խօսող չեմ: Եւ յետոյ՝ խօսիլը յանցա՞նք է:

ԺԱՆ.— Երբ աչքերը խօսին, բերանը կրնայ փակ մնալ:

ԺԱՆԷԹ.— Ձեզի բան մը ըսե՞մ. ազջիկները կ'ուզեն, որ իրենց սիրահարը խօսի եւ կրկնէ միշտ. «Հոգի՛ս, կը սիրեմ քեզ»:

ԺԱՆ.— Գիտեմ, բայց աւելորդ է:

ԺԱՆԷԹ.— Ո՛չ, աւելորդ չէ: «Կը սիրեմ» խօսքը, ազջիկներու առանձին ըսուած, կախարդական զօրութիւն ունի: Կը սպառեն, կ'ուզեն եւ լսելէն չեն ձանձրանար:

ԺԱՆ (Աչքերուն մէջ նայելով).— «Կը սիրեմ քե՞զ»ը:

ԺԱՆԷԹ.— Այո՛, «Կը սիրեմ քեզ»ը: Ըսելու ձեւէն, շեշտէն, թոնէն, շշուկէն կախում ունի անոր ուժն ու ջերմութիւնը: Գիտէ՞ք ասիկա:

ԺԱՆ.— Երբեմն շատ դժուար է այդ խօսքը արտասանելը:

ԺԱՆԷԹ.— Խէ՛ղճ Անժել:

ԺԱՆ.— Ինչո՞ւ խեղճ:

ԺԱՆԷԹ.— Երեւի պէտք եղածին չափ չէք ըսեր իրեն:

ԺԱՆ.— Ի՞նչ հարկ կայ, թող հասկնայ:

ԺԱՆԷԹ.— Ձ'ըլլա՛ր, մեր սրտերը այդ խօսքին ծարաւը ունին ամէն օր, ամէն վայրկեան:

ԺԱՆ.— Ես ալ ձեզի բան մը ըսե՞մ:

ԺԱՆԷԹ.— Իբրեւ խոստովանահա՞յր թէ իբրեւ... եղբայր:

ԺԱՆ.— Իբրեւ ժան, որ կը խօսի ժանէթին:

ԺԱՆԷԹ.— Ըսէ՛ք:

ԺԱՆ.— Կ'ուզէ՞ք Փօլը միշտ ձեզի կապուած պահել:

ԺԱՆԷԹ.— Ինքը կ'ուզէ կապուած մնալ:

ԺԱՆ.— Հոգուով-սրտով մի՛ հաւատաք ձեր ականջին ըսուած «կը սիրեմ քեզ»ին: Կասկածի բաժին մը պահեցէք միշտ:

ԺԱՆԷԹ.— Շնորհակալ եմ ձեր խորհուրդին համար, բայց գիտցէք, որ մեր բնազդը բաւական առողջ է:

ԺԱՆ.— Դժուար չէ ձեր սրտի լարերուն հետ խաղալ եւ ծուզակը ձգել:

ԺԱՆԷԹ.— Տասնըվեց տարեկան չեմ:

ԺԱՆ.— Եւ յետոյ...

ԺԱՆԷԹ.— Եւ յետոյ ի՞նչ:

ԺԱՆ.— Թողէ՛ք, ի սէր Աստուծոյ, ես օրեւէ հանգամանք չունիմ ձեզի խորհուրդ տալու:

digitised by A.R.A.R.@

ԺԱՆԷԹ.— Ո՛չ, ա՛չ, ըսէք, մի քաշուիք. չէ՞ որ խոստովանահայրը՞ էք։

ԺԱՆ.— Լաւ, պարտականութիւնս լրիւ կատարեմ։ Զըլա՛յ, թէ դուք ալ ձեր կարգին Փօլի ականջին չարունակ կրկնէք. «Կը սիրեմ քեզ, հոգի՛ս»։

ԺԱՆԷԹ.— Ինչո՞ւ, ի՞նչ վնաս։

ԺԱՆ.— Պէտք է ծածկել ինչ որ կը գլխս, կաբենալ պահելու համար ինչ որ կը սիրեմ։

ԺԱՆԷԹ.— Ուրիշ խօսքով՝ ինծի կը թելադրէք անկեղծ չըլլալ։ Ա՜խ Անժել...

ԺԱՆ.— Եղի՛ք, անկեղծ եղէք, միայն թէ՝ ձեր սիրածը աշխատեցէք պահել որոշ մտահոգութեան մէջ։

ԺԱՆԷԹ.— Բայց ինչո՞ւ։

ԺԱՆ.— Որովհետեւ տղայ մը եթէ գիտնայ, թէ սիրած աղջիկը երկու ձեռքերով կառչած կը մնայ իրեն՝ կը յոգնի, կը ձանձրանայ։

ԺԱՆԷԹ.— Բայց, պարոն, ամէն տղայ ծան չէ։

ԺԱՆ.— Ամէն տղայ քիչ մը ծան է եւ ես այդ տեսակէտէն լաւագոյններէն մէկն եմ։

ԺԱՆԷԹ.— Ինչէ՞ն գիտնամ։

ԺԱՆ.— Ափսո՜ս, որ շուտով պիտի բաժնուինք, եթէ ոչ՝ կրնայիք անձնապէս հաստատել։

ԺԱՆԷԹ.— Այո՛, պիտի բաժնուինք. այսօրուան ժամադրութիւնը ձախողեցաւ։

ԺԱՆ.— Դեռ ոչ, դեռ կրնան դալ։

ԺԱՆԷԹ.— Կը կարծէ՞ք։

ԺԱՆ.— Փօլը կու դայ։

ԺԱՆԷԹ.— Իսկ Անժե՞լը։

ԺԱՆ.— Ո՛չ, ա՛լ չի դար։

ԺԱՆԷԹ.— Ափսո՜ս...

Ծաղիկ վաճառող տղեկ մը կը մօտենայ եւ ժանէթ կը խնդրէ, որ փունջ մը ծաղիկ գնէ օրիորդին համար։ Ժան կ'առնէ փունջը եւ կը վարձատրէ տղեկը, որ ցատկռտելով կը հեռանայ։

ԺԱՆ (Փունջը նուիրելով ժանէթին).— Բուրումնաւէտ յիշատակ մը կը տանիք հետերնիդ մեր այս հանդիպումէն։

ԺԱՆԷԹ (Փունջը առնելով).— Շնորհակալ եմ, իմ սիրած ծաղիկներս են։

ԺԱՆ.— Վստահ եմ, մանչուկը կարծեց, թէ մենք սիրահարներ ենք։

ԺԱՆԷԹ.— Այո՛, կացութիւններ կան, որ սխալ կարծիք կազմել կու տան։

ԺԱՆ.— Մենք այդ կացութեան մէջ ենք, այնպէս չէ՞։

ԺԱՆԷԹ.— Դուրսէն դիտողին համար։

ԺԱՆ.— Զէ՞ք վախնար ծաղկեփունջը այդպէս ցուցադրելով։

ԺԱՆԷԹ.— Ինչի՞։

ԺԱՆ.— Փօլէն։

ԺԱՆԷԹ.— Դո՛ւք վախցէք։

digitised by A.R.A.R.@

ԺԱՆ.— Ձեզ անհաճոյարիմ պիտի կարծէ։
ԺԱՆԷԹ.— Իսկ ձեզ՝ իր մրցակիցը։
ԺԱՆ.— Ի՛նչ մեծ թիւրիմացութիւն։
ԺԱՆԷԹ.— Թիւրիմացութիւն մը, որ կընայ ողբերգութեան վերածուիլ։
ԺԱՆ.— Ռոմէոն եւ Ժիւլիէթն ալ թիւրիմացութեան զոհ դացին։
ԺԱՆԷԹ.— Եւ դեռ ուրիշ քանի՛ սիրահարներ։
ԺԱՆ.— Այո, բայց մենք սիրահարներ չենք։
ԺԱՆԷԹ.— Ինչպէս թէ չենք։
ԺԱՆ (Ոգեւորուած).— Իսկապէ՞ս, սիրահարնե՞ր ենք արդէն։
ԺԱՆԷԹ.— Բնական է սիրահարներ ենք, ես՝ Փոլին, դուք՝ Ամժելին...
ԺԱՆ((Հանդարտի).— Ա՛, այդ ձեւով։
ԺԱՆԷԹ.— Հապա ի՞նչ հասկցաք։
ԺԱՆ.— Ոչինչ, իրաւունք ունիք, մենք սիրահարներ ենք։
ԺԱՆԷԹ.— Սպասողական վիճակի մէջ։
ԺԱՆ.— Երկա՞ր ատենէ կը սպասէք։
ԺԱՆԷԹ.— Մոռցա՞ք, որ գրեթէ միասին եկանք հոս։
ԺԱՆ.— Այդ մասին չէ խօսքս։
ԺԱՆԷԹ.— Հապա՞։
ԺԱՆ.— Ըսել կ'ուզեմ՝ երկա՞ր ատենէ կը սպասէք, որ Փոլը ձեր ձեռքը խնդրէ։
ԺԱՆԷԹ (Ցնցուած եւ չոր).— Նորէ՞ն մտաք խոստովանահօր դերին մէջ։
ԺԱՆ.— Կը ներէք, պարզ հետաքրքրութիւն...։ Գոնէ իրեն հետ խօսա՞ծ էք ամուսնութեան մասին։
ԺԱՆԷԹ.— Ես սովորութիւն չունիմ տղոց ամուսնութեան մասին խօսելու։
ԺԱՆ.— Շատ լաւ կ'ընէք։
ԺԱՆԷԹ.— Ինչո՞ւ, ամօ՞թ է։
ԺԱՆ.— Ո՛չ, սակայն տղաքը չեն սիրեր, որ իրենց համակրած աղջիկը մէկ օրէն միւսը ամուսնութեան խօսք բանայ։
ԺԱՆԷԹ.— Ձեմ կարծեր, որ աղջիկները այդքան անխելք են։
ԺԱՆ.— Կան, այդպիսի աղջիկներ չեն պակսիր, որոնք զանազան ձեւերով ամուսնութեան հարցը մէջտեղ կը դնեն.— «Մեր այս կապը ինչո՞վ պիտի վերջանայ», «Տունէն կը պահանջեն, որ մեր յարաբերութեան նպատակը որոշ դառնայ», «Մամաս կ'ուզէ, որ մեր ընտանիքներն ալ իրարու ծանօթանան», եւայլն, եւայլն։
ԺԱՆԷԹ.— Անժելը այդպէ՞ս կ'ընէ։
ԺԱՆ.— Բնաւ։ Ես հեռու կը փախչիմ ամուսնութեան թեկնածուներէ։
ԺԱՆԷԹ.— Որոշած էք մինչեւ վերջ ամուրի՞ մնալ։
ԺԱՆ.— Ո՛չ, բայց ամուսնութիւնը բան մըն է, որ ինքնաբերաբար պէտք է ըլլայ, առանց պահանջելու, առանց պայմանի։
ԺԱՆԷԹ.— Համաձայն եմ. կընայ եւ բնաւ չըլլալ։ Ես անձնապէս ամուսնութեան համար չէ, որ Փոլին հետ դուրս կ'ելլեմ. հո՛գս։ Պայ ֆրէնտ մըն է, այդքա՛ն։ Մի՛ մոռնաք սակայն, պարոն Ժան, որ սրտերու ճամբան ի վերջոյ ամուսնութեան կը տա-

digitised by A.R.A.R.@

նի։ Եւ ժամպրութիւնները այդ համբուն վրայ պզտիկ կայարաններ են։

ԺԱՆ.— Փօլին հետ քանի՞երորդ կայարանը հասած էք։

ԺԱՆԷԹ.— Դուք շատ հարցասէր էք։ Ես պարտաւո՞ր եմ ձեր հարցումներուն պատասխանելու։

ԺԱՆ.— Ազատ էք անշուշտ...։ Զրուցելով ժամանակին անցնիլը չենք զգար։ Զէ՞ որ կեցած միասին կը սպասենք։

ԺԱՆԷԹ.— Տարօրինակ է կեանքը։

ԺԱՆ.— Ինչո՞ւ տարօրինակ կը գտնէք։

ԺԱՆԷԹ.— Մարդ բանի մը կը սպասէ եւ երբեմն ուրիշ բանի կը հանդիպի։

ԺԱՆ.— Եւ յուսախաբ կ'ըլլայ, այնպէս չէ՞։

ԺԱՆԷԹ.— Ո՛չ անպայման։

ԺԱՆ.— Ձեր սպասածը չեկաւ։

ԺԱՆԷԹ.— Եւ սակէ եւք ա՛լ չի գար. կարծեմ պէտք է մեկնիմ։

ԺԱՆ.— Ինչո՞ւ կ'աճապարէք։

ԺԱՆԷԹ.— Կ'աճապարե՞մ...։ Բայց պէտք եղածէն աւելի մնացի։

ԺԱՆ.— Կը ցաւիմ, որ ձեր սուտէն մեռաւ։

ԺԱՆԷԹ.— Ցաւելու բան մը չկայ. պիտի երթայինք Փօլին հետ տեղ մը ժամանակ անցընելու։

ԺԱՆ.— Գարեւո՞ւ։

ԺԱՆԷԹ.— Կրնայ ըլլալ։ Անժելը եւ դո՞ւք ինչ պիտի ընէիք։

ԺԱՆ.— Հաւանօրէն նոյնը։

ԺԱՆԷԹ (Ձեռքը երկարելով).— Մնաք բարով ուրեմն, պարոն Ժան, ուրախ եմ ձեզի ծանօթանալուս։

ԺԱՆ (Ժանէթին ձեռքը առնելով).— Նոյնպէս, օրիորդ Ժանէթ, շատ, շա՜տ ուրախ...։

ԺԱՆԷԹ (Նոյն դիրքով, ժպտուն եւ պչրոտ).— Մնաք բարով...

ԺԱՆ.— Արդէն կ'երթա՞ք...

ԺԱՆԷԹ.— Հապա ի՞նչ ընեմ։

ԺԱՆ (Ցանկարծ վճռական).— Ո՛չ, կեցէք...։ Ինչպէ՞ս կ'ըլլայ արդեօք միասին երթանք հո՛ն՝ ուր ես պիտի երթայի Անժելին հետ, դուք՝ Փօլին։

ԺԱՆԷԹ (Տատամսելով).— Կ'ըլլա՞յ...

ԺԱՆ.— Ինչո՞ւ չէ, սուտէն չի մեռնիր։

ԺԱՆԷԹ.— Ե՞տքը...

ԺԱՆ.— Ետքը՝ ետքը կը մտածենք. կարեւորը այս պահն է։

ԺԱՆԷԹ (Ժպտելով).— Միայն ա՛յս գիշերուան համար։

ԺԱՆ (Ոգեւորուած).— Միայն ա՛յս գիշերուան համար։

Ժան աղջիկը մէջքէն գրկելու ձեւով առաջ կը մղէ եւ կողք կողքի կը սկսին առաջանալ դէպի փողոցի վերի անկիւնը, մինչ վարագոյրը կ'իջնէ դանդաղօրէն։

Մ. ԻՇԽԱՆ

Մայիս 1976 — Գէյրութ

digitised by A.R.A.R.@

Ո՞Ր ՏԱԼԻԹԱ

Դանիէլ Վարուժանի «Ո՞Ր Տալիթան» եւ «Մադուանա-կանը», որոնք «Հեքեանոս երգերու» կարգ մը բանաստեղ-ծութիւններու հետ գայթակղեցուցած էին իրենց ժամանա-կակից քարոյախօսները, Հայաստանի մէջ վերջերս դարձ-եալ խնդրոյ առարկայ դարձան, յուզելով թեր ու դէմ կարծիքներ։

Այդ մասին կարդալ մեր այս թիւին նշումը։

Կարմրաշաւայլ լոյսերուն մէջ կը վառի
Կապելադ, ո՛ Տալիթա։
Բի՛ր գարեջուրն, եւ թող փըրփուրն եռանգուտ
Մատերդ ի վար պըղպըջայ։

Ի՜նչ փայթ թէ ես ազնըւական կը թուիմ,
Ունիմ ձեռքեր քնքշենի։

digitised by A.R.A.R.@

Եւ ի՛նչ փոյթ թէ դուն աղջիկ մ'ես ջլեթաց՝
Որ թանուորներ կ'ընդունի:

Կ'ատեմ կիներն՝ սրոնք դիմացն հայլիին
Դիմանիներկեր կը շաղուեն.
Կը ծրծցրնեն Մերակոյտի անդամներ
Տրոփանքներով տայրէն:

Դահլիճներուն փարթամ կիները կ'ատեմ. —
Իրենց կաւատն է՝ ոսկին.
Զիրենք սիրողը կը սպառեն, եւ իրենք
Տան շընիկէն կը սպառին:

Բե՛ր, Տալիթա՛, թե՛ր գարեջուրն, ու նստէ
Դունկիս վրայ՝ թոյլ տալով
Որ աղախնի կարն քրդանցքէդ երեւնայ
Բուսքերդդ՝ սեւ գուլպայով:

Թող ճըրագներդ հիւծին մինչեւ առաւօտ,
Եւ թող շեմին վրայ երգէ
Գինով աշուղն՝ յառած բիբերը մեզի,
Բիբերը զուրկ կըրակէ:

Թող մազերուդ ոսկի հիւսկերը քակես
Գաւաթին մէջ բիւրեղեայ,
Եւ ծունկերէս վար սըրունքներդ օրօրես՝
Մինչեւ որ սէրս հասունցայ:

Ինծի ի՛նչ փոյթ թէ շրթունքներդ են խածեր
Նուաստիները կոպիտ,
Եւ հոսեր են քրտիքն իրենց տրոփանքին
Աչքերուդ մէջ՝ ու ծոցիդ:

Այսօր կ'ուզեմ կուրծքիդ վրայ գինովնալ
Ինչպէս գինուոր մը արբուն.
Կ'ուզեմ պարպել գաւաթդ, եւ դուն ալ պարպես
Սիրտս՝ նուրի պէս հասուն:

Այսօր կ'ուզեմ դահլիճին մէջ ծաղրուած
Սէրս առջեւդ պըդծել,
Խարուած հոգիս բերել ռամիկ աղջկան
Գարեջուրով մը ծախել:

digitised by A.R.A.R.@

ՍԱԴՈՒՌՆԱԿԱՆ

Այս իրիկուն նորէն Բաղդաթն հեշտանքի,
Մովափին վրայ, գոհարազարդ թոզի պէս,
Անթիւ ջահերն իր կը վառէ: Երբ տակաւ
Հրաբնգիւնները սրդոցին կը լլսեն,
Եւ սալին վրայ մուրճերն ա՛լ չեն կայծկըլտար:
Ան՝ խորտակուած ապտարէն յա՛նկարծ թափուող
Հին գինիի մը նրման՝
Կը փըրփըրի, կը պըղպըջայ իր կարմիր
Կիրճերուն մէջ: — Երեկոյեան խորշակով
Բըլուրներէն այգեւէտ
Հոտ մ'ադկոյզի փոզոցներն յորդ կը լեցնէ,
Ու կրծու ագը ծովուն
Կիներ պառկած՝ կ'ունկրնդրեն
Փոզոցներէն անցնող ձայները դափին,
Ու տըրփագին ու զօշամաղ ակնարկով
Կը խայտացնեն պորտերնին...
Բոլո՛ր, բոլո՛ը կ'ընեն
Մադուռնական գինարբուքները՝ մինչեւ
Արշալոյսին ծագիլն արեան ֆոդերէն:
Պալատներուն մէջ՝ խրրա՛խ,
Պոդոտային վրայ՝ շուրջպա՛ր,
Եւ մթընշաղ անկիւններուն մէջ, աւա՜ղ,
Ումպէտ հոսումն ուղխօրէն
Առնական գաղջ սերմերուն:
Գերիներ, մերկ, ներքանցներնին այրելով,
Հրաբաբրբոք կուպրին վրայ մայթերուն՝
Կը հայթայթեն, վազն ի վազ,
Խէժն այդ փրփրած հրդեհին. —
Ոմանք բշտաղ կը տանին
Համադամներ, ոմանք գինի՝ փարչերով.
Խառնածին մ'ի՛ր գոգին մէջ
Մազկի պսակները դիզած՝
Կ'երթայ արբշիռ ճակատներն իր տէրերուն
Արտախուրել բաղեղներով, վարդերով.
Եւ Պահլագուն մը հուժկու՝
Կոյս մը շալկած մազերէն՝
Պատրիկներու ոսկեճամուկ սեղանին
Կը տանի զոհ մը իրրեւ...
Գինի, ռետին, ու տուփանք

digitised by A.R.A.R.@

Քաղաքին վրայ, կը պանծացուին տաւիղով.
Քաղաքի՜ն վրայ, որ նստած
Ափը ծովուն, գոհարազարդ բոզի պէս,
Կու գայ ռունգերը գրգռել կըտղուցի.
Այն ժամանակ մեհեանները դուրս կ'ելլեն
Քրմուհիներ սադուռնական տօներուն.
Կ'անցնին կիներ՝ վարդ դրած
Իրենց բունքին ու գօտիին վրայ արծաթ.
Կ'անցնին մարդիկ, ճուազներով ու պարով.
Պառնիկ մ'յանկարծ, անոնց մէջ,
Կ'արձակէ հերքն իր կրունկները մինչեւ,
Եւ լողալով գանգուրներուն ծովին մէջ,
Կը ծիծաղի՜, կը ծիծաղի՜ խելայեղ
Երեսն ի վեր բարձ կաւատի մը հարբած:
Քաղքին պատերն անբարիշտ
Կարմրաշառայլ լոյսով մ'ամբողջ ծեփուած են.
Եւ նոնենին, լապտերներով պաճուճուած,
Պատրշգամին տակ կը ծաղկի հեշտօրօր:
Սալարկներէն վար գինին՝ կը եռսին.
Տան շեմերն են թրջուած
Մամացներով ու մաղձով,
Դուռներէն վար կը կախուին
Հռմանիի դրասանգներ.
Եւ գիշերուան լոգարանները բոլոր
Կը բրտընին գրմբէթներովը իրենց՝
Որոնց ներքեւ կը թաղկանայ հեշտութիւնն
Ու կը գեղուն կօշարանները զըմուռս.
Ամփիթատրին մէջ, փրփրած,
Կ'հոսի արիւնն, ու մեհեանին մէջ ծածուկ
Կը յօշոտուի յազածոն.
Բոզնոցներուն դրան առջեւ՝
Որոնց պազշոտ ծերպերէն
Թրխակարմիր շառայլներ դուրս կը նշողին՝
Կը պենէ ծոցն իր՝ ջահերով անհամար.
Եւ Քաղքին վրայ ո՞ւր ես դուն, Է՜րոս.
Խա՞յթն էր ոսկի փրփինիդ
Որ շաղաշոյտ այդ ժողովուրդը կըտղեց...
Ո՛չ, ո՛չ, Է՜րոս: — Ցատրակի պէս տաբագիր
Այդ Ռատանէն խոյս տուիր:
Աստուածներու կղզիին մէջ՝ այժմ դուն
Էուսնկայինն հետ, բընքշօրէն կը հսկես
Սոխակներու բոյնի՜ն վրայ:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

digitised by A.R.A.R.@

Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ

ԱԾԵԼԻՒ ՇԵՂԲԸ...

Հականեխիչի զօրաւոր հոտը, ծերերու գոյութիւնը ապացուցող բարկ եւ թթու բոյրին խառնուած՝ գերեղմաններու մօտիկութիւնը կը շեշտէ։ Իմասաէ պարպուած նայուածքներով, որոնք միայն կեանքի ունայնութեան մասին կը խօսին, նոյն կեանքէն լքուած եւ իրենց հակատագրին ձգուած քիչ մը միս ունեցող այս կմախքները ի զուր կը փորձեն բան մը ըսել քեզի, պատգամ մը տալ։ Մինոյնն է. անօգուտ։ Մերութիւնը որքա՞ն հեռու է ինձմէ, քեզմէ, բոլոր դեռ ուղիղ քալողներէն։

— Պարապ բա՞ն. ԷՔ չուզես ծերանալ, չէ՛ս ծերանար։ Ես կ'ուզեմ ծերանալ, որպէսզի առանձնութիւն ըսուած երանութիւնը վայելեմ...։ Բայց, շատ վստահ չեմ հիմա այլեւս։ Կարեւոր է, որ դիտակցութիւնս պահեմ։ Հապո՞ ԷՔ տնիկա ապրդի հակակշռէս...։ Այդ պարագային չեմ ուզեր ծերանալ, եւ այդպէս՝ առանձին մնալ։ Սարսափելի պիտի ըլլայ այլապէս. տա դիմացս ոտքի եղող կինը ես եմ...։ Ե՞ս եմ...։ Ենթադրենք, թէ ես եմ։ Մերկութիւնը բարակ հագուստով մը ծածկած։ Վերէն վար չարուած կոճակներ, կուրծքէն մինչեւ ծունկին հասակը երկարող, կը պահեն իր միսերուն խեղճութիւնը, որ ամէն վայրկեան ակամայ ցուցադրուելու վտանգին տակ կը գտնուի։ Կնոջ ձեռքերը մեքենաբար կը քաշեն եւ օղակներէն կ'անցընեն այդ կոճակները։ Այսպէս՝ հինգ, տասը, քսան վայրկեան. երբեմն կոճակը սխալ օղակի մը կ'անցնի, յետոյ՝ միւսը, յետոյ՝ միւսը, եւ այսպէս՝ յաջորդաբար։ Սարսափելին հոն է, որ դէմքին արտայայտութիւնը չի փոխուիր այս մինչոցին։ Այս անտարբերութիւնը ողբերգական է։ Ո՞վ կը, որ կ'ըսէր անցեալ օր. «Ուրախ ըլլալու համար՝ անտարբե՛ր եղիր, որեւէ բանէ մի՛ ազդուիր»։ Բարեկամ, եկո՛ւր եւ տե՛ս. կրնա՞ս այս խրատուիլակները «ուրախ» անուանել։

Կոճակներու երթեւեկը կը շարունակուի։ Կինը բաներ մը կը մրմռայ նոյն մինչոցին։ Արդեօք ի՞նչ կ'ըսէ։ Ոչքա՞ն հետաքրքրական է դիտնալ։

— Հօրեղբայրդ հիմա կ'ելլէ բաղնիքէն։

— Շնորհակալ եմ։

Հապա այս մի՞սը։ Այսքան գեղեցիկ կին շատ հազուադէպօրէն տեսած եմ։ Անուաւոր աթոռին վրայ բազմած թագուհի ըլլայ կարծէք, այնքան ուղիղ բռնած է իրանը եւ երկար վիզը։ Նստած դիրքով իսկ ակներեւ է բարձրահասակ ըլլալը։ Սպիտակ մազերը գանկին վրայ հաւաքուած, ժանեկազարդ շալ մը նետուած վարդագոյն թիկնոցին վրայ, դէմքին գիծերը երիտասարդ գեղեցկութեան մը հետքերը կը մտանեն։ Անկասկած՝ այցելու մը կը սպասէ հիւրասրահին մէջ։ Աթոռը գետեղուած է պատուհանին առջեւ, դէմքը՝ դէպի դուրս, նայուածքը՝ հեռո՛ւն։ Հասարակաց ո՛չ մէկ գիծ ծերանոցի միւս բնակիչներուն հետ։

Հիւրասրահէն դէպի սենեակները տանող լայն անցքը կը նմանի Գալիֆորնիոյ խճողուած ճեպուղիներուն։ Անուաւոր աթոռները, ծերերով բեռնաւոր՝ անդադար կ'երթեւեկեն։ Երբեմն հիւանդապահուհիներն են, որ կը պտըտցնեն այս անը-

digitised by A.R.A.R.@

պատակ էութիւնները, շատ յանախ, սակայն, ծերերը ինքնաբաւ են եւ անկախութեան զգացումի այդ հանոյքը կը վերապահեն իրենց։ Բոլորին շրթունքները միշտ շարժման մէջ են. կա՛մ կը ծամեն, կա՛մ կ'ամբաստանեն զիրար։

Այս բոլորը՝ լաւ. բայց հո՛տը, Տէ՛ր Աստուած, ահռելի հոտ մը, որուն ծարզումը չես կրնար ճշդել, մշուշի պէս տարածուած է ամբողջ չէնքին վրայ, մէջը եւ շուրջը։

Մինչեւ հիմա, ծերանոցի գաղափարին ներքեւ պաշտպան եղած եմ։ Ըսած եմ ես ինծի եւ ուզած եմ համոզել շրջապատս, որ ծերերու համար յարմարագոյն հանգրստարանը ծերանոցն է։ Բայց հիմա, այնպէս կ'երեւի, որ համոզումներս կ'ենրերան իրենց նեղ խարիսխներուն վրայ։ Ես պիտի ուզէի՞ այստեղ անցընել կեանքիս վերջին տարիները։ Եւ այս մէկը իրրեւ թէ ամերիկեան արդիական սարքաւորումով ծերանոց է։ Նախագաւիթէն եւ լայն անցքերէն անդին, ծերերու սենեակներուն մէջ, այնքա՜ն տխուր է պատկերը։ Չեմ գիտեր, թէ իրենք՝ ծերերը, կ'անդրադառնա՞ն այս տխրութեան։ Կարծեմ՝ ոչ։ Ցուսամ՝ ոչ։ Մաքրութիւնը անթերի է։ Խնամքը՝ բծախնդիր։ Բժիշկներ իրարու կը յաջորդեն հիւանդ ծերերու սնարներուն մօտ։ Ճաշարանը՝ ընդարձակ եւ մաքուր, ճաշերը՝ խնամքով պատրաստուած։ Շատեր նոյնիսկ իրենք զիրենք բախտաւոր կը զգան։

— Բարե՛ւ։

— Բարեւ... հօրեղբայր։

Փանամայի մէջ զինուորական ծառայութեան միջոցին առնուած լուսանկարին ձգած տպաւորութիւնը ցարդուփչուր եղաւ։ Ասիա՞ է հօրեղբայրս։ Գեղագէմ եւ խրոխտ տղամարդուն պատկերը մնաց հեռո՛ւ, անցեալին մէջ։ Թէեւ աւելի ուշ, բաւական խռակցելէ ետք հետը, զգացի, որ իմ ակնկալած յանդուգն եւ արկածախնդիր մարդն է։ Ծերանոցին մէջ միակն է դրեթէ, որ անուանոր աթոռ չի դրծածներ։ Կը քալէ ձեռնափայտի մը օգնութեամբ, շատ ծանր քայլերով։ Տասնըհինգ տարեկան պատանիի մը հասակը եւ կշիռքը ունի, կ'ենթադրեմ։

Ասիէ քառասուն տարիներ առաջ, մարդս տեսած էր զինք։ Ապշահար կը դիտէր հիմա զայն։ «Չեմ կրնար հաւատալ, կ'ըսէր, որ մարդ այսքան կը փոքրանայ։ Ճիշդ է, որ բարձրահասակ չէր, բայց կարելի էր զայն դիւրութեամբ յաղթական նկատել»։

Ափ ի բերան մնացած էինք երկուքս։ Նախ՝ այսքան «փոքրածաւալ» հրեղբայր մը գտած ըլլալուս, երկրորդ՝ յուզումի կամ զեղումի ո՛չ մէկ արտայայտութիւն։ Զիրար բնաւ չենք տեսած։ Շատ լսած ենք իրարու մասին։ Եւ նամակցած՝ երկար տարեր։ Մերձաւոր Արեւելքի երկիրներէն, ուր անցան մանկութիւնս եւ պատանութիւնս, կանոնաւորաբար կը գրէի իրեն եւ կը ստանայի սիրով յորդ պատասխաններ։ «Համով-հոտով» հօրեղբօր տիպարն էր ան ինծի համար։ Հինգ-վեց տարիներ առաջ, նամակները դադրեցան։ Գիտէի, որ տարիքը բաւական յառաջացած էր։ Արդեո՞ք մեռած է։ Կը վախնայի, որ զինք տեսնելու առիթը երբեք չեմ ունենար։ Ապահովագրուած նամակներս եւս անպատասխան մնացին։

Զյուսահատեցայ սակայն։ Երբ Գալիֆորնիա եկայ, փնտռեցի զինք։ Եւ գտայ։ Ըստեցաւ ինծի, որ կը գտնուի ծերանոցի մը մէջ, ուր կ'ապրի վեց տարիներէ ի վեր։ Ճիշդ այն թուականը, երբ նամակները դադրեցան։ Արդեօք յիշողութի՞ւնը կորսնցուցած էր։

Կը քննեմ հագուստները։ Ամէն ինչ կարգին է, կոկիկ։

— Սենեակս երթանք, — կ'ըսէ։

Բաւական ընդարձակ սենեակ մըն է, ուր առանձին չէ տակայն ինք։ Երկրորդ անկողնին վրայ մարդկային գունտ մը, բուրդէ կծիկի նման, կը հանգչի։ Հօրեղբայրս կ'ուզէ, որ մենք աթոռները գրաւենք։ Կը պնդենք, որ ինք նստի աթոռին վրայ։ Մենք մահճակալին մէկ ծայրը կը գրաւենք։

— Ինչպէ՞ս ես, հօրեղբայր։

Այնքան վարանումով արտասանուած այդ անունը ոչինչ կ'արթնցնէ իր մէջ։

digitised by A.R.A.R.@

ըստ երեւոյթին: Մերանոցէն ներս զինք «փափ» կը կոչեն: Արդեօք «ծեր հա՞յը» ըսել կ'ուզեն: Անտարակոյս:

— Մեղ կը ճանչնա՞ս, հօրեղբայր:

Վերջին վանկերը դժուար կ'արտասանեմ:

— Ձեմ գիտեր ո՞վ կ'ըլլաք, ուրկէ՞ կու գաք:

Ամիսներ առաջ, երբ հասցէն գտայ, հեռաձայնած էի իրեն: Ցուսախաբութիւնս այն օրը սկսած էր: Հեռաձայնին մէջ գրեթէ կը պոռայի:

— Հօրեղբայր, ես եմ, եղբօրդ աղջիկը, — եւ անունս կու տայի:

— Ո՞վ:

Անունս կը կրկնեմ: Կը յիշեմ նաեւ հօրս եւ հօրաքրոջս անունները:

Ոչ մէկ հակազդեցութիւն:

— Ուրկէ՞ կը խօսիս:

— Լոս Անճելըսէն, հօրեղբայր:

— Ինչպէ՞ս գտար զիս:

«Հը՛... ը՛... ը՛», կը մտածեմ: Ուրեմն, պահուըտած էիր այսքան տեսն»:

— Ինծի նամա՛կ մը գրէ, — կ'ըսէ, — անգլերէն կամ հայերէն, տարբերութիւն չ'ըներ:

Խօսակցութիւնը երբեմն անգլերէն է, երբեմն հայերէն, բայց երբեք՝ միխառն: Երկու լեզուներն ալ կը խօսի անթերի ոճով եւ շեշտով:

Տասնվեց տարեկանին, ջարդէն առաջ, կը ձգէ ընտանիքը եւ կու գայ Միացեալ Նահանգներ: Մօտ եօթանասուն տարիներ առաջ: Այս գեղեցիկ հայերէնին ինչպէ՞ս տիրացած է: Աւելի ուշ, իր քարեկամներէն կը լսեմ, որ անյագ ընթերցող եղած է եւ հայերէն գիրքերու գեղեցիկ հաւաքածոյ մը ունի:

Բայց ո՞յս տարիքին: Ո՛չ մէկ սայթաքում լեզուի: Ամէն բան կատարելապէս կը յիշէ, բացի իր ընտանիքէն եւ... ինձմէ: Եւ ըսել, թէ տարիներով նամակցած ենք: Նոյնիսկ երկու-երեք անգամ, տարեդարձներուս առթիւ, ինծի տասական տոլար ղրկած էր: «Ամերիկա», «Անուշ» կ'որակէր զիս իր նամակներուն մէջ, նաեւ «ընտանիքին դրագիրը»:

Մեր խօսակցութիւնը կցկտուր է: Կը նմանի կարատուող հեռաձայնային խօսակցութեան: Դէմքէս չի նայիր, երբ կը խօսի: Իսկ երբ խօսակցութիւնը դադրի, որոշ ատեն մը անշարժ կը մնայ, նայուածքը դիմացը՝ կէտի մը սեւեռած: Երբեմն, գաղտագաղի, աչքին տակէն կը նայի ինծի չարաճճի ժպիտով մը, կարծես ըսել կ'ուզէ. «Հէ՞յ, խաբեցի ձեզ: Շատ լաւ գիտեմ, թէ ո՞վ էք»:

Ցանկարծ, յարաբերաբար երկար լռութենէ մը ետք, բառերը կչռելով կ'ըսէ.

— Ի՞նչ ընեմ, ես չէի կրնար իրենց օգտակար ըլլալ: Ցանցաւոր եմ: Չէի կրնար... չէի՛ կրնար...

Մայրս, յուզուած, դլուխը կը շարժէր: Իսկ ես այնպիսի ցնցում մը կրեցի, կարծես հսկայ քանակութեամբ արիւն դուրս խուժեց սրտէս: Կծիկը կը քակուէր:

— ... ես, առանձին մարդ, ես ալ շատ տառապեցայ Ամերիկայի մէջ, միամիտ...: Ոչ ոք ինծի օգնեց, ես ալ ուրիշին չեմ ուզեր օգնել...: Ոչ ոքի պէտք ունիմ հիմա եւ ոչ ոք ինծի թող պէտք ունենայ:

Ամերիկեան տիպար հոգեբանութիւն: Տիգրիսի ափերուն ծնած սա մարդը, եօթանասուն տարիներու ընթացքին, բնականաբար պիտի իւրացնէր տեղական բարքերը եւ մտայնութիւնը: Բայց՝

— Հայերը ինչո՞ւ Ամերիկա կու գան, — կը կրկնէր, — հոս իրենց տեղը չէ:

Իսկապէս որ, եթէ ամէն հայ իր կեանքի վերջին օրերը պիտի անցնէ այսպիսի ծերանոցներու պաղ մթնոլորտին մէջ, իսկապէս որ հոս իր տեղը չէ:

Դարձեալ գաղտագողի ինծի կը նայի: Այս անգամ կ'ըսէ.

— Դուն իմ քրոջս կը նմանիս:

Ո՞ր քրոջը արդեօք:

Տիգրիսի ափերուն փռուած արեւոտ երկիրը ձգէլէ ետք, իրմէ փոքր երեք քոյրերը եւ երկու տարեկան աղբարիկը զոհ գացած էին սպանդին:

Ա՞յդ քոյրերէն մէկուն կը նմանէի, թէ այն միւսին, որ տասնվեց տարեկանին այրի մնաց, նորածին մանչ մը ձեռքերուն մէջ: Այս վերջինը գէթ կը ճանչ-

digitised by A.R.A.R.@

նայի։ Հինգ տարի առաջ մեռաւ։ Հօրեղբայրս անպայման անոր կ'ակնարկէր։

Կ'ուզեմ քանի մը լուսանկարներ առնել։ Սիրով կ'ընդառաջէ փափաքիս։ Նախ՝ ես ու ինք պիտի նկարուինք։ Մայրը պիտի առնէ նկարը։ Կը նստիմ իր բազկաթոռի թեւին վրայ եւ թեւս կ'անցընեմ վզին շուրջ։ Ինք իր թեւը կ'երկարէ ետեւէն՝ մէջքիս եւ այնպէ՛ս կը փարի ինծի, այնպէ՛ս կը սեղմէ, որ արցունքներս հազիւ կը զսպեմ։ «Կը ճանչնայ, կը հանչնայ զիս», կ'ըսեմ ես ինծի եւ յոյսը կը վերածնի։

— Հօրեղբայր, մեզի հետ, մեր քաղաքը կու գա՞ս, — կը հարցնեմ անձկագին։

— Շատ չնորհակալ եմ։ Ես այստեղ հանգիստ եմ։ Ատեն մը հիւանդացայ, բայց հիմա լաւ եմ։ Ինծի համար նեղութիւն մի՝ քաշէք։

— Հօրեղբայր, նեղութիւն չէ, ուրախութիւն է մեզի համար։

— Շատ չնորհակալ եմ։ Զեմ ուզեր բեռ ըլլալ ուրիշին, ո՛չ ալ կ'ուզեմ, որ ուրիշը բեռ ըլլայ ինծի։

Ճանկերդի նմանող այս տողը կարծես հատատոյ հանգանակ եղած է իրեն համար։ Կը բացատրեմ, որ Նիւթական տեսակէտէ մտահոգուելու պէտք չունի։ Հարեւանցի կերպով կ'ուզեմ նաեւ իրեն հասկցնել, թէ այս ձեւով՝ իր խնայողութիւնները օգտագործելու ո՛չ մէկ միտում ունինք։

Կը յիշեմ։ Քսան տարի առաջ էր։ Եղբայրս երկրորդական վարժարանը աւարտած էր։ Հօրս մահէն ետք, Նիւթական անձուկ օրեր էին։ Մէջին Արեւելքի մէջ, համալսարանը սուղ կ'արժէր։ Դիմած էի հօրեղբօրս եւ խնդրած, որ եթէ կարենայ ամերիկահայ բարերար մը գտնել ապագայ խոստացող այս «Հայորդի»ին, մեզ մեծապէս երախտապարտ կը ձդէ։ Պատասխանը ստացայ «Նայիրի» չարաթաթերթէն մկրատուած յօդուածի մը ձեւին տակ։ Յօդուածէ ուելի, երկու բարեկամներու միջեւ կատարուած Նամակագրութիւն մրն էր։ Սրտցաւ հայը մը «Նայիրի»ին կը դիմէ, բարերար մը հարելու համար, որպէսզի իր ուշիմ տղան ուսումը շարունակէ։ Նամակը կ'ըսէր.

«Սիրելի «ՆԱՅԻՐԻ», մեր Լեւոնը, ինչպէս լսեցիր, երկու պաքալորէաներն ալ ստաւ։ Տարի մը ուսուցչութիւն ընտ, բայց գիտես, թէ ապագայ չունի ուսուցչական ասպարէզը։ Ամէն գնով կ'ուզէ Պէյրութ գալ եւ համալսարան մտնել, մասնագիտութիւն մը ձեռք բերելու համար։ Հաւանաբար մինչեւ բժշկութիւն չկրնայ հասնիլ 6-7 տարի տրամադրելով, բայց դեղագործական կամ առեւտրական ճիւղերէն մէկն ու մէկը պիտի ընտրէ։ Մեր կացութիւնը գիտես։ Շատ պզտիկ չափով մը միայն կրնամ օգնել ուսումնական ծախքերուն։ Զե՞ս կրնար բարերար մը ճարել իրեն, որպէսզի հոգայ համալսարանական ծախքը։ Այնքան բարեկամներ ունիս։ («ՆԱՅԻՐԻ»— *Այստեղ նամակագիրը յիշած է երեք անուններ, երկուքը՝ Ամերիկայէն, մէկը՝ Եւրոպայէն*)։ Լեւոնը — դուն բերնովդ ըսած ես եւ իր ալգամին մէջ քառեակ մը ալ ստորագրած ես — շատ ուշիմ եւ արժէքաւոր տղայ է։ Մեզի պիտի ըլլայ իրեն, եթէ այսպէս կիսատ թողու ուսումը։ Անհամբեր կը սպասեմ պատասխանիդ։ Ջերմ բարեւներով՝ Գէորգ»։

«ՆԱՅԻՐԻ» *կը պատասխանէ.*

«Սիրելի» Գէորգ,

«Պիտի զարմանաս անշուշտ, նամակդ հրատարակուած եւ անունդ փոխուած տեսնելով, ինչպէս զարկիդ անունը եւ բնակավայրը քաղաքդ։ Այս կերպով միայն կարելի էր հրատարակել, խնայելով նամակագրին արժանապատուութիւնը եւ նոյն ատեն հրապարակային խորհրդածութեան նիւթ դարձնել պարագայ մը, որ թէեւ անձնական բնոյթ կը կրէ, բայց առիթ կու տայ շատ մը ընդհանրական մտածումներու։

«Իրաւունք ունիս հպարտանալու զաւակովդ։ Բացառիկ տղայ մըն է։ Աստուած պահէ։ Այս մասին՝ այնքան։

«Գալով խնդրանքիդ, պատասխանս է — Ո՛Չ։ Եթէ յիշած անձերդ իրենց չէքի տեսրակները ինծի տրամադրած իսկ ըլ-

digitised by A.R.A.R.@

յային, դարձեալ սեռք մը պիտի չստեղծուի զուկիդ հաշտոյն: Մտածա՞ծ ես երբեւիցէ, թէ ի՞նչ զգացում է, որ կը մղէ հայ մը դրամ գրկելու ուրիշ հայու մը զուկին ուսման ի նպաստ: Որպէսզի տղայ մը իր «ապագա՞ն շտկէ», դեղագործ կամ ատամնաբոյժ դառնալով: Դրամ կը տրամադրեն՝ մղուած ազգային զգացումէ, ազգային մտահոգութիւններով: Որո՞ւն հոգը, թէ ատամնաբոյժ մը աւելի է կամ դեղագործ մը պակաս: Այս պարագային, զուկիդ օգնողը ոչ թէ բարերար մը եղած պիտի ըլլար, այլ մեռակիցը զէշ արարքի մը, որով հայ դրամը պիտի զրկուի պատուական ուսուցիչ մը:

«Ճիշդ է, որ «ապագայ չունի ուսուցչական ասպարէզը», բայց դեռ ուսուցիչ մը չտեսանիմ, որ ծակ կօշիկով փողոց ելլէ կամ անտուն թափառի: Ու յետոյ, դեղագործ կամ ատամնաբոյժ ըլլալով պաղտնե՞ր պիտի կտուրցանէ կը կարծես: Անցած են այդ ժամանակները: Մեր ծագ ցակոբեանը, որ վկայեալ դեղագործ է եւ առաջնակարգ վարպետ մը, դեղարանը ձգած՝ ուսուցչութիւն կ'ընէ եւ չորս գուակներովը խղճալ կ'ապրի: Ու չկարծես, թէ հոգեւոր իր ապրումներ դեր մը ունին այդտեղ: Մտաւորակա՛ն մարդու, ճշմարտապէս կեանքը ըմբռնող եւ պարզ կեանքի մը ճաշակը ունեցող անձի մը առջեւ ըմբռնումն է, որ այդպէս ընել կու տայ: Ու յետոյ՝ ազգային զգացո՛ւմը, սիրած լեզուդ հայ մանուկներուն սիրցնելու, սորվեցնելու գործին մէջ՝ բընա՞ւ գոհացում չկայ:

«Իտէալ ըսուած բան չմնա՞ց ուրեմն այս կեանքին մէջ: Ամէն ինչ ելլենք վերածենք միայն ու միայն «ապագայ շընկելու» գործողութիւնո՞ւ մը:

«Ո՛չ, ո՛չ, եւ դարձեալ ո՛չ:

«Նամակդ չեղեալ համարէ, բայց թո՛ղ «Լեւոնը» մտածէ այս տողերուն վրայ, եւ եթէ ընելիք մը ունի, թող ինքզինքէ

տացած օրս, ասկէ տարինե՛ր առաջ, լեղի բան մը զգացի բերնիս մէջ: Կարօնին վերայ, ցայտուն մելանով, հօրեղբայրս գրած էր. «Իմ պատասխանս ալ պիտի ըլլար նոյնը»: Ես անձնապէս պիտի, որ ուսուցիչներս չատերուն կօշիկները ծակեր ունէին, որոնք սակայն չէին երեւեր՝ ներքանին տակ ըլլալուն: Զանոնք շատ դիւրին էր տեսնել, երբ դասարանին մէջ՝ մեր դիմաց նստած կ'ըլլային անոնք:

Բայց անշո՛ւշտ որ այդ չէր կարեւորը: Անշո՛ւշտ որ զոհաբերութեան ոգին անհրաժեշտ էր հայ ուսուցչին համար, որ, ինչպէս վանականը, պէտք էր աշխարհիկ վայելքներէն զուրկ մնալու ուխտով փարէր այդ ասպարէզին, եւ իր հաճոյքը դանէր միայն ու միայն հայ մատաղաշ սերունդին հայ մշակոյթը փոխանցելու իր ցանկութեան մէջ: Կը զարմանայի միայն, թէ ինչո՞ւ այդքա՞ն «ինքնադոհ» ազգայիններ ուսուցչական ասպարէզը չէին ընտրած... դոնէ ծակ կօշիկներով եւ անտուն չէին թափառեր:

Տարիներ անցած էին: Այսօր, մերժուած եղբօրորդին, որ այդ միջոցին երկրաչափ եղած էր եւ համաշխարհային հռչակ ունեցող ճարտարապետ Ներվիի յատակագիծները չէնքերու կը վերածէր, զինք կը հրաւիրէր ծերանոցէն դուրս գալու եւ իր վերջին օրերը ապրելու եղբօր գաւակներուն հետ: Անշուշտ՝ մերժեց: Բան մը զինք կը կրծէր: Որոշ էր: Բայց տակաւին կը յամառէր բարձրաձայն մեղ չճանչնալ:

Յուսախաբ՝ վերադարձայ քաղաքս: Վեց ամիս ետք, հեռաձայն մը կը գուժէր իր մահը: Կին մըն էր խօսողը: Այն ամերիկուհին, որուն տան մէջ երկար տարիներ ապրած էր հօրեղբայրս: Ինծի կու տար յուղարկաւորութեան արարողութեան թուականը: Կը պնդէր նաեւ, թէ անհրաժեշտ չէր ներկայութիւնս: Ճշդուած օրը, օդանաւը առի եւ, մէկ ժամուան թռիչքէ ետք՝ հոն էի:

Պատարագեր եւ սպիտակամօրուս հո-

digitised by A.R.A.R.@

բեղբայրս կը քանաբ բաց դաշտին մէջ։ Տիգրիսի ափերուն ծնած հօրեղբայրս «Ի Տէր հանգած» էր Ամերիկայի մայրաքաղաքներէն մէկուն մէջ եւ կը ննջէր դեղեցիկ յարդարուած, այլ ձիւնի պէս պաղ այդ մեռելատան մէջ։ Ինծի բոլորովին անծանօթ ներկաները անգիտանալով՝ մօտեցայ դագաղին եւ առանց երկիւղի, ձեռքս երկարեցի ձեռքին։ Կատարեալ սառոյց։ Նայեցայ դէմքին։ Զարհուրելի ժպիտը հոն էր դեռ, շրթունքին մէկ անկիւնը։

Ամերիկացի պատուելին կէս ժամէ աւելի տեւող իր դամբանականը խօսեցաւ։ Կարծես կը խօսէր մէկու մը մասին, որ Ցիսուսի ազգականն էր, եւ ոչ՝ հարազատս։ Այդ միջոցին, եւ մտքով դէպի ետ դացած էի, դէպի իր նամակները՝ ինծի, որոնք կը մնային ամէնէն հարազատը։ Անոնցմէ մէկուն մէջ կ'ըսէր ինծի.

«Կեանքը թեթեւ առ. ամէն ինչ ունայն է. եղիր կէս թիթեռնիկ եւ կէս մրջիւն բնութեամբ»։ Ուրիշ տեղ մը. «Եթէ կ'ուզես ներաշխարհս ճանչնալ, կարդա՛ Աւետիք Իսահակեանի «Արու Լալա Մահարի»ն։ Ուրիշ տեղ մը. «Գեղեցիկ, սիրուն եւ խոհուն տեսքով լուսանկարդ եկաւ հասատնեալ երեւակայութեանս մէջ նկարուած դիմագիծդ, միայն երանի աՁամբ օր մը կարելի ըլլար քեզ տեսնել ու համբուրել»։

Այդ գեղեցիկ առիթը ունեցանք երկուքս ալ։ Առաջին եւ վերջին համբոյրը։ Հիմա ա՛լ չկար տրդէն։ Մեկնած էր իր գաղտնիքներով եւ դառնութիւններով։

Երբոր անգամ մը եւս պէտք եղաւ օդանաւը առնել եւ թռչիլ դէպի այն քաղաքը, ուր այլեւս «հօրեղբայր» չկար։ Բայց կար իր կտակը։ Եւ ես, իբրեւ իր եղբօր դուստրը, պէտք է ներկայ ըլլայի դատական առաջին ունկնդրութեան։ Կտակը, իր ամբողջ ունեցածը, բաւական կոկիկ գումար մը, կը ձգէր այն ամերիկացի կնոջ, որուն մօտ ապրած էր ինք։

Նախորդ գալուս, յուղարկաւորութենէն անմիջապէս ետք, այցելած էի կնոջ տունը։ Փողոցի մը անկիւնին տախտակշէն միայարկ տուն մըն էր, որուն հերմակ ներկը տեղ-տեղ գունաթափ եղած էր այլեւս։ Ըստ կնոջ բացատրութեան, տունը նախապէս պատկանած է հօրեղբօրս, որ զայն ծախած է ամերիկացի այս զոյգին եւ յետուկ կարգադրութեամբ, ինք ալ բնակած է հոն, սենեակներէն մէկուն մէջ, տրուած ըլլալով, որ առանձին մարդ էր եւ զինք խնամող չունէր։

Կինը, ինք եւս ծեր այլեւս, ունէր ամուսին մը, որուն սիրտը կ'աշխատէր ելեկտրական փոքրիկ գործիքի մը շնորհիւ։ Բաւին բուն առումով թափթփած տուն մը, ուր ոչ ոք պիտի ուզէր հինգ վայրկեանէն աւելի մնալ։ Կինը, ըստ իր բացատրութեան, մանկական պատմութիւններու հեղինակ էր, ինչ որ կը բացատրէր գրամեքենայի մը գոյութիւնը այդ խառնիճաղանճին մէջ։ Աչքիս ծարրով կը դիտեմ զինք։ Այսինքն՝ կինը։ Հակառակ ժամանակի աւերին, յայտնի էր, թէ գեղեցիկ եղած էր ան։ Ցանկարծ մտքիս մէջ կը ակսի դրուիլ սիրային պատմութիւն մը՝ այդ կնոջ եւ հօրեղբօրս միջեւ։ Ո՞վ գիտէ, վերջ է վերջոյ, կարելի՞ էր բաղդատութեան դնել հիւանդ սրտով ամերիկացին եւ խանդոտ սրտով հայ մը։ Թէ ոչ՝ ինչո՞ւ այսպիսի տեղ մը պէտք էր ապրած ըլլար ան։ Նիւթը չէր, որ կը պակսէր իրեն։

Դատավարութենէն քանի մը ամիս ետք, ստացայ միջակ մեծութեամբ խաւաքարէ տուփ մը։ Հօրեղբօրս քանի մը դիրքերն էին, եւ շատ փոքր ծոցատետր մը, որուն թերթերը գրեթէ իրարու փակած էին ժամանակին կամ դրքի մը ճնշումին տակ։ Ծոցատետրի վերջին էջին վրայ կարդով գրուած էին մեր բոլորին անունները եւ ծննդեան թուականները։ Ծոցատետրին հետ կայքին նաեւ վրձին մը եւ ածելիի շեղբ մը...

ՌԻԹԱ ՈՐԲԵՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԾՆՆԴՈՑ

Եւ ձուկերու վտառներ
կը սահէին երգիս հետ,
ձայնս սակայն կ'այլայլէր,
ի՛ստարանար իմ անձէս···

«Ինծի պատմէ՝
ծիւներու
տակ ուռնացող սերմերուն,
պաղող ծառերու
երակներէն վեր բարձրացող աւիշին,
ջրախոտերու պէս անկայուն
ու դողացող
մարդոց մասին,
երկինքներու
այդքան գաղտնի կենսագրութեան,
արտերու ներքին
քարտէսագծումին,
ճամբորդութեան բոյրերու
եւ այս բոլորին
այլակերպումին···»

Սէրս, այստեղ
քեզ կը բերեմ
անուն կու տամ, որ մնա՛ս·
արդէն գիտեմ, այս բոլորը
պէտք է սկսիլ սկիզբէն·—

Եւ ձուկերու վտառներ
կը սահէին երգիս հետ···

Ազատութիւնս ինչ ըրի·
ես ոչինչի կապուեցայ
եւ ոչինչ մնաց ինծի:

Ես՝ ծովեզրին
կէտ ձուկ մը մեռած:

Հովը կը խաղար ագռկան
մագերուն հետ: Կը կարծէի,
թէ սեւ թռչուն մը կեցած էր
գլխուն վրայ
եւ կը շարժէր:

Վերջը, երբ հովը կեցաւ,
դէմքն իր բացուեցաւ երկնքին նման,
սակայն այնտեղ՝ փոքրիկի
նշանները կը մնային տակաւին:

Եւ ճոյնքան դժուար
էր զանոնք ջնջել,
որքան հետքերն փոքրիկի
ծովափին:

Առաւօտեան ժամերուն՝
ասոնք ժայռեր են ծովափին:
Նախ՝ կապոյտ ու մութ
եւ հետզհետէ՝ մանիշակագոյն:

Հոն՝ ալիքներէն
մնացած ջուրը կը կաթի դանդաղ,
Կը սուզուի կարծէք
միշտ զոյն փոխելով:

Այնտեղ վախեր կը թափառին:
Ցարաշարժ ջուրեր, կ'ասեղնագործեն
քայքայումը ժայռի մարմնին
մէջ: Խռռոչներ
կան՝ աչքի տեղ բացուած:

Քիչ ետք, ջուրը
դանդաղօրէն
պիտի բաժնուի աւազէն,
ճայեր պիտի արթննան,
եւ ժայռերը ծիրանագոյն
ներկուելէ ետք,
իրենց բնական
կարծրութիւնը պիտի փնտռեն արտաքին
եւ եղէգներու
չոր սալոցները պիտի աւնկնդրեն:

Ց· ՊԷՐՊԷՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ց. ԿԱՐԱՊԵՆՑ

ՈՐԴԻ, ԱՆՈՒՆԸ՝ ՄԱՅՔԸԼ

*Ամբողջ ցերեկից մնացել էր երգը, որը իրիկուայ ամպերի տակից մերթ ընդ մերթ շողում էր՝ արեւոտ ցաւի սլաքներ ցանելով չորս դին։ Մայքլը յաճախ չփոթում էր գերեզմանները, այնքան որ նրանք նման էին իրար։ Նա կանգնեց կենտրոնական ծառուղու մէջտեղում, մատներով հաշուեց զուգահեռ երկարող արահետները մինչեւ եօթ, ապա հայեացքով գտաւ Թուխ Քրդ կենու ծառը, որի շուքի տակ հանգչում էր Մեծն Կիւրոսը, իր պապը՝ Կիւրեղը, որի պարթեւ հասակը առասպելական գտնելով, մի օր նրան վերամկրտել էր Մեծն Կիւրոս անունով։ Գերեզմանոցներում երեկոն միշտ էլ շուտ է վրայ հասնում։ Նոյեմբերեան զորշ երիկնքը վիթխարի կափարիչի նման ինկել էր գերեզմանների վրայ։ Մայքլը մտովին պատկերացրեց Մեծն Կիւրոսին հողի տակ, ծանր քարը կրծքին։ Ընդվզեց։ Ամայի էր Ֆլաշինգի գերեզմանատունը։ Նա ներքուստ զոհ էր։ Այլոց ներկայութիւնը խանգարում էր իր անդորրը։ Կորեց շաւիղները, թեքուեց աջ, յենուեց թղկենուն։

— Հելիо, գրանփա, — ասաց Մայքլը։

Երբ պատասխան չստացաւ, գետնից մի հիւղ վերցրեց եւ մեքենայաբար սկսեց փրցնել տերեւները։ Նա նայում էր գերեզմանաքարի հայերէն արձանագրութեանը եւ ջանում այդ արտասուոց գրերի միջոցով հաղորդակցութեան կենդանի մի շաղկապ գտնել։ Մի՞թէ այդ չէնչող կեանքից միայն տաշած քարը պիտի մնայ։ Ու երգի բեկորները խարոյկի պէս վառուեցին, երբեմն խորթ հնչիւններ, որոնք կապուած էին ինչ-որ մարդկանց ու առասպելների հետ.

Կովկասի Ռաթեր, խմբեր կազմեցէք,
Քաջ Անդրանիկին օգնութեան հասէք...

Մայքլը չէր հասկանում, սակայն գիտէր, որ այդ երգի ենթախաւում թաքնուած կայ մի ամբողջ աշխարհ, որի առանցքը Կիւրեղն էր, մի աշխարհ, որ այլեւս չկար։ Ու նրա կերկերուն ձայնը բարձրացաւ, կախուեց խնամքով շարուած ծառերից, մշուշից։ Մեծն Կիւրոսի երգն էր։ Նա լսել էր այդ երգը վաղ մանկութեան առաւօտներին, երբ դրանփայի կոչտ ձեռքը բռնած՝ քայլել էին Բաթդէյթ փողոցն ի վար՝ դէպի Բրոնքսի իտալական շուկայի բուրումնաւէտ լաբիրինթոսը։

— Գրանփա, ո՞վ է աշխարհի ամէնից ուժեղ մարդը։

— Անդրանիկը։

— Անդրանիկից յետոյ ո՞վ է ամէնից ուժեղ մարդը։

— Սեբաստացի Մուրադը։

— Ի՞նչ է Սեբաստիա։

— Հայաստան։

Ու հիմա Մայքլը եկել էր Կիւրեղին յայտնելու, թէ ոլորել է առեւտրական դպրոց չգնալ, որ ուզում է գրող դառնալ, բանաստեղծ։ Բայց այդ բոլորը պատրուակ էր։ Մայքլը կարօտել էր Կիւրեղին, նրա բեխերի բուած նուշի հոտը, նրա թեւերի ամուր ապահովութիւնը, նրա կոտրտուած անգլերէնը։ Նրա ձայնի գաղջութիւնը, որն իր լսած ձայների մէջ ամէնից թաւն

digitised by A.R.A.R.@

էր։ Նա յիշեց ամբան այն գիշերը, երբ Լոնդ Այլընդի իրենց այգում սխալմամբ միզեց գրանիայի կօշիկների վրայ։ Առանց Կիւրեղի, ամայացել էր աշխարհը։ Իր ծնողների հետ կապը պայմանական էր, խնամատարական։ Հայրը ուզում էր, որ ինքը գործնական մարդ դառնայ։ Սակայն հայրը իրեն ոչ մի հեքիաթ չէր պատմել։ Իսկ Կիւրեղի մահուանից յետոյ հայերէն թերթը դադարեց։ Գրանիան որքա՞ն էր սիրում այդ թերթը, ակնոցները քթի ծայրին դնում, ծայրից ծայր կարդում էր։ Ինքն էլ սիրում էր այդ թերթը, վերցնում, հոտոտում էր եւ լարունակ զարմանում։ Յետոյ, ամէն իրիկուն գործից տուն դալով, Կիւրեղը մի կողմ էր դնում հիւանի իր գործիքների արկղը, դնում ննջարան, վարագոյրի յետեւից առնում տանը պատրաստած օղու շիշը, մի գաւաթ լցնում, աչքերը փակում, մի շարժումով ճնկում էր հեղուկը, բերանը ձեռքով սրբում եւ լարունակում Անդրանիկի անվերջ երգը.

... Առած իր շուրջը զինուորներ ուրուն,
Մամբրէ նաճապարի նա դէպի Սասուն...

Հեռում, ապիւսաշէն տան մօտակայքում մի ստուեր շարժուեց։ Գերեզմանապահն էր, որ երգի ձայն լսելով, դուրս էր եկել ստուգելու։ Այս անգամ երգը բեկոր-բեկոր թափւում էր ցած։ Այդպիսով Մայքլը իր հաւատարմութիւնն էր խոստանում Կիւրեղին, որ նրան չի մոռանայ, եթէ նոյնիսկ Ամերիկայի ամենայայտնի գրողը դառնայ։ Սակայն այդ էլ պատրուակ էր։ Փաստորէն, Մայքլը մենակ էր, շատ մենակ։ Մնացել էր անընկեր, անապաւէն։ Այն՝ ինչ որ իր կեանքի կորիզն էր, հիմա չկար։ Եկել էր իր մեռութիւնը պատմելու։

— Ծօ կորի՛ճ, կրակը ապէս կը վառեն, — ասաց Կիւրեղը՝ չափազանցուած աշխուժով բորբոքելով խարոյկը։

Մայքլը ծխակալած աչքերով վեր նայեց պապի վիթխարի հասակին եւ մտածեց, որ Անդրանիկը անպատճառ Կիւրեղի նման հուժկու մարդ է եղել — խուլ. յօնքեր, ժայռուտ քիթ ու արծուային հայեացք։ Խօսելիս գոռում էր նա, կարծես լեռներից վար չէր իջել։ Մեսա դիմադրեր տակ միշտ էլ գաղտնի մի ժպիտ կար ծուարած, որը մերթ ընդ մերթ դէն էր վանում գորշ ամպերը եւ լուսաւորում աշխարհը։ Վան Քորթլանդ այդու ամէնից թէժ խարոյկը Կիւրեղինն էր։ Այդին կրակապաշտների բազմանիստ բաղինի էր վերածուել։ Ամէն կողմից ծիւ ու խորոված մսի հոտ էր բարձրանում։ Ամէն կիրակի, տուն-տեղ հաւաքած, Նիւ Եորքի մթին կիրճերից ու քարայրներից Վան Քորթլանդ այդին էին հաւաքւում հայերը, խալացիները, յոյները, լիբանանցիները ու Արեւելեան Եւրոպայի բազմազան ցեղերը։ Երբեմն նաեւ հատ ու կէնտ իրլանդացիներ։ Այդին բաժանւում էր ըստ ազգային խմբաւորումների։ Հայերը սովորաբար գրաւում էին բարձունքները։ Ամէնից աղմկարարներն էլ հայերն էին։ Սեբաստիա, Խարբերդ, Էրզրում, Բիթլիս, Տիգրանակերտ ու Վան ձուլում էին իրար՝ երգի, բարբառների, քրտինքի ու կերուխումի մէջ։

— Ծօ կորի՛ճ, եկուր ասենց պարել սորվեցնենք։

Կիւրեղը կանգնեց բացատում, մարմինը աղեղ, գլուխը եկնքում։ Արեւի տակ պպզուած էր նրա պղնձագոյն դէմքը։ Մի պահ ետք ուղղաձիգ շարք էին բռնել ընտանիքի անդամները, թուով տասնըվեց։ Մայքլը ամուր կառչեց պապի գօտուց։ Ցանկարծ Կիւրեղը մէջքը ծռեց, ծնկները կքեց, թաշկինակի ծայրով կօշիկները մաքրեց։ Ապա մէկ մարդու պէս գերդաստանը դոփեց գետինը, մի քայլ յետ, մի քայլ առաջ գնաց, ծառացաւ, կուրծքը

digitised by A.R.A.R.@

դէմ տուեց անգոյ տարերքին, առաջ խոյացաւ, թեքուեց ալ, ալիքի պէս շառաչեց ու նորից դոփեց գետինը։ Գերդաստանին միացան այլ սեբաստացիներ, շարքը ուռճացաւ։ Մայքլի հայեացքը ընկաւ իր հօրաքրոջ՝ դեռատի Ալիսի թուխ, վառուող դէմքին եւ զգաց, որ կեանքը յաւիտենական է, որ միշտ եղել են այս սիրելի դէմքերը։ Շարքերը խտացան, կանանց կրակոտ հայեացքները Կիւրեղին յառած։ Սեբաստիան ապրում էր երկու աշխարհների արանքում, արեան կանչերով, հեռաւոր կշռոյթների հանգոյն, կրքով ու երգով։ Սեբաստիան Կիւրեղն էր, քաջերի աշխարհ, որ եթէ ուզենան մի օրում հողին կը հաւասարեցնեն Բրոնքսը՝ Մանհաթանն էլ միասին։ Մայքլին թւում էր, թէ օրօրւում է մի անվերջանալի ճօճանակից, վառ գոյների փոթորիկ, կանացի սիրող յուրթի ատինքներ, տղամարդկանց ռեւ, մազոտ բազուկներ, սոխի, ծխախոտի ու քրտինքի կծու հոտ։

Դիմացում մոխրագոյն էր, իսկ հեռուում մէգը մուգ կանաչի էր փոխուել։ Ոռնաւ երեկոն մտել էր Մայքլի ոսկորների մէջ։ Գերեզմանատան լռութիւնը վախ պատճառեց նրան։ Ինչո՞ւ էր վախենում։ Չէ՞ որ ննջեցեալներից զատ ուրիշ ոչ ոք չկայ։ Նա գրպանից հանեց կիսաթօշնած մի ապտակ վարդ ու գրեց Կիւրեղի գերեզմանի վրայ։ Զեռքով շոյեց պաղ քարը։ Երգը այլեւս խեղդում էր նրան։ Անհասկանալի հնչիւնները քանդում էին նրա ներքը։ Այդուհանդերձ, նա պիտի երգէր որպէս հաղորդութիւն, որպէս փրկութիւն։ Նրա դէմքը ծամածռուեց, ծնօտը դողաց, լեզուն փակչեց քիմքին՝ չորացած կաւուի պէս.

... Սուլթանը ապտապված, ճարը կտրուած,
Հազար ոսկի է գլխին խոստացած...

Հիմա մնացել է ինքը։ Ինքն ու Կիւրեղը։ Տնեցիները բոլորը գնացել են, հեռացել։ Տատն էլ է գնացել մահուան ճամբով։ Միւսները ցրուել են, ոմանք՝ Մասաչուսէթս, ոմանք՝ Ռոդ Այլընդ ու Քրնեթիքէթ, ոմանք՝ Քալիֆորնիա ու Ուայոմինգ։ Ոմանք։ Ներկաներն էլ բացակայ են։ Մնացել են ինքն ու Կիւրեղը, մէկը տաշած քարի տակ, միւսը՝ Քրոթոնա հանրային պարտէզին կից «Արաքս» սրճարանում՝ սադաֆնայ քարը ձեռքին։ Հա՛, քեզ զուրգան, ճուխտ չէր։ Այդ մէկը միշտ ներկայ է, երբ միւսները բացակայ են, նրա ներկայութիւնը կարելի է շօշափել Նիւ Եորքի փողոցներում, ձմրան երկար գիշերներին, պատուղների համի, ծաղիկների բոյրի մէջ, ամէն ինչի մէջ։

Մայքլին այնպէս թուաց, որ պապի մահով իր մէջ եւս մի բան մահացել է, որ ինքը այն չէ, ինչ էր, որ դեռ քանըհինգ տարեկան չեղած, ամէն օր ծերանում ու մօտենում է Կիւրեղին, կամաւ ու ասիճանաբար, ինչպէս գարունը, ինչպէս բանաստեղծութիւնը, ինչպէս հողը, ինչպէս մարմինը, ինչպէս արեւակը։ Նա իր հետ կը տանի Կիւրեղին մինչեւ աշխարհի ծայրը, կը կանգնի քաղաքների հրապարակներում եւ բարձրաձայն կը յայտարարի, որ Կիւրեղը միակ ճշմարիտ մարդն էր բոլոր մարդկանց մէջ, որ նա սեբաստացի էր, որ նա մի օր գիշերը տուն եկաւ, նստեց բազկաթոռին եւ հենց այնպէս մահացաւ.

... Հայ պատանիներ, շուտով շարժեցէք,
Երբեք մի վախնաք, սուրեր շարժեցէք,
Հասել է ժամը սուրբ ազատութեան,
Կենապու ժամ չէ, շուտով քալեցէք...

digitised by A.R.A.R.@

Երգի պատառը կրծքին մտաւ Հաքընաք։ Առաւօտը բնաւ էլ խոստմնալից չէր։ Հաքընաքը թեւերը հաւաքած նստել էր Նիւ Եորքի ատուերի տակ եւ տեղից շարժուելու որեւէ մտադրութիւն չունէր։ Մայքըլը բնազդմամբ գիտէր, որ Հաքընաքը իրեն տալիք որեւէ բան չունէր։ Այդուհանդերձ, մի տեղ էր, ունէր իր սենեակը կորած փողոցներից մէկի պառնդին։ Պատից կախել էր մեռած ու ողջ սերաստացիների լուսանկարներ եւ խորանի պէս վառել էլեկտրական լոյսերը։ Սենեակի ամենից դունաւոր կէտը Լիլիթի բրդէ կարմիր գլխարկն էր՝ չագանակագոյն մազերին նստած, կարծես ազնակ լինէր կիբակնօրեայ եկեղեցու առտիճաններին տպառելիս։ Երբ սենեակի հետ հաղորդակցութեան կապերը կտրւում էին, Մայքըլը դառնում էր Լիլիթին ու ասում՝ «Դու Հունգարիան յիշո՞ւմ ես», կամ նման բաներ։ Երբ Լիլիթը խօսում էր, նա նրան չէր լսում, այլ անյագ նայում նրա մորուքոյն աչքերին ու զարմանում, թէ այսքան գեղեցկութիւն ինչպէ՞ս կարելի է ամփոփել մի կեանքի մէջ։ Այդուհանդերձ, գրամեքենաները տենդոտ աշխատում էին։ Վաղը կը վերջացնեն Մըքգրօ-Հիլի ձեռագրերի արտատպումը եւ ստանալիք գումարի մի մասը կը յատկացնեն Տէր Ֆորդի մասնավճարին։ Վեց ամիս յետոյ Ֆորդը իրենցը կը լինի։ Վեց ամիս յետոյ ո՞վ գիտէ ինչ կը լինի։ Լիլիթը բարձրացաւ աթոռից, թեւերը տարաւ ուսերին, բռունցքներ շինեց կղակի տակ, տարածեց ձեռքերը, գլուխը մի քանի անգամ աջ ու ձախ դարձրեց եւ ծանր բեռից թեթեւացածի պէս աղաղակեց՝ «Մի բաժակ թէյ, թագաւորութիւնս մի բաժակ թէյի դիմաց»։ Նա անցաւ սենեակի լայնքը, մտաւ մի խոռոչ, որը խոհանոցն էր ու սկսեց թէյի պատրաստութիւնը։ Մայքըլը կարօտեց նրան, թողեց գրամեքենան, խոհանոց գնաց, գրկեց Լիլիթի մէջքը, համբուրեց նրա ծոծրակը։ Լիլիթը ճչաց ու յանդիմանեց։ «Ա-նառա՛կ»։ Մայքըլը հայեացքով չոյեց սենեակի առարկաները եւ մէջոցը, որի միջից անցել էր Լիլիթը՝ իր կապոյտ դունատ նեղ տարատով ու բրդէ հաստ փուլովերով։ Նա մի քանի անգամ մտքում կրկնեց պատկերը եւ ուրախացաց։ Այնպէս վաղանցուկ է ամէն ինչ։ Այնքան բանաստեղծութիւնը չէր, որքան բանաստեղծութեան ծնունդը, որ նրան գրգիռ պատճառեց, անորոշը, անձեւը, ապմնայինը։ Արդէն այդ է իրականութիւնը, մնացեալը կողոպուտ է, բառերի աղբատացում եւ ցաւ։ Լիլիթը զգաց նրա տառապանքը, շուռ եկաւ, գրկեց նրա ըմբշամարտիկի ուսերը, կրծքին սեղմեց ու օրօրուեց սգաւոր մօր պէս։ Մայքըլը ձերբազատուեց կնոջ գրկից, կտրեց սենեակը, գնաց, կանգնեց իր խորանի առջեւ։ Ոսկեզօծ շրջանակից իրեն էին նայում պապն ու տատը յիսուն տարի առաջ, խիստ ու հանդիսաւոր։ Կիւրեղը աջ ձեռքը կանթել էր մէջքին, իսկ ձախը գրել իր Վարդուհու ուսին՝ որպէս ուխտ ու մշտնջենական առասպել։ Ընդարձակուել էր տիեզերքը եւ նրանք գնացել էին հողի գրկը։ Մնացել էր ցաւը, որ մնացել էր որդիներին, մնացել էր գալիք զաւակներին, մնացել էր Հաքընաքին.

... Սիրենք միութիւն, չանենք վատութիւն,
Ունենանք, հայե՛ր, սուրբ ազատութիւն...

Լեռներից իջած բառերը հալածում էին նրան։ Նա գիտէր, որ երբեք պիտի չհանի այդ բառերին, որոնք սակայն դաժան քուրմերի պէս շրջապատել էին իրեն, հետզհետէ սեղմելով օղակը։ Իրեն մնացել էր ոգին, կոյր չչուկը խորթ-հարազատ հնչիւնների, չապրուած երեսները գաղթականների, հաց ճարելու օրհասական վազքը, հայրենակցական հանդէսների գաղջ ժխորը, լահմաջունի վառ հրաւէրը, Հայոց եկեղեցու խունկը, հայ լինելու յայտ-

digitised by A.R.A.R.@

նութիւնն ու տառապանքը, տառապանքի հետ անորոշ հպարտութիւնը, իր երկրում այլ լինելու թնջուկը, կիւրեղից ժառանգած իր մեծ քիթը, թաւշեայ թախծոտ աչքերը եւ մեծ ընտանիքում որբութեան անթաքոյթ դիտակցութիւնը: Մայքլը մի կտոր շաքար դրեց բերանը եւ ազմուկով ծծեց տաք թէյը: Լիլիթը սիրեց նրա արուելեան խմելաձեւը, թեքուեց ու ճանկեց նրա խուլ մազերը: Մայքլն ասաց, թէ ուզում է Մեծն Կիւրոսին այցելութեան գնալ: Լիլիթը գրկեց նրա գլուխը, ամուր սեղմեց իր իրանին: Մայքլը ոտքի կանգնեց, Լիլիթին առաւ իր թեւերի մէջ, վեր բարձրացրեց, համբուրեց նրա բերանը: Լիլիթը փակեց աչքերը: Մայքլը նորից համբուրեց նրան: Լիլիթը գունատուեց, ապա շառագունեց: Մայքլը տեսաւ Լիլիթի մազերի յանկարծական ջրվէժը ու նորից համբուրեց նրան: Ծօ, կտրի՛ճ, անանկ կ'ուզեմ երդես, որ Քաֆն Անդրանիկի հոգին փառաւորուի: Հարլեմի եղբին ընկած հնամենի սրահը դղրդաց ծափահարութիւններով: Մայքլը ուղեկորոյս հորքի պէս նայեց չորս դին: Կիսամութի մէջ սեւ գլուխների ծով էր, առաստաղից կախուած ծուխի վարագոյր, գանակների ու պատառաքաղների տենդահար մենամարտ: Դեղին լուսարձակի տակ մի պահ չլմեց, մոռացաւ երգը, ուզեց լալ: Ծօ, կտրի՛ճ...

... Քաֆ Անդրանիկը անվախ, աւար առած,
Հայաստան գնալ վաղուց էր ուխտած...

Երգի ելեւէջները աւրուած մեքենայի աղիքների պէս մի քանի անգամ գալարուեցին, կազկանձեցին, կանգ առան: Թանձր լռութեան մէջ ոսկայն, ներքին երգը չարունակուեց: Այդպէս կարծեց Մայքլը, երբ թաշկինակով քիթը խնջեց: Միաժամանակ նա ցաւ զգաց, որ կիւրեղի գերեզմանաքարը այնպէս խղճուկ՝ կուչ էր եկել շրջապատի չքեղ, նոյնիսկ ամբարտաւան վէմերի արանքում: Ի՞նչ տարբերութիւն, ասաց նա ինքնիրեն, չէ՞ որ մահը վերջնական ճշմարտութիւնն է, ամէնից մաքուր իրականութիւնը: Գերեզմանները ողջերի համար են, որպէսզի մի կերպ շարունակեն կեանքը: Իսկականը կիւրեղն է, բացարձակապէս անկրկնելի: Միւսները ընդօրինակումներ են: Իսկականը առոյգին օրհասական ճիչն է, թէկուզ որքան էլ արտառոց: Միւսները ընդօրինակումներ են, միջակութիւններ: Ես կը լինեմ անկեղծ իմ կեանքի հետ, որովհետեւ քո կեանքը, գրանիա, չարունակւում է իմ կեանքի մէջ: Մայքլը ծառը թողեց, առաջացաւ, խոնարհեց, շօշափեց գերեզմանի հայերէն գրերը եւ մթնշաղի մէջ հասկացաւ այն՝ ինչ չէր հասկացել մինչ այդ, որ ինչ-որ մի տեղ քանդուել էր ժամանակը, կոտրակուել մարդը, բեկուել միտքը, ընկել անհեթեթութեան փոսը, որից դուրս գալու համար եկել-ընկել էր Ֆլաշինգի փոսը: Առաջին անգամը լինելով՝ Մայքլը զգաց ողբերգութիւնը: Հեռուում, Հրագը ձեռքում ճօճելով՝ գոռում էր գերեզմանապահը:

— Ծօ կտրի՛ճ, տուն երթանք՝ քեզի աղուոր հեքիաթ մը պատմեմ:

— Ես Սերասուցի Մուրատի պատմութիւնը չատ կը սիրեմ:

— Քեզի Մուրատի պատմութիւնը կը պատմեմ:

— Գրանիա, ո՞վ է աւելի սքրընգ, Զորո՞ն, թէ Մուրատը:

— Հարկաւ Մուրատը: Ան մէկ գնդակով եօթը Թուրք զարկած է:

— Մէկ գնդակո՞վ...

— Մէ՛կ գնդակով:

Գայլի կոչտ ձեռքից կառչած՝ Մայքլը մտաւ իր աշխարհը, որը ընդամէնը վեց քառակուսի մնաչար էր՝ Երբոդ ու Թրիմանթ պողոտաների արանքում ընկած: Հենց որ Սամի հայթիւարանի բուրմունքը քթին դիպաւ,

digitised by A.R.A.R.@

նա խմացաւ, որ տուն է հասել։ Հացթխարանը գտնուում էր Բաթդէյթ փողոցի անկիւնում՝ չինացի Հուանգի արդուկարանի կից։ Նա սիրում էր Հուանգի միավանկ խօսակցութիւնը։ Նրա խանութից միշտ էլ թարմ ապիտակեղէնի հոտ էր գալիս։ Իսկ ամէնից լաւ նա սիրում էր դիմացի պաղավաճառ Զիակոմէթթի նարինջներն ու խնձորները։ Առաւօտեան եղջիւրի պէս բանջարեղէնն ու կանաչեղէնը խանութից յորդել էին դուրս՝ տարածուել մայթի վրայ։ Զիակոմէթթին, ամբողջ օրը կեղտոտ լաթով փայլեցնում էր տանձն ու վարունգը, ամբուկն ու լոլիկը՝ այրուող գլանիկը բերանից կախուած։ Իր տիրապետութեան սահմաններում էին գտնուում նաեւ Գոլդֆիլի ապակեպատ գոհարավաճառանոցը, բուլղարացի Զորջի նեղ ու մութ հնակարկատ խուցը, էստոնացի Մանուէլի խարիսուլ նպարավաճառանոցը, Բրաունի գրենական պիտոյքների խանութը՝ միշտ տառն ու պաշտօնական։ Իսկ ամէնից խորհրդաւորը սուրիացի Հաղդադի հնավաճառանոցն էր, որը աւելի շատ, կոտրուած, փտած, ժանգոտած կահկարասիների ու մեռագնայ հնամենի գործիքների մի անկիւնոց էր՝ կեղտ ու փոշու մէջ կորած։ Ինքը, Զիմն ու նէդը յաճախ մօտենում էին խանութի ապակիներին եւ զմայլանքով զննում այդ անհաւատալի իրերն ու առարկաները։ Նրանց սարսուռ էր պատճառում Հաղդադի սեւ սպառնագին քեխերը։ Տնաշարի ամէնից բանուկ անկիւնը գրաւել էր էյ-Անդ-Փի գերվաճառանոցը, որտեղից նպարեղէնի տոպրակներով բեռնաւորուած՝ ներս ու դուրս էին անում բազմապգի ներգպիծաձների ամբողջ սերունդներ։ Թագի բնակիչները բարձրախօս էին։ Հինգ բոպէն մի անգամ ահռելի դղրդոցով Երրորդ պողոտայի վերամբարձ երկաթգծերի վրայից անցնում էր գնացքը, Քրոթոնա այգու ծայրում թեքւում, մտնում ապիտակերա մրոտած շէնքերի ընդերքը, ապա մի չարք վտանգաւոր գալարումներից յետոյ գլուխը հանում Հարլեմի սեւացած թոքերում։ Մարդիկ ճչալով էին խօսում։ Նրանց ձայնում մուր կար։ Մուրը նստել էր նրանց դէմքին, մայթերի վրայ, բնակարանների վրայ։ Երրորդ Պողոտայի անձաւում էին թառել գինեսները՝ վտանգաւոր մթութեան մէջ։ Այդ կէտը արգիլեալ գօտին էր։ Մօրից ծածուկ, իր հասակակիցների հետ, Մայքլը երբեմն հեռախուզում էր թշնամու գիրքերը։ Երբ նրա ռունգերին դիպչում էր մէզի, մազութի ու ալքոհոլի հոտը, գիտէր, որ որեւէ տեղ արկած է նիւթում։ Այդ մայթի կանայք արտասովոր մեծ ծծեր ու յաբաշարժ յետոյք ունէին։ Նրանց վրայից ածան անուշահոտութեան ու ուիսկիի ամպ էր տարածւում։ Իր կայսրութեան այդ թեւը ամբողջ պողպատ ու կրաղիւս էր։ Նա այնքան ընտելացած էր ինքնաշարժների խելագար ժխորին, որ այծեամի պէս ցատկում էր նրանց առջեւից, վազում նրանց մէջեւ ընկած արահետով, կախւում նրանց դունչերից կամ ցեխարգելներից, իսկ նեղ մնացած վայրկեանին, մագլցում էր էլեկտրասիւները, կարծես մեքենայի մի մասը լինէր, մեքենայում ծնուած։

Թրիմանթից ոկսում էր Բաթդէյթ պողոտան, որը բարձրանալով հասնում էր Ֆորդհամին։ Սակայն այդքան հեռուները գնալու պէտք չկար։ Բաթդէյթից մէկ տնաշար վեր, աջի վրայ, 178րդ փողոցի անկիւնում նստած էր իր տունը, վեց յարկանի մի տուփ, ծանրաշարժ ու խոժոռ, որը տակաւին պահպանում էր 19րդ դարի վերջերի իր նոր-բուրժուա նկարագիրը։ Ատոիճանների ապիտակ մարմարը, թէեւ մաշուած ու կորացած, այդուամենայնիւ, տոկուն էր։ Բազմիցս ներկուած երկաթեայ դարպասը հեգինակութիւն էր պարտադրում։ Նախադուռթում կեղծ բարոքը տակաւին ակնածանք էր պատճառում։ Գորշ առաստաղից կախուած մեծդի ջահից ցերեկ-գիշեր վառում էր 40 վաթնոց մէկ հատիկ լամպը, որի լոյսը խեղդում էր պատերի սրճա-

digitised by A.R.A.R.@

գոյնի մէջ։ Զորբորդ յարկի աջ անկիւնի վերջին յարկաբաժինը իրն էր։ Դռնից ներս միշտ մայրն էր ու մամիկը ու պատերից կախուած զինուած սեբաստացիները։

Ցունական սրճարանում Կիւրեղը մի պազպազակ գնեց, հինգ սենթ վճարեց ու երկար խօսեց Փափազի հետ։ Մայքլը վարպետարէն լիզեց հացակոնից ծորող դեղին առուակները՝ մինչեւ որ վտանգն անցաւ, ապա սկսեց բուն յարձակողականը, տակաւ առ տակաւ իր քիմքի վրայ զգալով աշխարհի բոլոր համերի ու բոյրերի շառաւանը։ Աջ մայթի վրայ պզնձեայ գոներով ինչ-որ մի հիմնարկութիւն էր, որի պատուհանները միշտ փակ էին։ Քովը «Կարմիր գլխարկ» ծաղկավաճառանոցն էր, որտեղից եկեղեցու հոտ էր գալիս, յետոյ Թոսկանինիի վարսավիրանոցն էր՝ ամբողջ օրը նոյն մաշուած օպերային ակաւառակները, ապա գալիս էր մի յոգնած հայի դերձակատունը՝ կողքին ռաղիօ-նորոգման մի արհեստանոց, իսկ ամէնից չքեղը՝ Պամպոլինիի մեռելատունն էր՝ ոսկեգօծ գոներով, գորգապատ մուտքով, որի շուրջը մռայլ նախարարների նման վխտում էին պաշտօնեաները։ Մեռելատունը կեանք էր բերում փողոցին։ Վառում էին մուտքի ջահերը, ծաղիկներով զարդարում լրջադէմ ինքնաշարժները, լինում էր թափօր ու երգեցողութիւն եւ կիրակնօրեայ հագուստների տարազահանդէս։

Պազպազակի ամէնից համեղ մասը հացակոնի վերջին պատառն է, որը խորոված չագանակի համ ունի։ Մայքլը աշխատեց երկարաձգել այդ վերջին ծէսը։ Զախ մայթի ամբողջ տնաշարի կէսը զբաղեցնում էր 58րդ ոստիկանական կայանը, որը դրսից բնակարանի էր նմանում, այն տարբերութեամբ սակայն, որ լուսամուտները կեղտոտ էին։ Նրան ամէնից շատ հետաքրքրում էր ոստիկանատան մուտքի կլոր ժամացոյցը, որի մեծ սլաքը դիւահարի պէս ամբողջ օրը դառնում էր ժամերի ու բոպէների առամների շուրջ։ Ոստիկանները իր բարեկամներն էին, վարդերես, խոշոր իրլանդացիներ, որոնց համազգեստը կարծես միշտ նեղ էր նրանց մարմիններին։

Խաղի միջարարին երբեմն Մայքլը ոստիկանատուն էր մտնում, անկիւնի մեռաղեայ կուռցից ջուր խմում եւ հարցնում՝ «Ջօ, այսօր գող բռնե՞լ ես»։ Մայթի մնացեալ տարածութիւնը Սէյնթ Ջոզէֆ կաթոլիկեան դպրոցն էր, որի կենտրոնում արհեստական կապոյտ քարայրի մէջ բարձրանում էր Մարիամ Աստուածածնի սպիտակ արձանը՝ մանուկ Յիսուսը կրծքին։ Ուր էլ լինէիր փողոցում, Սուրբ Մարիամը ներկայ էր ասոզերի մէջ, հայեացքը կաթոգին։ Մայքլին թւում էր, թէ բոլոր կաթոլիկները դրախտ են գնում, նոյնիսկ անառակ Ջերարդոն։ 178րդ փողոցից վեր սկսում էր իրական կեանքը։ Այդտեղ էին հաւաքուած բոլոր ցեղերը, սակայն տիրապետութիւնը իտալացիների ձեռքն էր։ Այդուհանդերձ, կռիւի ժամանակ ինքը միշտ էլ յոյների կողմն էր։ Հրեաները դաս էին սովորում, իսկ պորտո-ռիկացիները իսպաներէն էին խօսում։ Մնացել էին փոքրաթիւ հայերը հզօրների արանքում։

Մէնն Կիւրոսի հետ Մայքլը մտաւ նախապատրաստ եւ ինչպէս ակնկալում էր, միջոցը յագեցած էր բազմազան կերակուրներով ու համեմների թանձրը հոտով, որոնց մէջ ճչում էին կաղամբն ու սխտորը։ Մինչեւ որ Կիւրեղը վեր բարձրանար, ինքը արդէն երկու անգամ մաղլցել էր չորրորդ յարկ, տան զանգը խփել, եւ այժմ վառում էր մնացեալ յարկերի բոլոր միջանցքների լոյսերը։ Շենութիւնը իր 30 յարկաբաժիններով մի մանրակերտ Բաբելոն էր։ Անգլերէն խօսող չկար։ Բնակիչները մխեանց չէին հասկանում, յաճախ վիճում էին, անասելի աղմուկ բարձրացնում, դռները աղմուկով գոցում եւ ներսում չարունակում գոռում-գոչիւնը ուրուականների հետ, պատերի հետ։ Զորբորդ յարկը խենթանոց էր։ Տիկին Դելգլինը իր խման ամուս-

digitised by A.R.A.R.@

նուն աստիճաններից վար էր դլորել եւ ինքն իր հերթին ուխտի չէին ապաւի-նել։ Մարդոյինին, նիհար մի մենակեաց, տասնմէկերորդ անդամ է, որ իր յարկաբաժինը կրակ է տուել։ Երբ ոստիկանները գալիս են, նա նրանց ա-սում է, թէ նոր գիւռ է փորձարկում՝ ածուխից ազամանդ ստանալու հա-մար։ Զախից աջ անցնելով, երրորդ յարկաբաժնի բնակիչներն են Շնայդէր ամուսինները՝ իրենց հինգ զաւակներով, 7ից 18 տարեկան, որոնք բոլորն էլ ջուրակ են սովորում՝ աղոցի դործարանի վերածելով տունը։ Ցեռոյ գալիս են Լա Բլանշ քոյրերը, երեքն էլ պառաւած, որոնք ամբողջ օրը լոգանք են ընդունում՝ սպառելով չինութեան տաք ջուրը։ Հինգերորդը մերն է, ուր հայկական ամէնօրեայ աղմկալից կերուխումների հետեւանքով՝ տանտիրոջը հաւաքական զանգատ են գրել բոլոր վեց յարկերի բնակիչները։

Գերեզմանները լեզու ունեն, խօսում են։ Մեռելները ներկայ են ողջե-րի մէջ։ Նրանք նրանց ասում են, թէ ապագան անցեալի մէջ է, որ ներկան ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ մի անքակտելի օղակը անցեալի շղթայի։ Մեր նախա-հայրերը, ինքն իրեն խօսեց Մայքլը, ամուր դրկել են հողը, որպէսզի հողի կանչը հնչի յաւիտեան, որ լինի հաց ու գինի, որ հարսանիքի ու ծննդեան ժամանակ խմուի ննջեցեալների կենացը՝ որպէս երգում ու ապաւէն, որպէս սկիզբ նոր սերնդեւորութեան։ Այդուհանդերձ, կար քարը իր եւ Կիւրեղի միջեւ, որը սահման էր, պատուար, չօշափելի իրականութիւն։ Մայքլը քա-րի ճնշումը զգաց իր սրտի վրայ։ Մութը կոխել էր, երբ նա մեկնեց գերեզ-մանատնից։

Ֆլայնդից Նիւ Ջըրզի, այսինքն՝ Հաքենսաք, մօտ մէկ ժամուայ ճա-նապարհ էր, եթէ ինքնաշարժների խճողում չլինէր։ Մայքլը իր ճակատա-գիրը յանձնեց Ֆորդին, որը բռնեց Գրանդ Սէնթրըլ մայրուղին մինչեւ Թը-բայբորօ կամուրջը։ Այդ կէտում, փոխանակ Մէյլըր Դիգրն կառուցին մըտ-նելու, թեքուեց աջ՝ դէպի Բրաքերը ճեպուղին, ապա ձախ՝ 895։ Այդտեղից մինչեւ Թրիմանթ պողոտան, արդէն քար նետելու չափ տարածութիւն էր։ Մայքլը մէ դլանիկ վառեց։ Երբ մօտեցաւ Երրորդ պողոտային, այլեւս գիտ-ցաւ, որ տուն է վերադարձել։

Մեքենայից իջաւ ու քայլեց։ Գիշերով մաքրուել էր փողոցը։ Մութը նստել էր խանութների անկիւններում դարսուած աղբակոյտերի վրայ։ Թա-ղը նոյնն էր, աւելի խարխլած, շինութիւնները կքել էին հենց իրենց ծանրու-թեան տակ։ Տեսնես մարդիկ նորից սիրո՞ւմ են այդ գոբշ յարկաբաժիններ-ում։ Ջիակոմեթթիի պողոտամառանոցը չկար, վերածուել էր վիեթնամա-կան ճաշարանի։ Հացթխարանը կար, միայն թէ Սամի անունը ջնջել, վրան դրել էին Օալուսկի։ Բաթդէյթի անկիւնում նոր դրամատուն էին բացել՝ վեց տոկոս շահ խոստանալով խնայողական հաշիւների դիմաց։ Մայքլը կանգ-նեց ոստիկանատան առջեւ։ Կլոր ժամացոյցը կար, ոստիկանները փոխուել էին։ Ցեռ դարձաւ։ Շէնքերի պատերը մօտեցել էին, ահա պիտի թափուէին իրար վրայ։ Նեղ էր նաեւ պողոտան, աւելի նեղ՝ մայթերը։ Դպրոցի ցան-կապատից ներս, Մարիամ Աստուածածինը տակաւին գլուխը խոնարհել էր Յիսուսի վրայ, միայն թէ հիմա լուսարձակ էին դրել Սուրբ Կոյսի ոտքերի տակ։ Քարայրի պատերի ներկը թափել էր։ Հայր Մանուէլի խնդրանքով ոս-տիկանները օրական չորս ժամ փակում էին մեքենաների երթեւեկը եւ փո-ղոցը դառնում էր խաղավայր։ Եթէ կաթոլիկ չես, չես կարող խաղալ այս-տեղ, սպառնում էր Ռիչարդոն։ Ես էլ կաթոլիկ եմ, ասում էր նա, կրծքի խաչը ցոյց տալիս եւ մանանկցում խաղին։ Գամպոլինիի մեռելատունը ըն-դարձակուել էր, կողքի աղբանոցը քանդել, ընդունարանի էին վերածել։ Այդ աղբանոցը, իր քարածխի դէղերով, ինչպիսի՞ դաւադրութիւնների վկան

digitised by A.R.A.R.@

է եղել, երբ հաշտութեան ոչ մի եղբ չէին գտնում Դժոխքի Պահապաններն ու Սեւ Անգղները։ Ինչո՞ւ միայն Բրոնքսի, Նիւ Եորքի ամէնից կորած թաղն է այս, ուր ոչինչ չի պատահում, կարծես մի փակուղի լինի, որից յետո՛յ է սկսում բուն պատմութիւնը։ Այնքան միապաղաղ է Թրիմանթ պողոտայի կեանքը, որ մինչեւ այսօր էլ տարեցները, ամէն առիթով, պատմում են Լինդբերգի մանկան դէպքը 30ական թուականներին, թէ ինչպէս էֆ. Բի. Այ.-ը երկու փողոց անդին ձերբակալեց մանկան առեւանգիչ Հաուպտմանին, ամէն մէկը իւրովի գունաւորելով իր ականատեսի վկայութիւնը։ Մայքլը հրեց իր երբեմնի տան դարպասը։ Վազուց է չէին ներկել, մետաղը տեղ-տեղ ժանգել էր։ Անցորդներից եւ ոչ մէկը չճանաչեց իրեն։ Հները գնացել, նոր մարդիկ էին եկել, գրաւել նրանց տեղը։ Պորտո-ռիկացի մի տղեկ անցաւ։ Մայքլը նրա մէջ տեսաւ իրեն։ Ուզեց նրա հետ խօսել։ Տղեկը փախաւ։ Նախապատիւում 15 տարի առաջուայ կաղամբը դեռ եփում էր։ Հրաշքով, պատերը սպիտակ էին ներկել։ Վեր բարձրացաւ մինչեւ չորրորդ յարկ, կանգնեց իր տան դրան առջեւ, չհամարձակուեց զանգը սեղմել։ Ներսից հեռաստատեսի մեքենական քրքիջ էր լսւում։ Նա չփոթուեց։ Եթէ յանկարծ դուռը բացուէր, ի՞նչ պիտի ասէր։ Ցուն եմ եկել։ Ահա այդ ննջարանում եմ ծընուել։ Աչքերս գոց գիտեմ յարկաբաժնի բոլոր անկիւնները։ Մի վայրկեան յետոյ նրան համակեց օտարականի զգացումը։ Հիմա իր գլուխը դրան վերի էրֆանակին էր հասնում։ Պիտի կարծեն, թէ գող եմ կամ ինչ-որ բան։ Իսկ եթէ յանկարծ տատը կանգնի սեմին։ Վախ, հավրո՛ւս։ Նա զգուշացուեց, մի քայլ նահանջեց, շուռ եկաւ, շորս ոտն նայեց, աստիճաններից արագ իջաւ ցած, կտրեց դահլիճը, հրեց դարպասը։ Փողոցում տղաները բէյս բոլ էին խաղում էլեկտրական լոյսերի տակ։ Գնդակը չէր երեւում։ Բաթբոլը ի զուր օդն էր հարուածում։ Մօտակայ փողոցից լսուեց հրդեհաշէջ մեքենայի ահազանգը, որը հեռագնաց կորաւ վերին թաղամասի ազիքներում։ Դիմացի մայթի վրայ մի երիտասարդ արեղայ դրոյցի էր բռնուել մի ծեր կնոջ հետ՝ գլխով չարունակ վաւերացնելով իր լսածը։ Քիչ վարը, ոստիկանական մի մեքենայ, գլխից կարմիր շանթեր արձակելով՝ դէպի վեր սուրաց, ըստ երեւոյթին փութալով հրդեհի վայրը։ Մով գիտէ։

Ամէն ինչ փոխուել է եւ ոչինչ է փոխուել։ Այս իմ տունն է, այս փողոցը, այս մարդիկ, այս գորշ շինութիւնները։ Կիւրեղը հիւր էր, հայրս մի քանի տուն փոխեց, սակայն Բրոնքսը միակ վայրն է աշխարհում, որ իմն է, իմ հարազատը, թէկուզ եւ անցորդները չճանաչեն ինձ։ Մայքլը յենուեց պատին, ձեռքերը տարտամ գրպանները խոթեց եւ մտածեց, որ չուտով ձիւնը կ'իջնի եւ ամբողջ փողոցը զահուկավայրի կը վերածուի։ Ի՞նչ եղաւ իմ սահնակը, կարմիր երիզով, որ Կաղանդին ընծայ էի ստացել։ Հայրս ինձ ճանաչեց, ես իմ հօրը չճանաչեցի։ Ես աւելի ճանաչեցի Կիւրեղին, որովհետեւ ժամանակին երկուսս էլ անմեղ էինք։ Նրա երազները իմ երազներն էին, սակայն նրա ատուածները տարբեր էին, խոժոռ, վիրաւոր ատուածներ։ Կիւրեղի համար Ամերիկան ժամանակաւոր էր։ Այդ ազրիւրն էր իր տառապանքի ու փրկութեան։ Այդ բոլորը ես չգիտէի, հիմա մասամբ գիտեմ եւ լաւ է, որ ամբողջութիւնը չգիտեմ, այլապէս ես ինձ խորթ պիտի զգայի այս փողոցում։ Գնդակը դիպաւ պատին, ընկաւ Մայքլի ոտքերի մօտ։ Նա կռացաւ, վերցրեց գնդակը, մի քանի անգամ ամուր սեղմեց իր ափերում, ապա նետեց մայթի պռունգին կանգնած նիհար, սկնոցաւոր պատանուն։ Ցաղը չարունակուեց։ Մայքլը պոկուեց պատից, մի անգամ էլ հայեացքով չոյեց իր մանկութեան դարպասը եւ հանդարտ քայլեց փողոցն ի վար։

ՑԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ

digitised by A.R.A.R.@



Է. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՃԱՆԱՉԵՆՔ ՄԵՐ ՄԵԾ ՀԱՐԵՒԱՆԻՆ

Ցայտնի ռուս մատուռական Վալերի Բրիւսովը, որ հայ մշակոյթի մասնագէտ էր համարւում, մէկ առիթով գրել է. «Հայաստանի պատմութիւնը նոյնքան ուշադրութեան է արժանի, որքան մարդկութեան մշակոյթի մէջ ինքնուրոյն ներդրում կատարած բոլոր նշանակալից ժողովուրդների պատմութիւնները, առանց բացառելու ո՛չ եգիպտացիներին, ո՛չ հելլէններին, ո՛չ հռոմէացիներին եւ ոչ էլ ժամանակակից Եւրոպացի ժողովուրդներին»: Նման յայտարարութիւն անելու համար պէտք էր ճանաչել ու սիրել հայ ժողովրդին: Եւ ռուս մատուռականին մեծ պատիւ է բերում այն փաստը, որ նա ուսումնասիրել ու ճանաչել է մի ժողովրդի, որի հետ կապուած չէր ո՛չ քաղաքականօրէն եւ ոչ էլ ցեղապէս: Իսկ մենք արդեօք ճանաչո՞ւմ ենք ռուսներին, ա՛յն ռուսներին, որոնց հետ այդքան սերտօրէն կապուած ենք եղել անցեալում եւ դեռ կապուած պիտի լինենք ապագայում քաղաքական կապերով: Ես, որ ռուսական կրթութիւն եմ ստացել եւ շատ մօտիկից չփուել եմ ռուս մատուռականութեան հետ, կարող եմ վստահեցնել, թէ ռուսներին մենք բոլորովին չենք ճանաչում՝ ո՛չ հայրենիքում եւ ոչ էլ, առաւել եւս, Սփիւռքում: Ռուսները ո՛չ «Դեկաբրիստներն են» եւ ոչ էլ Դոբրոլիւբովը եւ Չերնիշեւսկին, որոնց ուսումնասիրում են Խորհրդային Միութեան դպրոցներում եւ որոնցից իբր թէ Ռուսաստանը ուղիղ ճանապարհով գնաց դէպի Հոկտեմբերեան Յեղափոխութիւն: Դեկաբրիստները եւ Դոբրոլիւբովները ամբողջովին արտասահմանից սնուած եւ Ռուսաստանը արտասահմանի օրինակով վերափոխողներն էին: Եւ հենց դրա համար էլ նրանք ռուսներ չէին: Սա շատ կարեւոր է մեզ համար, որովհետեւ այսօր էլ Ռուսաստանում կան «ռուսներ» եւ «եւրոպացիներ», որոնց միջեւ գոյութիւն ունի բախում Ռուսաստանի ապագայի նկատմամբ եւ այդ բախումը կարող է ապագայում քաղաքական լուրջ խնդիր դառնալ:

Այսօր, Դեկաբրիստների գերը Ռուսաստանում կատարում է ակադեմիկոս Սախարովը, որը ամբողջովին արտասահմանից է սնանում իր բարոյական սնունդը եւ արտասահմանի ժողովրդավարական կարգը կ'ուզէր տեսնել Ռուսաստանում: Սակայն շատ աւելի ռուս է արտասահմանում ապրող Սոլժենիցինը, որի բարոյական սնունդը զուտ ռուսական է եւ որը փորձում է գտնել Ռուսաստանի յատուկ, ռուսական ճանապարհը: Այսօր մենք ականատես ենք, թէ ինչպէ՛ս Գարսկաստանում փլուեց Շահի անսասան թուացող

digitised by A.R.A.R.@

ամբոցը, ու փլուեց միայն նրա համար, որ այդ ամբոցը պարսկական չէր, որ նա, որոշ իմաստով, կառուցուած էր եւրոպական օրինակով։

Այս փոքր նախաբանից յետոյ ուզում եմ խօսել այն մարդու մասին, որի աշխատութիւնների հետ Հայաստանում ծանօթ են միայն նեղ մասնագէտները, իսկ շատերը նրա անունը անգամ չեն լսել։ Ինչ մնում է Սփիւռքին, ապա այստեղ նրա մասին ընդհանրապէս ոչինչ յայտնի չէ։

Այս մարդը Իվան Վասիլեւիչ Կիրեեւսկին է։

Մի քանի խօսք նրա կենսագրութիւնից։

Իվան Կիրեեւսկին ծնուել է 1806 թուականին, Ռուսաստանի Դոլբին գիւղում եւ դաստիարակուել է ռուս բանաստեղծ Վասիլի Ժուկովսկու մօտ։ Արդէն 10 տարեկան հասակում նա լաւ ծանօթ էր ֆրանսիական դասական գրականութեան, գիտէր գերմաներէն եւ ուսումնասիրում էր ռուս գրականութիւնը։ 1822 թուականին Կիրեեւսկու ընտանիքը տեղափոխուում է Մոսկուա եւ նրանց տունը դառնում է գրականագէտների եւ մտաւորականների կենտրոն։ Նրանց տանը հաւաքւում եւ գաղափարներ էին փոխանակում Գոգոլը, Զասդաւեւը, Խոմեակովը, Բարատինսկին եւ ուրիշներ։ Շուտով Կիրեեւսկին մեկնում է Բերլին ուսանելու, որտեղ ո՛չ միայն լսում է Հեգելի դասախօսութիւնները, այլեւ՝ մտերմանում նրա հետ։ Հրաժարուելով զինուորական ծառայութիւնից, իր ապագայ ծրագրերի մասին նա գրում է ընկերոջը.

«Մի կարծիր, որ ես մոռացել եմ, որ ռուս եմ եւ որ հրաժարւում եմ իմ հայրենիքին ծառայելու պարտականութիւնից։ Ո՛չ, ո՛չ, ես ամբողջովին պատկանում եմ հայրենիքիս։ Ես կարող եմ գրականագէտ դառնալ եւ տպակցել մեր ժողովրդի լուսաւորութեան գործին, մի՞թէ սա մեծագոյն շնորհակալ աշխատանք չէ»։

1831 թուականին, Կիրեեւսկին վերադարձաւ Մոսկուա եւ սկսեց հրատարակել «Եւրոպացի» հանդէսը, որը ծանօթացնում էր ռուս ընթերցողին արեւմտեան մշակոյթի հետ։ Հանդէսում աշխատակցում էին այն ժամանակուայ Ռուսաստանի լաւագոյն գրողները, այդ թւում նաեւ՝ Պուշկինը։ Սակայն շուտով, դրական հակառակորդների մատնութեան պատճառով, հանդէսը արգելուեց։

40ական թուականներին, Կիրեեւսկին սկսում է հրատարակել «Մոսկուացի» հանդէսը, որտեղ արտայայտում է իրենց «սլաւոնասէրների» խմբակի տեսակէտները։

Կիրեեւսկին մահացաւ 1856 թուականին, 50 տարեկան հասակում։ Այսպիսով, Կիրեեւսկու մանկութիւնը եւ պատանեկութիւնը համընկաւ Ալեքսանդր Առաջինի թագաւորութեան հետ, իսկ հասուն տարիները նա ապրեց Նիկոլայ Առաջինի թագաւորութեան ժամանակ։ Կիրեեւսկու, ինչպէս նաեւ այն ժամանակուայ բոլոր մտաւորականների հոգեկան զարգացման վրայ, հաւանաբար, վճռական ազդեցութիւն թողեց Դեկաբրիստների ապստամբութիւնը, որը տեղի ունեցաւ 1825 թուականին եւ որը բաժանեց Ալեքսանդր Առաջինի ժամանակաշրջանը Նիկոլայ Առաջինի ժամանակաշրջանից։ Զինուորական դաւադրութիւն պատրաստելով՝ Դեկաբրիստները փորձեցին ապստամբութեան միջոցով սահմանադրութիւն մտցնել Ռուսաստանում։ Նրանք երբեք չէին խորհում Ռուսաստանի յատուկ ճանապարհի մասին, երբեք հաշուի չէին նստում ռուս ժողովրդի յատուկ նկարագրի հետ եւ ուզում էին մէկ հարուածով Ռուսաստանը դնել եւրոպական երկրների շարքին։ Բայց Դեկաբրիստները կործանիչ պարտութիւն կրեցին։ Ո՛չ ժողովուրդը եւ ոչ էլ եւրոպական կրթութիւն ստացած մտաւորականութիւնը չպաշտպանեց նրանց։ Դե-

digitised by A.R.A.R.@

կաբրիստների կողքին ոչ ոք չկար։ Խորթ էին Դեկաբրիստների եւրոպական դաղափարները Ռուսաստանի համար։ Ռուսաստանի իրականությունը շատ աւելի բարդ էր, քան կարելի էր ենթադրել մինչեւ Դեկաբրիստների Սենատի հրապարակային ողբերգական ցոյցը, որը, չդիտես ինչու, մինչեւ այսօր ապրատամբություն է կոչւում։ Եւրոպական բնոյթ կրող այս ցոյցը տեղի ունեցաւ Ռուսաստանի առաջին եւրոպականացնող Պետրոս Մեծի մահից 100 տարի անց։ Պատմության համար սա մեծ ժամկէտ չէր։ Այսօր մենք տօնում ենք Ստալինի ծննդեան 100ամեակը, բայց Ստալինը դեռեւս պատմություն չէ, դեռեւս ապրում են նրա կողմնակիցները եւ նրա ոգին՝ Խորհրդային Միությունում։ Այնպէս որ՝ Դեկաբրիստների ելոյթը ո՛չ միայն պատահական չէր, այլեւ՝ հենց Պետրոսի կողմից կատարուած աղնուական կալուածատէրերի մօրուքների պարտադիր ոտփման հետեւանքները։ Բայց Պետրոսին չէր յաջողուել մօրուքների հետ միասին ապրել նաեւ ռուս ժողովրդի աւանդական ուղղափառությունը եւ սլաւոնասիրությունը, ու Դեկաբրիստները պարտուեցին։

Նրանց պարտությունից յետոյ սկսուեց ռուս մտաւորականության բուռն զարգացումը։

Այդ ժամանակ Պուշկինը աւարտել էր ռուսական գրական լեզուի ստեղծման ընթացքը։

Տնունդ էին առել եւրոպական մակարդակի զարգացում ունեցող մտաւորականները։

Դեկաբրիստների մասին ոչինչ չէին գրում, նրանց մոռացության էին մատնել, բայց նրանց ազդեցությունը դեռեւս կար։

Կիրեեւսկին յեղափոխական սերնդի մտաւորական էր։ Եւ հենց սա է մեզ համար կարեւոր, որ Կիրեեւսկին ու նրա նմանները՝ Զասլաւսկը, Խոմեակովը, Ստանկեւիչը, Գերցենը, այլ ոչ թէ Դոբրոլիւբովը եւ Չերնիշեւսկին էին կանգնած ռուս մտաւորականության ակունքներում։

Ի՞նչ է նշանակում Ռուսաստան,— ահա՛ այն հարցը, որի պատասխանը առաջին հերթին որոնում էին նրանք։ Իսկ նրանց երկրորդ հարցը հետեւեալն էր. «Ինչպէ՞ս պէտք է Ռուսաստանը վերաբերուի Արեւմուտքին, ինչպէ՞ս է նա վերաբերուել անցեալում եւ ինչպէ՞ս է վերաբերւում ներկայում»։

Այս երկրորդ հարցը Կիրեեւսկու սերնդի համար շատ պատճառներով անբաժանելի էր առաջին հարցից։ Նախ եւ առաջ հենց այն պատճառով, որ նրանք բոլորը արեւմտաեւրոպական կրթություն ստացած մարդիկ էին եւ, հետեւաբար, Արեւմուտքի նկատմամբ Ռուսաստանի վերաբերմունքից կախուած էր նաեւ իրենց տեղը Ռուսաստանի ճակատագրում։ Հետագայում, այս հարցերի պատասխանների համաձայն, ռուս մտաւորականները բաժանուեցին «սլաւոնասէրների» եւ «արեւմտասէրների»։ Սակայն, դեռեւս 1839 թուականին, Իվան Կիրեեւսկին գրում էր.

«Ռուսաստանի անցեալի եւ ներկայի փոխյարաբերության հարցը այն հարցերից չէ, որոնց մասին մենք կարող ենք ունենալ այս կամ այն կարծիքը, ինչպէս, օրինակ, գրականության, արուեստի կամ արտաքին քաղաքականության մասին։ Այս հարցը մեր էության մասն է կազմում, որովհետեւ մտնում է մեր կեանքի մէջ ամէն մի վայրկեան»։

Այս հարցի ձեւակերպման մէջ տարակարծություններ չկային, բայց հարցի պատասխանը գտնելու համար՝ Ռուսաստանի մտաւորականությունը գիշերներ էր լուսացնում վէճերի մէջ, Կիրեեւսկու, Օգարեւի եւ Զասլաւսկի տներում։ Այն ժամանակ Ռուսաստանի եւ Արեւմուտքի փոխյարաբերության հարցը գլխաւորապէս գրւում էր պատմական տեսանկիւնից՝ Շելինգի եւ Հեգելի

digitised by A.R.A.R.@

դելի փիլիսոփայութեան ոգով։ Համարում էր, որ Ռուսաստանը զուտ ռուսական ճանապարհով զարգացել է կիևեան եւ մոսկովեան ժամանակաշրջաններում, իսկ յետոյ եկել է Պետրոսը եւ շեղել Ռուսաստանը ռուսական ճանապարհից։ Գատասխանելով Խոմեակովի «Նորի եւ հնի մասին» յօդուածին, Կիրեեւսկին այսպէս է ձեւակերպում «Նորի» եւ «հնի» հարցը.

«Սովորաբար հարցը առաջադրւում է այսպէս. հին Ռուսաստանը, որի կարգն ու կանոնը կրում էին ռուսական բնոյթ, աւելի լա՞ւ էր, թէ վատը նոր Ռուսաստանից, որտեղ կարգերը եւրոպականացուած են։ Եթէ նախկին Ռուսաստանը ներկայ Ռուսաստանից լաւ էր, ապա անհրաժեշտ է մաքրել Ռուսաստանը նրան խանգարող արեւմտեան ազդեցութիւնից։ Իսկ եթէ հին Ռուսաստանը ներկայ Ռուսաստանից վատն էր, ապա անհրաժեշտ է ուժեղացրնել արեւմտեան ազդեցութիւնը եւ ոչնչացնել զուտ ռուսականը»։

Ներկայի եւ անցեալի փոխյարաբերութեան այս հարցում՝ Կիրեեւսկին բացայայտօրէն անցեալի կողմն էր։ Այսօր նրանք կ'անուանուէին պահպանողական, ինչպէս, ի միջի այլոց, անուանում է նրան Խորհրդային Հանրագիտարանը, սակայն դա սխալ է, որովհետեւ նա ո՛չ թէ անցեալում եղածի կողմնակիցն էր, այլ՝ անցեալում պարունակուող հնարաւորութիւնների կողմնակիցը։ Կիրեեւսկին համարում էր, որ ռուսական պատմութեան սկզբից ի վեր ռուս ժողովուրդը հոգեպէս դեկավարում էր ուղղափառ եկեղեցիով եւ քրիստոնէութիւնը ներծծուել էր հասարակական կեցութեան բոլոր բնագաւառների մէջ եւ կազմում էր ռուս ժողովրդի գլխաւոր պոտենցիալ արժէքը։ Նա գրում էր.

«Ռուսաստանը չէր փայլում ո՛չ արուեստագէտներով եւ ոչ էլ գիտնականներով։ Այս ուղղութեամբ զարգանալու համար նա ժամանակ չունէր, իսկ ուրիշներից ընդօրինակելուց հրաժարուեց, որովհետեւ դա հակասում էր նրա քրիստոնէական ոգուն։ Բայց նրա մէջ պարունակւում էր ճիշդ զարգացման առաջին պայմանը, որը միայն ժամանակ էր պահանջում։ Նրա մէջ կուտակուել էր գիտութեան ա՛յն շինարար սկզբունքը, որը քրիստոնէական փիլիսոփայութեան միջոցով գիտութիւնները դնում էր ճիշդ հոգի վրայ»։

Սակայն Կիրեեւսկին չէր համարում, որ ճիշդ կը լինէր ամբողջովին կտրուել Արեւմուտքի ազդեցութիւնից եւ վերակառուցել հին Ռուսաստանը։ Նա գրում էր.

«Եթէ հինը այսօրուանից լաւ էր, դա դեռ չի նշանակում, որ հինը լաւ կը լինէր նաեւ այսօր։ Այն՝ ինչը լաւ էր որոշ պայմաններում, կարող է վատ լինել մէկ ուրիշ դէպքում։ Եւ եթէ հինը այսօրուանից աւելի վատն էր, դա դեռ չի նշանակում, որ նրա որոշ մասերը, իմքնըստինքեան, չեն վերածուի աւելի լաւ բանի։ Երիտասարդ կաղնին իր տարիքի ուռենուց ցածր է։ Ուռենին երեւում է հեռուից, արագ է անում, արագ ստուեր է տալիս ու լաւ վառելանիւթ է։ Բայց մենք, անշուշտ, լաւութիւն չենք անի կաղնուն, եթէ նրան ուռենի պատուաստենք»։

Շատ զգոյշ էր կշռադատում Կիրեեւսկին ալաւոնասիրութեան լաւ եւ վատ կողմերը ու երբեք չէր հրաժարւում Արեւմուտքից, որպէս կրթութիւն ստանալու աղբիւրից։

«Եթէ մենք հրաժարուէինք Եւրոպայից, — *առում է նա*, — ապա մեր ազգայնականութիւնը յեսամնացութիւն պիտի նշանակէր, որովհետեւ եթէ կրթութեան համար ներքին կարողութիւնները բացակայում են, հապա որտեղի՞ց վերցնենք մենք այդ կրթութեան աղբիւրը, եթէ ոչ՝ Եւրոպայից։ Մի՞թէ եւրոպական կրթութիւնը հին աշխարհի լուսաւորութեան արդիւնքը չէ»։

Մի ինչ-որ ձեւով, առանց ռուսականութիւնը կորցնելու, մոնել եւրո-

digitised by A.R.A.R.@

պական ընտանիքի մէջ՝ սա էր Կիրեեւսկու երազը։ Եւ հենց այդ ճանապարհի վրայ էլ Կիրեեւսկին հիմնեց սլաւոնասիրական փիլիսոփայութիւնը։ Կիրեեւսկին համարում էր, որ եւրոպական մշակոյթը ամենասկզբից ունէր մի մեծ թերութիւն։ Բոլոր հարցերում նա յենւում էր տրամաբանութեան ուժի վրայ։ Եւ այդ տրամաբանութիւնը, վերլուծութեան համար անհրաժեշտ այդ սառը դատողութիւնը, ի վերջոյ, քայքայեց բոլոր այն կրօնական, բարոյական ու հոգեկան արժէքները, որոնք յենակէտեր էին հենց եւրոպական քաղաքակրթութեան համար։ Նա գրում է.

«Բազմադարեան սառը վերլուծութիւնները քանդեցին եւրոպական բաղդատակրթութեան այն սիւները, որոնց վրայ նա կանգնած էր սկզբից ի վեր։ Ու նրա սեփական արմատները, որոնցից նա ծնուել էր՝ օտար դարձան նրա համար եւ սկսեցին հակասել նրա վերջին արդիւնքներին։ Տրամաբանութեան սուր դանակը կտրեց ծառը արմատներից եւ սկսեց կառուցել օդային դիալեկտիկական կառոյցներ»։

Կասկած չկայ նրանում, որ այստեղ Կիրեեւսկին ի նկատի ունի Հեգելի փիլիսոփայութիւնը, որը բարձրացրեց տրամաբանութիւնը բացարձակի մակարդակի վրայ եւ յայտարարեց, որ տրամաբանութիւնը ո՛չ միայն եւրոպական, այլեւ համաշխարհային մշակոյթի պսակն է։

Մերժելով Հեգելի այդ թեզը, Կիրեեւսկին, այնուամենայնիւ, համաձայնւում էր, որ Հեգելի փիլիսոփայութիւնը եւրոպական մշակոյթի եզրափակիչ արդիւնքն էր։ Սկզբից ուսումնասիրելով, իսկ յետոյ էլ քննադատելով Հեգելի փիլիսոփայութիւնը, Կիրեեւսկին յանգեց սլաւոնասիրական գաղափարին։ Այդ ճանապարհի վրայ նա մենակ չէր։ Իր ժամանակակից ռուս մտաւորականութեան մասին նա գրում էր.

«Նրանց մեծ մասը, ովքեր ծանօթ էին արեւմտեան մտքի զարգացման հետ, համոզուեցին, որ եւրոպական կրթութիւնը բաւարար չէ, որ եւրոպական միտքը չի գնահատում լուսաւորութեան այն սկզբունքները, որոնցով նախկինում ապրում էր Ռուսաստանը եւ որոնք այսօր էլ, անկախ եւրոպական ազդեցութիւնից, գոյութիւն ունեն»։

Կիրեեւսկու սլաւոնասիրութիւնը ո՛չ թէ եւրոպական մշակոյթի ժխտումն էր, այլ՝ ռուսական սկզբունքների եւրոպականացումը։ Այսինքն՝ ինչպէս այսօր կ'ասէին. ձեւով եւրոպական, բովանդակութեամբ ռուսական։ Եւ սա ռուս ժողովրդի կարեւոր յատկանիշներից մէկն է։ Ռուսական սոցիալիզմը, ռուսական կոմունիզմը, ռուսական ժողովրդավարութիւնը, ռուսական ստրկատիրութիւնը, ռուսական բռնութիւնը եւ շատ ուրիշ ռուսական երեւոյթներ խիստ տարբերւում են նոյն երեւոյթների եւրոպական տարբերակներից։ Ես կարծում եմ, որ առիթ կ'ունենամ աւելի մանրամասնօրէն խօսելու ռուսական սլաւոնասիրութեան մասին, որովհետեւ այդ շարժումը Ռուսաստանում վերսկսուել է եւ ինձ թւում է, որ դա ամենակարեւոր շարժումներից մէկն է, եթէ չասենք ամենակարեւորը։ Այդ շարժման կատաղի թշնամիներն են հրահանները, ինչը իր հերթին վկայում է, որ շարժումը կարեւոր է։

Սլաւոնասիրութեան գաղափարները կարեւոր են մեզ համար՝ ո՛չ միայն որպէս մեծ հարեւանին ճանաչելու միջոց, այլեւ՝ զուտ հայկական խմաստով, որովհետեւ մենք էլ յաճախ ուզում ենք նմանուել եւրոպացիներին, առանց հաշիւ տալու մեզ, թէ մեր ժողովուրդը բոլորովին ուրիշ նկարագիր ունի։ Իսկ եթէ որոշ երկրներում, օրինակ Ֆրանսիայում, հայերը եւրոպական նկարագիր են ստացել, ապա դա մեր ողբերգութիւնն է, այլ ո՛չ թէ առաջադիմութիւնը։

Է. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ

ԴԻՑԱՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

Արհեստագիտական դարու հեռահետ աւելի արագ թաւալող եղափոխութիւնները, մէկ կողմէ երբ կարելիութիւններու ընդարձակ դաշտեր կը բանան մարդկութեան առջեւ, միւս կողմէ, սակայն, աւելի ցցուն կը դարձնեն կարգ մը երեւոյթներ, որոնց լուծումը ակնյայտօրէն ո՛չ միայն անկարելի կը թուի ըլլալ ներկայ միջոցներով, այլեւ պահանջը կը զգացնեն երկու կարելիութիւններու, որոնցմէ երկուքն ալ, խորքին մէջ, կրնան առաջին ակնարկով թուիլ նոյնօրինակ։

Այսպէս, երբ մէկ կողմէ լուծումներէ փախուստ տուող խուճապ մը ստեղծուած է անձնասպանութեան յարաճուն յաւելումով, ինքնակործան արարքներու խճողումով, դէպի բնութիւն վերադարձով, թմրեցուցիչներու առատ գործածութեամբ, միւս կողմէ՝ յաւելեալ պահանջը կը զգացուի հարցերը զէթ հարիւրութեան աստիճանաչափ չեղելով՝ անոնց աւելի հիմնական եւ սկզբնական արմատները փնտռելու։

Արդարեւ, երբ կեանքը, ապրիլը աւելի քան երբեք հեշտ է եւ ապառնալիքներէ զերծ, հարց կը դրուի, թէ ապա ինչո՞ւ մահը անլուծելի կը մնայ։ Երբ մարդ՝ քաղքենի անկատար անհատականութեան զգաթնակէտին կանգնած է, ապա ինչո՞ւ հաղորդակցութիւնը կը դառնայ դժուար։

Եթէ սեռայնութիւնը թոյլատու պայմաններու ներքեւ այսքան ընդհանրացած է, ապա ինչո՞ւ մարդ-անհատ-քաղքենիմենաւորիկ ամբողջութիւնը ո՛չ միայն չի կրնար ձերբազատուիլ անկէ, ո՛չ միայն ինքն իրմով չի կրնար սերնդագործել, ո՛չ միայն ինքնաբաւ չէ, այլեւ՝ ենթակայ մէկ գերագոյն խորհուրդի, որ կը ճշդէ իր արարքներուն ներքնացած ընթացքը եւ որմէ չի կրնար խուսափիլ։

Այս ձեւով՝ երկու պարագաներն ալ, այսինքն՝ թէ՛ փախուստի, թէ՛ արմատները փնտռելու ճիգերը, դրական տրամաբանութեան (positivisme logique) տէր մարդոց կը թուին փախուստի միջոցներ։

Բայց հարցը կը մնայ հարց։

Արդարեւ, ներկայ միջոցները երկու անյայտ ունեցող խնդիրներէն կրնան լուծել միայն մէկ անյայտ եւ միւսը ստիպուած են անտեսել։

Դրական տրամաբանութիւնը անցեալին մէջ դեգերող որեւէ մէկ փնտռուք կ'ամբաստանէ փախուստով եւ, յաւելեալ պարագային՝ պատմականութեամբ (historicisme)։ Անոր համար դրականը՝ մարդկային անսայթաք տրամաբանութեան վրայ յենելով կարենալ դիմադրելու եւ լուծելն է գոյութիւն ունեցող կամ ունենալիք բոլոր հարցերը։ Սակայն, պատմական փնտռտուքով փախուստին, թէ ընթացիկ կեանքի պարտաղրանքներէն փախուստին համար յատակ բանաձեւում մը չունի։ Փախուստը չի բացատրուիր, կ'ամբաստանուի։ Փնտռտուքը փախո՞ւստ է եւ փախուստը այլ տեսակ մէկ փնտռտո՞ւք. մինչեւ այն ատեն, որ գիտական ընդունուած չափանիշներուն չի հպատակիր ապիմաստ է։ Ապիմաստ է նմանապէս գիտահոգեբանական, պատմական եւ աշխարհահայեցքային տեսանկիւններէ հարցերը լուծելու մտեցման եղանակը։ Մարդը, ապագայապաշտ, ինքնաբաւ, պատմութիւն կերտող, տրամաբանական մարդ է։ Ազատութիւն, սէր, ատելութիւն եւ ճշմար-

digitised by A.R.A.R.@

տութիւն յղացքները պէտք է ամէն դը-նով, ուշ կամ կանուխ, առարկայացնել, պանոնք շրջապատող վերացականութե-նէն ձերբազատել եւ գիտականացնել։ Այս ձեւով՝ առարկայականը, որ երկու անյայտ ունեցող խնդրոյն միայն մէկ ե-բեան է, կ'անջատուի երկրորդ անյայ-տէն՝ ենթակայականէն եւ առանձին կեանք մը կը վարէ։

Բայց քանակական տարրերու համար որդեգրուած արժէչափերը կարելի չէ պատշաճեցնել որակական յղացքներու։ (Երկու մէթր սէր, մէկ քիլօ համբերու-թիւն, մէկ քիլոմէթր հաւասարութիւն)։ Այդ մէկը կարելի է ընել վերացումով եւ այդ վերացումին սահմանումը միշտ կը պակսի մեզի։ Ձգտածգումներ (extensivité) կարելի է չափել, ներգծումներ (intensivité)՝ ո՛չ։

Եւ դարձեալ երկու անյայտ ունեցող խնդիրները, որպիսին է պարագան աշ-խարհի վրայ գտնուող բոլոր խնդիրնե-րուն, որովհետեւ ներգոյ տարականոն-ներ ունին անոնք, կ'ունենան մէկ ան-յայտի, եւ այդ ալ՝ մասնակի լուծում։

***

Քսաներորդ դարու մտածողութեան վրայ Հիւսէրլի ազդեցութիւնը եղաւ ան-սահման։ Արդարեւ, իր երեւութաբանու-թեամբ (phénomènologie) ան արդար նախահայրը կրնայ համարուիլ արդի հա-գեբանութեան։ Ֆրէյտի բառապիտու-թիւնը, մտայղացքները կը կրեն Հիւսէր-լի մեծ ազդեցութիւնը։ Վերացական յը-ղացքներու գիտականացման, առարկա-յացման եւ քանակականացման մէջ իր դերը եղաւ անուրանալի։ Օրինակ մը տա-լու համար, կը բաւէ նշել, որ անկիւնա-դարձային կարեւորութիւն ունեցող է յը-ղացքը (Das Sein) ան փոխարինեց այն որ է (Die Seiende) յղացքով, եւ ճշմար-տութիւնը (Wahrheit) փոխարինեց ա՛յն՝ որ իրական է (Die Währe) յղացքով։

Եւ հոգեբանութիւնը դրուեցաւ բժշկա-կան նշդրակին ներքեւ։

Այսօր, համալսարաններու բացարձակ մեծամասնութիւնը հոգեբուժութիւն ու-սանելու նախապայման կը համարէ բժշկ-կական ուսումը։

Բայց հոգեբանութիւնն ալ ունեցաւ իր արագ մաղլցումն ու արագ անկումը։

Վերջերս տեսաւին (1979), «Թայմ» անգլիական շաբաթաթերթը ամբողջ յօդ-ուած մը կը նուիրէր «Հոգեբուժութեան ճգնաժամը» (depression) նիւթին։ Դլխաւ-որ եզրակացութիւնը, որուն յանդած էր յօդուածը, ա՛յն էր, որ «Եոյի հաւաքա-կանութիւն մը ստեղծուած է եւ այդ հոը դոց դրոյթի մը վերածուած։ Մարդիկ պարզապէս չէին կրնար այլեւս հաղոր-դակցիլ, յարաբերիլ, հաւաքական կեան-քի մէջ նետուիլ։

Այս երեւոյթը մեզ կը տանի մինչեւ նախամարդ։ Բայց նախքան հոդ հասնի-լը, պիտի ուզէինք մեր յաջորդ նիւթին հետ սերտ աղերս ունեցող «Խաղ» յղաց-քին ընդմէջէն ներկայացուած երեւոյթ մը պարզել։

Անոնք, որ ծանօթ են ամերիկեան պատկերասփիւռին, անպայմանօրէն հան-դիպած պիտի ըլլան Համփթի-Տամփթիի տիպարին։ Համփթի-Տամփթին ամբող-ջական եւ միացեալ հաւկիթ մըն է։ Պատ մը սակայն, քանակականօրէն հա-մաչափ կղմինտրի շերտերով կազմուած արուեստական ամբողջութիւն մըն է, մասնագիտացման եւ գիւանակալական կարգերու արդիւնք։ Պատ մը ամբողջա-կան հաւկիթներու մահացու թշնամին կրնայ ըլլալ։ Ան կը ձեւացնէ ամբողջա-կան ըլլալ, երբ չէ։ Կ'ընդօրինակէ երե-ւոյթ մը՝ առանց զայն կատարելապէս իւրացնելու։ Իւրացումն ալ անկարելի է։ Հետեւաբար, Համփթի-Տամփթին կը խի-զախէ պատը։ Արդիւնքը կ'ըլլայ ա՛յն՝ որ ան իր ամբողջութիւնը կը կորսնցնէ կատ-ուելով, կոտորակուելով, քայքայուե-լով։

Քսաներորդ դարու երկրորդ կէսին դիցաբանութի՞ւնը։

Պէտք է Համփթի-Տամփթին դիտել իբ-րեւ քսաներորդ դարու երկրորդ կէսի մարդ։ Ան բնախօսականօրէն ամբողջա-կան է։ Բնախօսականօրէն նաեւ տակա-ւին ունի որոշ չափով խիզախելու ոգի,

digitised by A.R.A.R.@

թէկուզ եւ իր կարծանման գնով։ Ջունի սակայն, երկար դարերու եղափոխութեան ազդեցութեան իրրեւ արդիւնք՝ իր ամբողջականութիւնը կազմող տարրերուն զիտակցութիւնը։ Կորուած է անկէ։ Կորուած է նաեւ իր ամբողջականութեան գիւրաբեկութեան զգայումէն, գիտակցութենէն։ Դիւրաբեկութեան գիտակցութիւնը, որոշ իմաստութիւն եւ հեռատեսութիւն կ'ենթադրէ։ Այդ երկուքն ալ չունի։ Բնախօսականօրէն ամբողջ ըլլալ հանդերձ, գիտէ, թէ ամբողջական չէ։ Գիտէ նաեւ, թէ փչրուելէ ետք, կարելի չէ այլեւս վերստին ամբողջ ըլլալ, նոյնիսկ մասնագիտական եւ դիւանակալական ծրագրումներու միջոցաւ։

Գիտակցութեան տուեալներու հիման վրայ լման եղող մարդը, ուրեմն, կը զգա՛յ ամբողջանալու կարիքը։ Նսի հաւաքականութեան պակասող ատոմածային ինքնաբաւութեան մանրանկարը կը փորձէ միջոցը վերստին համակարգուելու։

Ի՞նչ է, սակայն, այն պակասը, զոր կ'ուզէ լրացնել։

Եւ ի՞նչ միջոցներով։

⁂

Գլատոն իր «Խնջոյք» (Banquet) գործին մէջ Արիստոփանի բերնով կը պատմէ հետեւեալ առասպելը.

«Անցեալին, մարդկային բնութիւնը այսօրուանին պէս չէր։ Տարբեր էր։ Մարդկութիւնը նախապէս բաժնուած էր երեք տարրեր տեսակներու եւ ոչ երկու, ինչպիսին է պարագան այսօր։ Էգ եւ արու սեռերու կողքին՝ գոյութիւն ունէր երրորդ մը, որ երկուքին խառնուրդն էր։ Այս տեսակը այն ատեն Անտրոգին կը կոչուէր։ Անտրոգինոներու իրաւանչիւրին մարմինը կլորաձեւ երեսոյթ մը ունէր։ Անոնց կռնակն ու կողերը բոլորակաձեւ էին։ Չորս ձեռք ունէին եւ նոյն թիւով սրունքներ։ Երկու դէմք՝ կատարելապէս յարեւ նման։ Երկու սեղմնագործական օրգանոներ, եւայլն։ Զուտ, Անտրոգինոները երկուքի բաժնեց, ճիշդ այն ձեւով, ինչպէս, պահածոյ ընելու համար, երկուքի կը բաժնեն արմաւները»։

«... Այս բաժանումը կատարուելէն ետքէ, իւրաքանչիւր կէսը կը փափաքէր միւս կէսին միանալ։ Երբ կը հանդիպէին իրարու, անոնք իրենց թեւերով իրարու կը փաթթուէին եւ ա՛յնքան ամուր կը սեղմուէին իրարու, որ իրենց վերածուելու տենչանքին մէջ, անոնք թոյլ կու տային իրենք իրենց, որ անօթութենէ եւ անկարողութենէ մեռնէին, որովհետեւ իւրաքանչիւրը ոչինչի կ'ուզէր ձեռք երկարել՝ առանց միւսին»։

Ուիթերսոդ դարու Վիտայի հնդկական «Ուփանիշատներուն մէջ Ադամը աշխարհի ստեղծիչ հոչակուելէն ետք, այսպէս կ'ըսուի.—

«... Բայց ան ինքնին ոչ մէկ հաճոյք կը զգայ։ Չի զգար ոչ մէկ հաճոյք, որովհետեւ առանձին է։ Եւ ան զգաց տենչանքը երկրորդ մը ունենալու։ Արդարեւ, ան այնքան մեծ էր, որքան այր մը եւ կին մը կ'ըլլան, երբ իրարու փաթթուած են։ Ան իր *ինքզինքը* երկուքի բաժնեց. այս ձեւով ծնունդ առին ամուսին եւ կին։ Այս է պատճառը, որ *ինքզինքին* մարմինը կը նմանի կէսի մը։ Այս է, արդարեւ, այն բացատրութիւնը, զոր նայնավալէնան կու տայ։ Եւ այս պատճառով է, որ այն տարածութիւնը, որ պարպուած է, կնոջմով լեցուած է»։

Հետաքրքրականը ա՛յն է, որ այս ձեւով Գլատոն, Սոկրատի եւ Արիստոտելի միջեւ գտնուող տարբերութեան միջնակէտը կը հանդիսանայ։ Արդարեւ, ան ժամանակագրականօրէն եղած է Սոկրատի աշակերտ եւ Արիստոտել, իր կարգին, եղած է Գլատոնի աշակերտ։ Եթէ պահ մը Սոկրատը նկատի ունենանք իրրեւ գերագոյն իմաստասէր, եւ այս՝ մինչեւ մեր կարծիքը չէ, ան կը ներկայացնէ իմաստասիրութեան ամբողջականութիւնը։ Գլատոն՝ իրրեւ իդէալիզմի հիմնադիր, եւ Արիստոտել՝ իրրեւ նիւթապաշտութեան հիմնադիր, Սոկրատը կազմող ամբողջութեան երկու կէսերը կը ներկայացնեն։ Սակայն, Գլատոն ինքնին, արեւելեան եւ արեւմտեան, մինչ այդ պարպացած, իմաստասիրութեանց հանպուցման կայանին մէջ գտնուելով,

digitised by A.R.A.R.@

կը ներկայացնէ այս երկու մտածողութեանց արուեստական ամբողջութիւնը (Հոմփթի-Տամփթիի պատին օրինակով)։ Ան միեւնոյն ժամանակ կը ներկայացնէ Սոկրատի եւ Արիստոտէլի մտածողութեանց հանդիպման, դարձեալ արուեստական, կայանը։

«Ուփանիշատներու Ադամը, ինչպէս որ արդէն ենթադրած պիտի ըլլաք, հին կոտակարանի Ադամն է։ Այս ձեւով արդէն իսկ կը լուծուի իր կողի ոսկորէն Եւայի գոյութիւնը ատթիլու առասպելը։

Ընթերցողը այս երկուութիւններուն մէջ չկորսնցնելու համար մատնանշենք, որ հինէն ի վեր, յայտնութեան ճամբով երեւան եկած երեք միաստուածեան կրօնները մեծ արժէք կու տան «մեկ» յղացքի ամբողջականութեան եւ անոր կը վերագրեն ինքնաբաւութեան, յաւիտենականութեան եւ ինքնաստեղծման, ինչպէս նաեւ աշխարհը ստեղծելու կարողութիւնները։

Արդարեւ, Ադամի օրինակէն մեկնելով, եթէ զինք նկատենք իբրեւ էակ մը, որ ունենալով ստղմնաւորումի երկու գործարանները, կրնար վերարտադրել երկրորդ մը, ապա ան աստուածային կարողութեան ակէր ամբողջութիւն մը պիտի ըլլար։ Ադամի ինքնաստեղծ ըլլալու պարագան «Ուփանիշատներու մէջ, քիչ մը չափազանցուած կրնայ թուիլ առաջին ակնարկով, բայց եթէ հարցը դիտենք մարդու արտադրութեան ընդմէջէն, այսինքն՝ աստուածային կատարելութեան ձգտելու մարդկային մարմաջով, երեւոյթը կը յատականայ։

Ահա թէ ինչո՛ւ, երբ մէկը կը բաժնուի երկուքի, այն հաստատ դիտակցութեամբ, որ դարձեալ ամբողջի մը չի կրնար վերածուիլ, մարդիկ կը զգան, թէ ուր այսպէս ըսած, տանուլ տուած են խաղը, եւ դարձած մարդկային հողիէն եւ մահուան դատապարտուած արարածներ։

Այս առասպելին վրայ է, որ դարձեալ, յունական դիցաբանութեան մէջ՝ մէկը կը ներկայանայ իբրեւ արու, զերոն կը ներկայանայ իբրեւ էգ, եւ տասը թիւր կը ներկայանայ իբրեւ կատարեալ թիւ, նախքան լաւ տրամաբանուած տասանորդական թուաբանութեան իբրեւ հիմ ծառայելը։ Լին նմանութիւնը առնական սերբնոպաղծական օրէնքին եւ Օի նմանութիւնը կանացի սերնդագործական օրէնքին աստուծոյ նմանելու մարդու տենչանքին հետ զուգորդուելով՝ կրնայ կոչուիլ հիմը մարդկային մնջախաղին (mimetisme), որ ուրիշ բան չէ, եթէ ոչ ուրիշ երեւոյթներու կամ խէալներու հետեւողութեամբ զանոնք հարազատ կերպով կրկնելու հիզը, խաղը, գործունէութիւնը։

Բայց բնութեան մէջ արդէն իսկ գոյութիւն ունին կենդանական ձեւեր, որոնք ինքնարտադիր են։ Այսինքն՝ իրենց մէջ կը պարունակեն ինքնասաղմնաւորումի տուեալները։ Այս է, օրինակ, կենդանիներու մէջ տղրուկներու, խոնջյլերու եւ բուսատներու պարագան։ Բոյսերու մէջ ցորենի եւ սիսեռի պարագան։ Այս երեւոյթը կը կոչուի Հերմաֆրոտիզմ (Hermaphrodisme) եւ յղացքը կու գայ Hermes եւ Aphrodite դիցաբանական կերպարներէն։ Անիկա կը ներկայացնէ ինքն իր մէջ փակ գրոյթ մը (Hermetique), շատ նման քսաներորդ դարու երկրորդ կէսի Սսի հաւաքականութեան պատկանող մարդուն, բայց միայն հոգեբանական փակութեան կամ գոյութեան իմաստով։ Այլապէս, բազդատութեան եզր իսկ չկայ։ Մարդը տակաւին կը փնտռէ իր ամբողջացումը։ Մարմնական եւ բնախօսական տուեալներէ մեկնող հոգեբանական, աշխարհահայեցքային եւ ընկալումի վերաբերող ամբողջութենէն զուրկ է անիկա։

Կրնայ պատահիլ, որ եթէ մարդկային գիտութիւնը յառաջացած ըլլար այն աստիճան, որ յոյները գէթ իմանային, թէ կենդանական եւ բուսային աշխարհի մէջ գոյութիւն ունէին նման երեւոյթներ, չառասպելացնէին զայն։ Մեր կողմէ, չենք տեսներ սակայն, թէ ինչու պիտի չառասպելացնէին երեւոյթը, արուած ըլլալով, որ իրենց փնտռածը ո՛չ թէ ուրեալ առարկայական գոյութիւն մըն էր, այլ՝ ամբողջացման մը հիզը։ Երեւոյթներուն առասպելացումը ինքնին ունի իր

digitised by A.R.A.R.@

թաքուն խորշերը եւ պէտք է գտնել այդ խորշերուն մէջ պահուած տարրերը։ Բայց խորհրդաւորեր ընել կամ փորձել խորհրդաւորեր ընել կարդ մը առասպելներ, եւ այդ ալ՝ ներկայի մասնակիցացած եւ կոտորակուած մտածողութեանց ընդմէջէն, ո՛չ միայն ըղձացուած արդիւնքին չի հասցըներ մայրկութիւնը, այլեւ զայն աւելի եւս կը մխրճէ հակադարձ առասպելի մը մէջ, որն է՝ առասպել խորհրդաւորեր ընելու առասպելը։

***

Ինչպէս երեւան եկաւ ցարդ մեր կատարած փնտռտուքներուն ընդմէջէն, նախնական մարդը գիտակից էր դոց դրոյթի մը ունեցած առաւելութիւններուն եւ ներկայի մարդը ճարտարագիտութեան ընդմէջէն կը կարծէ հասած ըլլալ այդ դոց դրոյթի կատարելութեան։ Նկատելիք, սակայն, որ ամբողջութեան ձգտելու երեւոյթներ կան թ՛ւ նախամարդու մօտ, թ՛ւ արդի մարդուն։ Գոյութիւն ունին այդ նպատակին հասնելու ձեւեր, որոնցմէ մէկը mimetisme-ն է եւ միւսը՝ արտաձգութիւնը, եւ որոնք երկուքն ալ յարաբերութիւն յղացքին եւ յարաբերելու կամ հաղորդուելու եղանակին ամբողջականութենէն եւ կատարելութենէն կախեալ են։ Նկատի ունենալով, որ ցարդ կատարուած փորձերուն մէջ, երկու անյարտով ներկայացող խնդիրներէն մէկ անյայտ, եւ այդ ալ մասնակիօրէն միայն կարելի եղած է լուծել, պէտք է, ուրեմն, մեր աչքերը յառնեք ամբողջականութեան եւ կատարեալին ձգտող յարաբերութեան մը։

Երբ Պլատոն իր Երոս յղացքը առաջ քշեց, նպատակ ունէր ճիշդ այս։ այսինքն՝ օրինական միաւորները իրարու միացընելով Երոսի (այսինքն՝ սիրոյ) ընդմէջէն, ան կը փորձէր փոխարինել կատարելութեան ձգտելու բացակայութիւն մը։ Սեռային յարաբերութիւն մը ըլլալու կողքին, այս յարաբերութիւնը է՛ նաեւ մահուան բնազդին ու մարդու ապրելու կենդանական բնազդին հակադրութիւնը։

Այս ձեւով Երոսը կ՛ունենայ երեք հանգանակ։

Սեռայինի միջոցաւ՝ ամբողջութեան ձգտում։

Ամբողջութեան ձգտելու միջոցաւ՝ կատարելութեան հասնելու տենչ։

Կատարելութեան տենչով՝ հասնիլ անմահութեան, այսինքն՝ յաղթահարել մահը։

Ինչպէս հետագային պիտի նկատենք, փոխանակ հետեւելու Անորոկինի օրինակին, որ նախընտրեց մեռնիլ, քան թէ բաժնուիլ զինք ամբողջացնող զոյգէն, անդամ մը, որ մարդը իր օրինական միութիւնը կորսնցուց, ակնարկը պտըտցուց իր շուրջ եւ տարբերեց ինքզինք,

Նախ՝ իր կողակիցէն,

Երկրորդ՝ իր գոյութիւնը ապահովող կամ վտանգող տարրերէն,

Երրորդ՝ մահէն։

Տարբերելու այս պարտադիր գործողութիւնը, սակայն, իրեն կը թելադրուէր հեռաւոր կատարելութեան մը պատկերին թելադրականութեամբ, եւ այդ՝ գարձեալ միաւոր ամբողջութեան մը վերածուելու պատկերն էր։

Այնուհետեւ, արտաձգութիւնները յաջորդեցին իրարու։

Կողակիցին հանդէպ իր ունեցած սէրը արտաձգուեցաւ իր գոյութիւնը ապահովող հաւաքականութեան վրայ։

Իր անմահանալու տենչը արտաձգուեցաւ սերնդագործելու գործողութեան վրայ։

Իր օրինական միաւոր դառնալու տենչը արտաձգուեցաւ իր կնոջ հետ ունեցած իր փոխյարաբերութեան վրայ։

Կատարելութեան ձգտումը արտաձգուեցաւ քաղաքականութեան կատարելութեան վրայ։

Եւ ասենք, փոխն ի փոխ, հասցէ փոխեցին։

Արտաձգութիւնները եղան զաւակի սէր, դրացիի սէր, հաւաքականութեան սէր։

Անմահանալը եղաւ զաւակ։

Կատարելագործումը եղաւ զաւակի դաստիարակութիւն։

Եւ ներկայացած ամբողջութիւն մը իր

digitised by A.R.A.R.@

արտաքին արտայայտութիւնն ու առաջիան ունեցաւ։

Երբ քսաներորդ դարու քսանական թուականներուն Ֆրէօյտ սկսաւ իր հոգեբանական բուժումները կատարել՝ անոր ստեղծած Լիպիտոն փոքր մէկ բարեփոխութիւնն էր Էրոսին։ Մինչ այդ, տակաւին, մարդկութիւնը ունեցած էր յունական քաղաքի դրոյթ եւ կորստեան մատնած զայն, հոմէական բանակի եւ գաղութարարութեան դրոյթ եւ կորստեան մատնած դայն, ունեցած էր քրիստոնէական դրոյթ, որ տակաւին կը յամենար եւ բարդոյթներ կը ստեղծէր մասնաւորաբար յարաբերութիւն յղացքի տեսակէտէն։

Էրոսը դարձած էր մեղաւոր գործառնութիւն։

Ստեղծած էր ձգտումները իրենց սաղմին մէջ խեղդելու վարդապետական ճշնչիչ ներայնացած դրոյթ։

Արհեստագիտական արշաւը սկսած էր եւ արագացուցած կեանքի հեւքը։

Ֆրէօյտի նախատուեալները կը հետեւէին աւելի Արիստոտելէն Հիւսէրլ ընթացող ուղիին, քան Գլատոնէն Սիփինոզա երկարող ճանապարհին։

Լիպիտոն թերեւս կատարէր Էրոսի կատարած դերը, եթէ մարդու արտաձգումները երթային հիմնական, ամբողջական խոչալին եւ արտաձգումները զուտ առարկայական գեանի վրայ չկատարուէին։

Վրայ հասաւ Եունկ եւ աւելի խորթափանց աչքով նկատելով դոյութիւն ունեցող բացը, փորձեց մարդու ամբողջութիւնը վերականգնել, մեկնելով ա՛յն տեսութենէն, որուն հիման վրայ սեռային տարբերութիւնները ֆիզիքական չէին միայն, այլ՝ խորապէս հոգեբանական։ Ուսումնասիրած ըլլալով մշակոյթի պատմութիւնը եւ լաւապէս սերտած ըլլալով մշակութային առարկաներու խորհրդանիշները՝ ան ճիշդ կերպով կը բնորոշէր քսաներորդ դարու մարդը, մեկնելով քսաներորդ դարու մարդը բուժելու մեկնակէտէն։

Դասախօսութեան մէջ ընդունուած երեւոյթ է, սահմանափակ ամէնուն մատչելի գրութիւն մը հաստատելէ հոգ, մբռցակցութիւն մը ստեղծել, ուր իւրաքանչիւր ենթակայ որոշ յաջողութիւն մը արձանագրելով, կը կարծէ կորած ըլլալ բոլոր մրցանիշները։ Հարցը, մրցակցութենէն աւելի, սահմանափակ գրութիւն մը ստեղծելուն մէջ կը կայանայ։

Եունկ ճիշդ այս ենթահողը օգտագործեց։ Սահմանափակ գրութիւնը մարդն էր իրեն համար։ Մշակութային եւ գիտական բոլոր տարրերը առարկայական տարրեր էին, ոլոնք ազդեցութիւն կը գործէին անոր իմացական եւ հոգեբանական կազմին վրայ, զոր դարձեալ առարկայորէն կարելի էր սահմանել։

Եունկ հաւանաբար չէր գիտակցեր, որ իր ընթացքով նոր գիւտ մը երած ըլլալու իր յաւակնոտութեամբ հանդերձ, կը չարունակէր իր նախորդներուն ուղին եւ կը պատրաստէր քսաներորդ դարու երկրորդ կէսի նոր մարդը։

Ահա՛ թէ ինչպէս։ Ըստ Եունկի, մարդու մէջ գոյութիւն ունին ե՛ւ իգական, ե՛ւ արական հոգեբանական խառնուածքներ։ Այդ խառնուածքներէն մէկուն կամ միւսին գերակայութիւնը ներքին լարում կը ստեղծէ, որմէ հետեւ մարդը հաւասարակշռութեան կը ձգտի։ Հաւասարակշռութիւնը կ'իրականանայ, երբ Anima եւ Animus հաւասարաչափ ազդեցութիւն ունին մարդուն վրայ։

Զեւով մը, նոր օրերու Անտրոպինը կը ստեղծուէր։ Հետեւաբար նաեւ՝ մարդը կրկին կը դառնար ամբողջ։

«Հոգեբուժութեան ներքնումը», արեւմտեան աշխարհի ներքին տագնապներն ու մարդկային անհամբեր փնտռտուքը, որ յետադարձ ակնարկով կը փնտռէ հեռուն ու թաքուն խորշերու մէջ կորսուած ցաւին արմատը, կու գան ցոյց տալու, թէ ինչո՞ւ Համփիթ-Տամփիթին կը խիզախէ պատերը։

Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Վ. ՕՇԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

*Արեւլատ Աւագեան, ծնած 1940ին, երեք հատոր բանաստեղծութիւն հրատարակած է՝ «Ակուեմներ» (1963), «Օրերի յայտնութիւնը» (1968), «Մարբուղ հեռուներ» (1974): Մեծ մասով միամիտ, անվնաս, բայց չահեկան գրութիւններ՝ յղացուած եւ ուռճացած բնութեան հետ սերտ, մեղմ յարաբերութեան մը ծոցը։ Աւագեան քնարերգակ է ու կարճ, խիտ ու միշտ թեւադրիչ պահերու, մտածումի փչրանքներու եւ յուզումներու մէջ կը սկսի ու կը սպառի իր ուժը, այնպէս որ՝ ամբողջ հատորները կարդալու է, որպէսզի իր թաքուն ինքնութեան յստակ զաղափարը երեւան գայ։ Տաք, մըտերիմ սրտով մէկը բլլալու է այս բանաստեղծը, որ ամէն բոպէ գութի, բարութեան, առնուազն համակրանքի հազար կամուրջներով կը փնտռէ ու կ'ապրի իր աշխարհը։ Չկայ մարդ կամ իր, որ արժանի չբլլայ իր սիրոյն։ Այսքան յուզումնահեղձ գրականութիւն սիրա կ'առնէր ու կը փլէր իր հասարակ տեղիք մտածումներուն բերան ոսկի, եթէ Աւագեան երեւակայութեան ու ոճի չեշտ զգայումը չունենար։ Անհասարակ, բանաստեղծները զոհերն են իրենց առաքինութիւններուն ու Աւագեան բացառութիւն չէ։ Իր գուրգուրոտ, բարեմիտ խառնուածքը կը թուի աշխարհը ներսէն լուսաւորել («Օրերի յայտնութիւնը»).

Լապտերները յոգնում են մութի դէմքը լուսաւորելուց,
յոգնում են տերեւ-բառերով խօսող ծառերը,
եւ շէնքերը երազների ճաւով
ճշմարտութեան ծովն են լողում...
Բայց ահա գիշերը հաւաքում է առագաստները,
երազների մէջ ծփացող ծովը նահանջում է,
եւ շէնքերը դանդաղ նստում են
աղմկոտ փողոցների եզրին...

ու յանկարծ կը զգաք, ինչպէս կեանքի պղտիկ, ծածկուած անկիւններուն՝ մեղմ ցաւը կը կոտաւ անդուլ կշռոյթով, մեզ տակաւ մաշեցնելով եւ որուն մենք «զոյութիւն» անունը կու տանք եւ զոր Աւագեան «Անմնութիւն» կը կոչէ՝

Գիշերը եկաւ դաշտերի թազաւորութիւնով,
գիշերը թարթրացաւ արմատների միջից,
գիշերը եկաւ...

Կինոթատրոնները դատարկուեցին շնչառութիւններից,
դահլիճի կիսախաւարում զսպուած ազգերը
օտար մնացին էկրանի ուրուականներին...:
Գիշերը եկաւ...

digitised by A.R.A.R.@

Գիշերը անցաւ փոդոցներով,
գիշերը նստեց դպրոցական նստարաններին,
գիշերը աղմկեց սաղարթներում...

Ես իմ սենեակի լոյսերը վառ թողեցի,
ու գիշերը չգտաւ իմ սենեակը...

Թէ ինչո՞ւ անբուն է բանաստեղծը, ինչո՞ւ խաղաղութիւնը չ'այցելէր իրեն, հակառակ իր պահանջին ու սպասումին՝ յայտնի չէ մեզի, բայց շատ հաւանաբար կապ ունի իր տաղնապին իրական որակին հետ, որ մեծ բան մը ըլլալու չէ: Արդարեւ, բանաստեղծէն կ'ակնկալուի նաեւ, որ իր երբորդ աչքը անգութ ըլլայ ու երեւան հանէ այն ահաւոր ու անբուժելի վէրքերը, որոնք, գաղտնաբար տեղաւորուած տիեզերքի սրտին՝ տառապանք ու գեղեցկութիւն կը ծորեն նոյն առեն: Ա՛յս է, որ կը պակսի իր գրականութեան — բնազանցական բարկութիւնը, ըմբոստ ոգին իր ցեղին ու մարդկութեան, ընդվզումը ի տես չուրջը տապլտկող տառապանքի մարմիններուն: Զէզոք բանաստեղծ գոյութիւն չունի, քերթող մը չի կրնար շատ երկար մնալ իր անցադրին թաւշապատ կամ փչոտ դագաղին մէջ: Օր մը չէ օր մը՝ դուրս պիտի խուժէ ուշացած ու խուճապահար ճամբորդին նման ու վազէ փախչող չոգեկառքին ետեւէն: Անոր հասցէն անոր երեւակայութեան սահմաններն է, բնակավայրէն ու օրացոյցէն շատ անդին, հո՛ն՝ ուր կը տանին իր այնքան սիրած բնութեան գժժոն ոգիները: Ահարկու հակասութիւններու փարատիքները կը խանգարեն արտաքին դաշնութիւնը ստեղծագործութեան ու արեւստագէտը կը լսէ այդ ազմուկը: Աւագեան խուլ չէ անկասկած, երբ կը գրէ՝

Անմահութիւնը քաղցր թոյնի պէս
Օդում լուծուել է,
Ու ես ծծում եմ այդ քաղցր թոյնը,
Անէանում է հոգիս ու լուծւում
Կապոյտ ցնորքում
Ու թուլութիւնը
Հոգիս շոյում է...
Ու ես անգիտակ,
Որ անէութեան գրկում է քաղուած
Մահուան աշխարհը,
Հանգիստ քնում եմ...

Բայց որքան անբաւարար, ապարդիւն սա վերի տողերը՝ երբ մահուան կամ անհունութեան հետ կը շփուի Աւագեան: Նոյն երանաւէտ անզիտակցութիւնը կը ղեկավարէ իր ձեռքը, երբ կը դառնայ ետ, մանկութեան դրախտին՝

Ամէն ինչ նոյնն է մնացել.
Ժամերի շարքը մանուկների սրտով անցնող,
Մայրամուտի խարոյկը մոխրագոյն սարերի վրայ
Եւ դպրոցի շենքով անցնող կեսուրի ուղին:
. . . . . .

Ո՛չ խուլ, ո՛չ համբ, Աւագեանի աշխարհը պարզապէս անձուկ է ու կը տառապի լայնքի ու խորքի պակասէն, պճլիկ թոքերով ու համեստ յա-

digitised by A.R.A.R.@

ակնութիւններով։ Աւագեանի քնարերգութիւնը իր այս առաջին գիրքով, թերութիւններու ու քանի մը արժանիքներու միջեւ հաւասարակշռուած է։ Երբ իր զգայարանքներու ուղեանը կը նետէ բնութեան վրայ՝ գրեթէ միշտ նոյն կապոյտ երկինքը, փոքրիկ առուները, անձրեւի կաթիլը, երազի ու ամպի ծուէնը, յուսահատ սիրահարը կը բռնէ։ Զի թուիր մտածել, թէ այդ տեսիլներու, վակներու, ամպերու բազմութիւնները այնքան ալ հրապուրիչ կրնան չըլլալ ժամանակակից մարդուն։ Հատորին մօտ 120 թերաճ քերթուածներէն կարելի է 10 հատ մը դեռ աճին, մեծնան մեր երեւակայութեան մէջ՝ լոկ հնորհիւ իր ոճային արժանիքներուն։ Մեծ բան մը չէ, անշուշտ, բայց բարեբախտաբար իր երրորդ հատորը, որ կը կոչուի «Մարդուդ հեռուներ», հրատարակուած 1974ին՝ շատ աւելի յաջող է։

Այս հատորն ալ, նման Մարտիրոսեանի «Թռչունները» գրքոյկին, անհերելի սխալով մը կը բացուի։ Նորէն Հայաստանի թեման է, որ կը դաւաճանէ, հաւանաբար որովհետեւ իրենց սէրը այնքան անկեղծ ու զօրաւոր է, այնքան միրճուած են իրականութեան մէջ Հայաստանին, որ չկայ անհրաժեշտ հեռաւորութիւնը իրենց ու ներշնչման նիւթին միջեւ, որպէսզի առարկայական ձեւ տան անոր։ Ամէն պարագայի, Աւագեանի ոտանաւորը, որ կը սկսի սապէս՝

Սուրբ է քո հողը,
որ արթնացել է իմ աչքերի մէջ
եւ քո աւիշը, որ տրոփում է երգիս տողերում

մտածել կու տայ, թէ ի՞նչ արժէք տալու է յաջող քերթուածներուն մարդու մը, որ կ'արտօնէ ինքզինքին այսչափ զէշ ճաշակով ու դատողութեամբ տողեր…։ Եւ կամ սա տողերը՝

ժամ առ ժամ մոռացւում ենք մենք,
ժամ առ ժամ մեռնում ենք մենք
օրերի շապիկի մէջ փաթաթուած

որոնք սեւակեան ազդեցութեան տակ ակսուած՝ 6 տուն չեն դիմանար ու կը ճապաղին, կը դառնան քարոզ ու դպրոցական արտասանութիւն։ Աւագեանի այս հատորը հոգեբանական յատուկ մթնոլորտի մը, զգացական կլիմայի մը մէջ միայն կարելի է գնահատել, բա՛ն մը, որ կը պակսէր նախորդ հատորին։ Այս կլիման կը թուի ըլլայ խառնուրդ մը գոյապաշտական որոշ հոգեվիճակներու՝ մարդկային առանձնութիւն, հազորդակցութեան պակաս, կեանքի աննպատակութիւն, եւ արեւելահայ աշուղներու, դրագէտներու, բանաստեղծներու եւ թամադոներու սիրելի այդ կեղծ-փիլիսոփայական յոռետեսութեան, այնքան անյուրջ՝ որքան ժամանակավրէպ։ Բարեբախտաբար, Աւագեան մտածումի վրայ չի կառուցեր իր քերթողութիւնը — չունի այդ կարողութիւնը։ Այլ՝ բացէ՛ք որեւէ էջ իր հատորէն ու շատ հաւանաբար հետեւեալ փորմիւլին կը հանդիպիք — քերթուածին առանցքը կը կազմէ բանաստեղծին փնտռտուքը, կարօտը, վերյուշը, պահանջը, անկարելի ցանկութիւնը՝ կորած-կացած գեղեցկութեան մը, պահու մը, անձի մը, վիճակի մը, սերտօրէն առընչուած բնութեան կամ իր մանկութեան հետ։ Զգացական այս գրացակայութիւնը պիտի լեցուի երեւակայութեան գոյքերով կամ ալ պիտի տանի դէպի ընդհանուր մտածումներ։ Ահա իր լաւագոյն քերթուածը, այս կաղապարին վրայ շինուած՝

digitised by A.R.A.R.@

Աստղերի դէմ փռուած գերեզմանոցն արդէն
երազներ է տեսնում շիրտերի մէջ հոգի,
տեսիլներ կան հոգում, արթնացումներ մտքի
եւ նոր կեանքի պատրաստ յղացումներ:

Փշակի մէջ ջուրը դառնահամ է դառնում,
իր թելերով սարդը բանտարկում է իրեն.
դու չկայիր վաղուց, երբ ամպերը եկան,
որ բլրի միջով ուղիները տանեն:

Գետը եւ է դառել, եւ ջրերը նոխկին
աստղերից ցած թափուող երազներն են տանում,
բայց դեռ մայրդ այնտեղ խաւարի դէմ կանգնել,
սպասում է, թէ դու երբ ես գալու:

Նոյնքան հաճելի է ընթերցումը «Մակոյկները վաղուց ան են ետ-ներ» քերթուածին: Աւագեան շատ բան չունի ըսելիք արդիական մաքերու եւ խառապահանջ ճաշակներու, բայց իր աշխարհը ինքնիր մէջ վաւերական ու հարազատ է. իր հանդարտ ձեւով՝ ինքն ալ սահմանազանց քերթող մըն է, որ կրնայ շատ շահաբերբուիլ մարդկային ու, մա՛նաւանդ՝ հայկական հիմնական առգնապնելով, տակաւին կասկած չկայ, որ մեր գրականութիւնը իրմով քայլ մը եւս կը մօտենայ ժամանակակից դրական մակարդակներուն:

Դաւիթ Յովհաննէս նոր ճամբայ կ'ելլէ, այսինքն՝ իրաւունք ունի մեծ ու աննշան սխալներ գործելու, պայմանաւ, որ հոս-հոն իր խօսքը ինքնատիպ ու վաւերական հնչէ ու գիտակցի, թէ բանիմաց մարդիկ զինք պիտի չափեն ու դատեն իր մեծ սխալներով եւ նոյնիսկ փոքր սխալներով ու պիտի անտեսեն իր առաքինութիւնները: Քննութիւն անցընել մը կայ ճամբուն ընկերը. Աւագեան, օրինակ, կ'անցընէ քննութիւնը՝ հակառակ անոր, որ քիչ մը ուշացած է ու սպառած՝ քառասունի շուրջ՝ խէալիզմի միւռոնը ու յանկարծ ինքզինք մերկացած կը զգայ պատանութեան գրահներէն ու գանձերէն, պէտք է որ նորոգուի իր իմացական պաշարը, նորէն լեցուին պարբերականները: Յովհաննէսի պարագային այդ քննութիւնը դեռ տեղի ունեցած չէ, նոյնիսկ եթէ ինք, տղայական խանդավառութեամբ բանաստեղծութեան էութեան մասին քիչ մը ձրի ու անլուրջ տարազումներ կ'ընէ: Ահաւասիկ ինչ կ'ըսէ նորընծան.

ՊԻԵԶԻԱՆ

Պեզիան մի աստղ է,
որը թափառում է երազի եւ իրականութեան
սահմանների վրայ, մի աստղ,
որը բնած ժամանակ չես կարողանում բռնել,
իսկ երբ արթնանում ես,
ամէն ինչ կորչում է անհետ:

. . . . . .

digitised by A.R.A.R.@

Պոեզիան խաղ չէ, այլ պայքար,
բառերի հետ կռիւ է յաւերժական,
որտեղ յաղթողը բառն է լինում յաճախ,
եւ ինչքան էլ հմուտ դարձին, կամ ոսկերիչ,
միեւնոյն է, եթէ պարտուած են,
ճեզ փրկութիւն չկայ:

Եօթը տունոց քերթուած է ասիկա։ Այսքան բան գիտնալ պոեզիայի մասին՝ մէկ բան, բանաստեղծութիւն գրել՝ բոլորովին ուրիշ բան...։ Այդքան առատ, կոճկուած տեղեկութիւն արուեստի մասին, ու այդքան քիչ՝ կեանքի մասին. «ֆանզի մենք թիթեռ» չենք, պարո՛ն Յովհաննէս, ու դեռ Տրամաբանեն եւ խաղաղութեան աւազաններու մէջ չենք խեղդուած, այլ՝ ողբերգական ճակատագրի մը շառաչին մէջ երկվայրկեան մը բռնուած հրապիտներ, որոնք յանկարծ կը գիտակցին, թէ պալատը շատոնց լքուած էր իր արքունիքէն — բայց մենք կը շարունակենք մեր խաղը, որովհետեւ մարդ ըլլալը յամառութեան ու «արթնացումի» հարց է, ազատ արարք մը, որ իր ահաւոր գիներ ունի։

Այնպէս որ՝ առողջ երեւոյթ չէ արուեստի էութեան մասին կոկիկ վերլուծումներ ընել, փարատոխներ ու ներհակասական տողեր շարել — ատիկա խեղճ գեղագէտներու եւ գրագէտներու գործն է։ Բանաստեղծը պէտք չունի իր գործը բացատրելու կամ արդարացնելու։ Իսկ բանաստեղծութեան վրայ բանաստեղծութիւն գրե՞լը — ինչո՞ւ չէ, եթէ Նոպէլեան մրցանակը կախուած է սենեակի պատէն կամ գրական ավան–կարտ փորձերու աշխատանոց մը՝ է սեղանը եւ կամ ալ ծերունազարդ «Վարպետ»ի դերը կը խաղայ, առանց ամչնալու։ Միակ առենը, երբ այդ «Վարպետի» պաշտօնը կրելու իրաւունք ունի մարդ՝ ա՛յն է, երբ անկեղծ եւ վարդապետական ու կեղծ ճշմարտութիւնները միամիտներու գանկի թաղարին մէջ՝ սկսի քիթին տակէն խնդալ ու հայհոյել մարդկային յիմարութեան վրայ։ Եւ, վերջապէս, Յովհաննէս ինքը դեռ չէ կրցած բիւրեղացումի հասնիլ, իբրեւ ստեղծագործ միտք, իր գործը ամէն էջի կը հակասէ իր «տեսութեան» ու շատ յայտնի չէ, թէ ինչ արտաքին ազդեցութիւններու տակ կը պրկուին մտքին մկանները։

Ամէն պարագայի, երեւոյթը հետաքրքրական է ու կ'արժէ աւելի մօտէն նայիլ սա երիտասարդին գործին։ Հաւանաբար չփացած մէկն է, օրւայ «Վարպետներուն» պաշտպանելը, չարաճճի տղան։ Ապագայ Իսահակեան մը, հաւանաբար...։ Նարկիսականութեան գիծ մըն ալ կայ գործին հիւսուած եւ որ գրքին մէջ գրուած լուսանկարէն ալ կը մատնէ իր ինքնութիւնը։ Անշուշտ բանաստեղծի մը համար մասամբ անխուսափելի է ատիկա ու ամէն մարդու իրաւունքն է իր գնդակը կրցածին պէս զարդարել, գեղեցկացնել ու հաւանական է, որ Խորհրդային Միութեան քաղաքացիները զրկուած են մեր քաղաքակրթութեան մանրուք մոլութիւններէն, որ քիչ մը շատ մտերմանան հայելիներուն հետ։ Քննենք իր դաղափարներու դրութիւնը։

Առաջին ակնարկով, Յովհաննէսի մտածումը գուրկ է արդիական պայթուցիկ, անիշխանական ու յոռետես նկարագրէն։ Կայ խրատ ու քարոզ, բարեմիտ պատգամ, պաշտօնական երջանկութիւնը ինքնագոհ, յաջողած մարդոց։ Հականիշը մեր օրերու դժգոհ, ըմբոստ, արհամարհոտ պոետին։ Ահա տուն մը քերթուածէ մը, ուր թռչունի թռիչքը կը վերածուի հոգիի ազատութեան ցանկութեան՝

digitised by A.R.A.R.@

... Այդպէս էլ դու, իմ խեղճ հոգի,
առաւօտեան շունչ առնում,
դուրս ես թռչում դէպի երկինք,
ինչպէս ազատ մի թռչուն:
. . . . . .
Մոռացած չար կնոջ լուտանք,
օրուայ հոգս ու սիրոյ վիշտ,
մոռացած, թէ ինչեր տեսանք
այս կեանքի մէջ ամբարիշտ:

Աշխարհի մէջ այսօր չկայ մէկ հատ բանաստեղծ, որ մարդիկ որակէ իբրեւ շար կամ բարի, որ կեանքի շքեղ ու ապաբարոյ իրականութիւնը ամբարիշտ նկատէ: Զարմանալի, ցաւալի է, որ Հայաստանի մեր նոր օրերու գրողները ի՛արտօնեն իրենց այս տեսակ ստորագրել: Միակ յանցաւորը անցեալի՞ հսկայ ճնշումն է, սպառնալիքը, որ երբեմն աւանդապաշտ մը-տաւորականութիւնն է նորերու գլխուն, անձի պաշտամունքը ու ամբողջ կեղծիքը, որով «մեծ» ու «անմահ» ածականներ կը փակցուին անուններու ու կը դառնան «հեղինակութիւն», երբ Արեւմուտքի ամէնէն պեխապէր, վրիպած մտաւորականն այ գիտէ, թէ արուեստի մէջ անկարելի բան է «հեղինակութիւն» ունենալ: Բացայայտօրէն, Յովհաննէս գոհն է ռեժիմին, գոհն է արեւելահայ գրական աւանդութեան: Ու սա իր քերթուածը ի՞նչ է, եթէ ոչ կապկումը մարդոց՝ Թումանեան, Իսահակեան եւ Ընկ.՝ որոնք իրենք կապկեր էին արդէն Արեւելքի հանրածանօթ գինարբուքներու բանաստեղծ-«միամտուններու»: Ու եթէ հաւաքենք գաղափարի փչրանքները չաղուրուած սանկ առաջին 50 էջերու բաներուն հետ՝ կ'ունենանք անչահեկան մտածումի սա կմախքը — կեանքը շար, դժբախտ եղելութիւն մըն է, բանաստեղծին հոգին միայն ազատ է ու կ'երգէ իր ազատութիւնը, իր բարութիւնը եւ ապրելու հրճուանքը, որոնց շնորհիւ օգտակար կ'ըլլայ մարդոց: Կ'անցնինք քանի մը քերթուած ու կը սայթաքինք հետեւեալ տողին վրայ՝

Այսքան տարուայ մէջ առաջին անգամ
տեսայ, թէ գարունը ինչքան գեղեցիկ է,
եւ գոյները ինչքան պարզ են ու մաքուր,

քիչ մը անդին երանութեան այս զգացումը կը դառնայ կեանքի փիլիսոփայութիւն, որ «Օղակ-օղակ» քերթուածին մէջ սա բանաձեւին կը հասնի՝

Ամէն ինչ ճիշդ է աշխարհում,
ռիթմն է ապրում թնութեան մէջ,
այսպէս մենք մեր կեանքն ենք ապրում
վերջից՝ սկիզբ, սկիզբից՝ վերջ:

Թէ երիտասարդ, կորովի, զգայուն ու գեղ. իր խոէալներուն, երազներուն կախարդանքէն չհեռացած գրող մը ինքզինքին կ'արտօնէ յայտարարել, թէ «ամէն ինչ ճիշդ է աշխարհում» ու չի գիտակցիր ահաւոր սխալներուն, սուտերուն, անարդարութեան, որոնք կը մաշեցնեն մեր մարդու եւ հայու սիրտերը, չի տեսներ, չի լսեր սարսափելի ապոխիրտը տիեզերքին — սա չատ ապշեցուցիչ երեւոյթ է: Որովհետեւ բանաստեղծը պատասխանատու է իր բոլոր գրածներուն համար ու ներկայ է ամբողջովին իր մէն մի

digitised by A.R.A.R.@

տողին, բառին մէջ իր ունեցած–չունեցածովը, մինչեւ շուքին ծայրը ու անկէ անդին ալ։ Այնպէս որ՝ լուրջի կ'առնենք իր բոլոր ըսածները ու երբ կը գրէ, «Սոնետ մուսային» քերթուածին մէջ «ինչու ես ինձ շնորհել ամենուն տանջանքը բառի»՝ մէն մի բառին կու տանք իր առաւելագոյն ծանրութիւնը ու կը հաւատանք իր խօսքին։ Ասոր համար է, որ ընդվզում կ'ակնկալենք, առնչուող մարդու ընդվզում ու բարկութիւն՝ է սես սա ծուռ, կիսաւարտ աշխարհին, քանի որ «տանջանքը», որուն կ'ակնարկէր՝ չէր կրնար ուրիշ բան ըլլալ բանաստեղծի մը համար, բայց տառապանքը, երբ անզօր կը զգայ բանական հիմերու վրայ, բառերու իմաստներու վրայ դնել ստեղծագործութիւնը։ Այս անկարելիութեան առաջին հետեւանքը ա՛յն պիտի ըլլար, որ իր ստեղծումն ալ, իր քերթուածն ալ պիտի կորսնցնէր իր գոյութեան իրաւունքը, իր raison d'être-ը։ Մինչդեռ, այս հակադրեցութեան փոխարէն՝ կը տեսնենք, թէ Յովհաննէս առաք–փառաք համակերպած է աշխարհի օրէնքին, ըլլա՛յ այդ աստուածային թէ մարդկային — չի՞ տեսներ շուրջը մարդկային անզէա տառապանքը, չի՞ լսեր բնապանցական հեգնանքի խնդուքը իր այնքան սիրած քամիին ձայնին, անձրեւին ապմուկին մէջ, նուաստացում չէ՞, երբ մարդկային միտքը, անել ճամբաներու քառուղիին սուտ–քուն կը ձեւացնէ։ Որո՞ւ հոգը՝

Այսպէս իրար են յաջորդում
ժամանակներ, եղանակներ,
կարգով եկնում են երկնքում
հեռու, մօտիկ մոլորակներ

երբ անմեղ մանուկներ կը տառապին ու կը մեռնին (Տոմթուեակի չե՞նք կարդար այլեւս), քանի՞ փարա կ'արժէ դրախտը, երբ դժոխք կայ անդին ու մարդիկ կը չարչարուին հոն։ Ո՞ր դարու մէջ կ'ապրինք, պարո՛ն Յովհաննէս։

Այս նկատումներուն նպատակը բանաստեղծին իմացական արթնութեան չափը յստակացնել է, հասկնալ, թէ ա՞ մարդը, որ ինքզինքը կը սահմանէ իբրեւ «ռոմանտիկ պոեսը վերջին», ունի՞ մեզի ըսելիք, որուն ազդեցութեան տակ մեր մտքի մեքենան կիր փոխէ ու իրականութիւնը երկվայրկեան մը աւելի իմաստալից թուի։ Պատասխանը կախում ունի ընթերցողին ախորժակներէն, արթնութեան աստիճանէն։ Թէ Յովհաննէս արթուն է՝ կասկածէ վեր է ու ասոր առաջին շողը կը զգանք, առաջին հպումը արուեստի խորհուրդին մակերեսին՝ «Գիշերերգ» գրութեան մէջ, ուր կը թելադրէ, թէ մաքին լիրբ, դաժան լոյսին աչխարհէն անդին մթութիւններու կուրութեանց մէջ՝ կան ուրիշ ամօթխած լոյսեր, ձայներ ու իմաստներ, աւելի մարդկային ու յուզական։ Բանաստեղծը սակայն ոչ մէկ վարագոյր կրնայ բանալ, ոչ մէկ բառ՝ այդ գաղտնի աչխարհներու նշանակութեան մասին եւ որոնց լոյսը անկասկած ռատիոտէթիւ է ու մահացու — միայն պարզ թափառիլ մը անցեալի յուշերու փարիինկին շուրջ, ներքին մտերմութիւն մը բանաստեղծին ու իր առանձնութեան միջեւ։ Այս սակայն, լոկ մեղրալուսինն է աբուեստի կեանքին։ Դեռ շատ նուր պիտի անցնի կամուրջին տակէն։

Կ'անցնինք ուրիշ քերթուածի մը — «Լուսնի լոյսին տակ ոտգոյն ու մռայլ», որ յաջողագոյններէն է հատորին։ Կոշմարի նման հոգեվիճակէ կ'անցնի գրողը։ Ասիկա հին խաղ է՝ ըսելու համար, թէ դիշերուայ մէջ խուլ շշուկներ կան, որոնք կ'արթնցնեն մարդու մէջ քնած դեւերը, վայրագ, գաղտնի ցանկութիւններ, կեանքի կիրքեր — «քաղցը թոյնը գոյութեան»։ Անիրաւութիւն, անդէմ այս գոյութիւնը ուրիշին կեանքն է։ Այսահա՞ր, չո-

digitised by A.R.A.R.@

չո՞ւթ, սո՞ւրբ, թէ սիրակարօտ կին — յայտնի չէ։ Մէկ բան լոկ յստակ է — էզոթէրիզմ, բանականութենէն ու կեանքէն անդին իրականութիւն է, որ մեր գոյութիւնը կը վարէ ու կը քայքայէ ի վերջոյ՝

Ու գիշերը, որ թու

էր նիրհած,
այդ ձայներով է ծայրէծայր լցուել,
մարգարէական ձայներ անկասկած,
որ շշնջում են ճշմարիտ խօսքեր,
— խօսքեր անէծքի կամ ատելութեան,
խօսքեր տենչանքի կամ դժբախտ սիրոյ,
խօսքեր, որ իրենց հնչիւնով միայն
մարդկանց հոգին են տանջում գիշերով։

դուրս եկած ենք այլեւս խանգաղեանի սիրելի լաւատեսութեան մանկամբոյսերէն, յանկարծ լրջացած է կեանքը, մտածումը բաներ մը կը պեղէ երեւոյթներէն անդին, կը մօտենայ ցաւոտ ջիղերու։ Բայց չի հասնիր, կարճ է չունչը ու տեսողութիւնը, քիչ ու անայլազան՝ փորձառութիւնը, անբաւարար՝ մշակոյթը։ Ինչ որ չի պակսիր սակայն իրեն՝ անկեղծութիւն է, որ իր գրականութեան կու տայ ամէնէն անմնական, հաղորդական յատկութիւնը Հայաստանի մէջ։ Դժբախտութիւնը հոն է, որ այս անկեղծութիւնը, իր մերկութեամբ, իր ստէպողականութեամբ ու անհամբեր հրմշտուելով՝ կ՚արգիլէ, որ մտածումը զարգանայ, անջատուի իր անձին մտասեւեռումէն, իր անցեալի վրէժխնդիր հեղեղէն ու կը տուժէ ոճը, արուեստը՝

Օ տէր իմ Աստուած, հրաշագործ ու կարող
եթէ քո կամքով են մեզ այս կեանքում գործում,
եղիր իսկապէս Աստուած, գթասիրտ ու ներող,
լսիր իմ աղաչանքը, եւ օգնիր այս գործում
ինձ պատժիր փոքրիկով, աղէտով անխմատ,
երկրաշարժի մատնիր — (զուցէ ապրիմ յանկարծ),
բայց փրկիր ինձ միակ իմ թշնամուց անհաշտ,
փրկիր յիմարութիւնից մարդկանց, տէ՛ր Աստուած։

վերի տողերը գրողին համար «մարդկային յիմարութիւնը» կրնայ մեծագոյն հարիւրը ըլլալ, սակայն ի՞նչ արժէք ունի մարդոց յիմարութիւնը՝ քովն ի վեր մարդոց ողբերգական առանձնութեան, անիծեալ ճակատագրին, շուարումին ու անիմաստութեան։ Զնչին... (անցողակի, կ՚արժէ մատնանշել իմաստով ու ապրումով ծանրաբեռն նախադասութիւնը՝ «զուցէ ապրիմ յանկարծ»)։ Այսպէս, ենթակայական տարրեր յանախ կը խանգարեն քերթուածին ներքին դաշնութիւնը ու շատ քիչ անգամ գրութիւնը կը յաջողի «օդ բարձրանալ» իրականութեան, հում ապրումի մակարդակէն ու կը մնանք միշտ նոյն տափաստանի մակերեսին։ Նոյնիսկ երբ մահուան շուրջ է գրածը, այսինքն՝ նորէն իր մասին՝ ամէն ինչ հորիզոնական կը մնայ։ Զոր պատմումը կամ նկարագրութիւնը կը փրկուին, չնորհիւ անկեղծութեան, բայց միայն արուեստն է, որ տողը կրնայ փրկել՝ բառը փոխել ուրիշ բանի, որ բառ չէ այլեւս։ Ասով հանդերձ, անկեղծութեան թեման է, խոստովանելու, մեղմութիւն գտնելու, հաղորդակցելու այս բուխ արամադրութիւնն է, որ կու տայ Յովհաննէսի քանի մը յաջող կտորները — «Ես քեզ ինչ ասեմ», «Այս դառնութիւնը, իմ անգին ընկեր» ու յա՛տկապէս՝ «Մութի միջից երկու աչքեր»։ Ահա հատուածներ՝

digitised by A.R.A.R.@

Մութի միջից երկու աչքեր,
երկու աչքեր մահկանացու,
ինձ են նայում վրաս կախուած
մութի միջից անգոյութեան,
երկու խաբուած, տխուր աչքեր,
որ նայում են վշտով լեցուն,
եւ նրանց մէջ մարմին առած
օրօրւում են ցաւ ու գարմանք:
. . . . . .
Նայի՛ր, երկու տխուր աչքեր,
իսկ նրանց շուրջ մութի միջից
գծւում է մի դէմք յոգնաբեկ,
ծանօթ մի դէմք անչար ու հաշտ,
եւ հնչում են կարծես բառեր,
որ ցնցւում են իրեն ձայնից,
բառեր, որ կան, բայց որ երբեք
չունեն արդէն, չունեն իմաստ:

Լուռ նայում են մութի միջից
երկու խաբուած, տխուր աչքեր,
որ տեսչեր են յիշում անմար,
որ յիշում են ա՜յնը սիրոյ,
բայց նրանց մէջ անկարեկից
լոյզ են տալիս բոխտի ճաւեր,
որ կտրում են լոյս ու խաւար
եւ անցնում են սրտիս միջով:
. . . . . .
Եւ աչքերն այդ հայելու պէս
ինձ իրենց մէջ են ցոյց տալիս,
մի՞թէ ի՛մ դէմքն է յոգնաբեկ,
եւ ի՞մ աչքերն են անխնդում...
...Երկար, երկար նայում եմ ես,
եւ պատկերն եմ տեսնում կեանքիս,
ապա ձեռքով թոյլ ու թեկթեկ
գլխիս վերեւ լոյսն եմ մարում:

Յովհաննէսի աշխարհը ո՛չ քաղաքն է ոչ ալ գիւղը, ոչ իսկ իր սերընդակիցներուն հասարակաց դրամագլուխը՝ Հայաստանը ու իր բնութիւնը։ Զինք շահագրգռողը միայն մարդկային բնութիւնն է՝ իր յոռի, յուսալքիչ կողմերով։ Ասիկ՝ ներկայի իր մերժումը ու անխուսափելիօրէն ետդարձը դէպի մանկութեան յուշերը, կորուսեալ դրախտը։ Մտալկումի համեմատութիւնը առած է այս թեման, որ իրական հանգ մը եղած է ո՛չ այնքան ներքախոյզ վերապրումներու, անօրինակ հոգեվիճակներու առիթ տալով, զգայարանքներու ցնցիչ թարմութիւնը վերագտնելու եւ մանկութեան կախարդական, հրաշապատում տիեզերքը վերստեղծելու համար՝ որքան տալու համար իրեն իր լաւատեսութիւնը, ժամանակի ու յոյսի պաշարը, բարութեան արդարացումը ու յանցանքի զգացումը։ Ասոր համար է, որ կրնայ սորագրել սա տարօրինակ տողերը՝

Ուրեմն հանգիստ անցնենք մեր ճամբան,
քանզի ապրում ենք, եւ պիտի ապրենք,
քանզի ծառ թէ մարդ — բայց կանք անպայման,
թէկուզ չորացած, բայց գուցէ ծաղկենք,
եւ անցեալ կեանքը, երազի նման,
մինչեւ վերջ պիտի մեր սրտում պահենք:

(«Այս դառնութիւնը, իմ անգին ընկեր»)

տարօրինակ տողեր երիտասարդի մը կրնին տալ, որովհետեւ «հանգիստ անցնենք մեր ճամբան» ըսուած բան չկայ աշխարհի երեսին, մա՛նաւանդ քանաստեղծի մը համար, ան ալ հայ...։ Պարոն Խանզադեան քիչ մը կ'ապարդէ «Անցեալ կորուսեալը» յաղթանակ կոչելով, բայց անկասկած հատորը պիտի տոկայ՝ ընդհուպ իր անկեղծութեան, տաքութեան, հաղորդականութեան ու յանդգնութեան ոգիին։ Պայմանաւ, որ դիտնայ արհամարհել մարդոց թէ՛ դովեստը, թէ՛ ալ պարսաւը։

digitised by A.R.A.R.@

Էդուարդ Միլիտոնեան երիտասարդ բանաստեղծը վերջերս քերթուածներու հատոր մը հրատարակած է, զոր ցարդ կարելի չեղաւ գտնել Սփիւռքի գրախանութներու մէջ։ Այնպէս որ՝ շատ դժուար է իր գործին որակին մասին հիմնաւոր դատում բանաձեւել։ Մօտաւոր կարծիք, սակայն, հնարաւոր է կազմել, եթէ նկատի առնենք 8էն 9 քերթուածները, զոր «Գարուն» գրական հանդէսի խմբագրութիւնը քանի մը գրագէտ-քննադատ անձերու ուշադրութեան յանձնած է ու ապա իր 1976 Հոկտեմբերի թիւին մէջ հրատարակած՝ խնդրոյ առարկայ մտաւորականներու տպաւորութիւններով միասին։ Ասկէ զատ, պարոն Միլիտոնեան «Գարուն»ի 1979ի Հոկտեմբերի թիւին մէջ լոյս ընծայած է 3 էջնոց այլաբանական ոտանաւոր մը՝ «Իմ մանկութեան հեքիաթի արքաները» անունով։ Այսչափը, հաւանաբար, բաւ է լոկ տպաւորութիւն մը կազմելու համար։

Միլիտոնեանի թեմաները ու թեքնիքը չեն թուիր շատ հեռանալ իր ժամանակակիցներու հետքերէն։ Գլուխ մը կամ չոգ մը ստեղծումի, հոսհոն ինքնատպութեան մը տպաւորութիւնը՝ ու այսքան։ Միլիտոնեանն ալ շռայլօրէն կը գործածէ ինչ որ գտնէ թափուած շուրջը՝ առանց միաքէն անցընելու, թէ բանաստեղծները միայն ստեղծելով է, որ իրենք զիրենք կ'արդարացնեն։ Ու կը տողանցեն ծառ ու թռչուն, քար ու քամի, խոտ, անձրեւ, հողի եւ անհուն, որոնց կեդրոնին կը շողայ մէկ ու միակ առանցք մը, ինքը, հոը։ Դժբախտութիւնը այն, որ այս հոը խրտչեցուցիչ նկարագիր մը ունի — ո՛չ միայն շինծու է, այլեւ մեծ-եղբօր հովիր կ'առնէ, խրատ կու տայ, իմաստութիւն կը ծախէ, ինքզինքը ահաւոր կերպով լուրջի կ'առնէ։ Օրինակ մը տալու համար՝

Ահա հս, որին չէք փնտռել, բայց գտել էք,
Ահա հս, որ բարձր եմ խօսում ջրհեղեղից յետոյ,
Ահա հս, գիշատիչ ցաւով կանգնել եմ
Երկնային փլուածքի տակ։

«Երկիր» վերնագրուած այս քերթուածին հոը ինքն է, երկրին պատկերին ետին պահուրտած հեղինակին մտերմիկ անձը, որուն համար սակայն իր հղէիմ յուշերէն ու երազներէն զատ ոչինչ արժանի է ուշադրութեան։ Երկիրը իբրեւ պատուանդան մարդոց խեղճ հերոսութեանց, եղերական ճիգերուն ու կործանումին իբրեւ լաստ՝ չի թուիր հետաքրքրել բանաստեղծը։ Ո՛չ մէկ սուր զգայնութիւն կամ յուզում կը հերկէ բանաստեղծին երեւակայութիւնը, ո՛չ մէկ վճիտ մտածում կը բիւրեղանայ գիտակցութեան պատատակին վրայ։ Իր ըսելիքներէն եւ ոչ մէկը ստիպողական նկարագիր ունի ու յատուկ նշանակութիւն՝ արդի մարդուն համար։ Ամէնէն աւելի նեղացուցիչը այս քերթողութեան մէջ իր հռետորական կեցուածքն է, ընթերցողը տպաւորելու ահաւոր մեղքը, անոր բան մը սորվեցնելու յաւակնութիւնը, որմէ շատ, շա՛տ քիչեր ազատ են արեւելահայ գրականութեան մէջ։ Այս բանազրօսիկ, անոտի իմաստութիւնը շինծու վեհութեան ալ կը մօտենայ, երբեմն, ինչպէս «Հայրենիք» քերթուածին մէջ՝

Ես քեզ համար բռունցք սեղմող եմ, քեզ համար ըմբոստացող,
Ես զուցէ մարտում վախենամ յանկարծ, բայց դաւաճանել...
Ես քեզ հետ լացողն եմ ուրախացողների հոգու համար։

digitised by A.R.A.R.@

Ներիր ինձ, որ անտակ որդու նման,
Ես շատ եմ յոգնել թափառելուց,
Հաւատա՛ ինձ, որ բիւր-բիւրաւոր պարտութիւններից
Ուզում եմ յաղթանակդ ձուլել:

Այսպէսի տողեր մենք Սփիւռքի մէջ վարժուած ենք դատապարտելու իբրեւ անհարազատ, ճապաղ արտայայտութիւն՝ որուն ետեւն զգացականութիւնը մտածումին բազիկութիւնը ծածկելու կը ծառայէ։ Միլիոնեանի այս քերթուածը անշուշտ շատ աւելի արժէք ունի, քան հայրենիքի մասին գրուած հազարաւոր ատփակութիւնները, որոնց ստիպուած ենք հանդիպիլ հայաստանեան գրական մամուլին մէջ, սակայն այդ պարագան չի բաւեր՝ փրկելու համար ներ այս ժանրի գրականութիւնը։ Մենք կրկին ու միշտ պիտի պահանջենք, որ Հայաստանի քերթողները վար իջնեն իրենց զգացական ամպերէն՝ երբ հայրենիքի թեման ուզեն նուանել, դատնան համեստ, խոհուն, իբաւ մարդիկ ու մեղի տան ա՛յն՝ որ մենք՝ դուրսի մարդիկս, չենք կրնար ա՛չ մտածել, ոչ ալ ապրիլ։ Ինչո՞ւ չեն կարդար սփիւռքեան բանաստեղծները քիչ մը. չե՞ն գիտեր, թէ մենք իրենց այդ զեղումներէն շատ անդին անցած էինք դեռ քառասուն տարի առաջ, թէ՝ փարիզեան բանաստեղծը երբ կը գրէր՝

— Երկիրը մեր, սերունդ սերունդ՝ գայն կը յիշենք,
Հոգիները մեր արգասաբեր, լեռները մեր, գետերը մեր:
. . . . . .
Երբ զոյն գրկենք, երկիրը մեր, պիտի գտնենք մենք անձը մեր:
Գետի է գտնենք մեր անձը մենք, մեր անձին մէջ՝ պապերը մեր...

(Ն. Սարաֆեան, «Միջնարերդ», Փարիզ, 1946, էջ 175)

Ճիշդ այդ հոգեբանական նորոգումի, անձի գիւտին հարցը կը դնէր մէջտեղ։ Ծանո՞թ է արդեօք Հայաստանի ներկայ սերունդին այն խելայեղ սէրը, որով Սփիւռքի բանաստեղծը կը նեռուէր հայրենիքի թեմային մէջ, երբ կը գրէր՝

Հոն, թաղուէի՛ հուսկ պէս՝ ցած խոտերուն հաւասար,
Մի՛րկ՝ պատանիէ եւ փառէ եւ անուն ծիրանի,
Զի հայրենի հողն ինքնին պիտի բեռե՛զ ինձ ըլլար,
Ու հոգիս՝ ապամահ թերկրա՛նք եւ ի՞նչք եւ դափնի՛...

Հոն, կեանքիս բոցն անթեղուէ՛ր՝ աշխունկ, անմոմ, անծաղիկ,
Հոգւոյն ֆովիկն հայրերուս, շուքին տակ Հայ Պատմութեան.
Ան՝ իմ դէնակը ըլլար, իս՝ յաւիտեա՛ն երջանիկ
Իր բնակիչը անոմ, վայրի ծաղկի մը նման...

(Ժապ Յակոբեան, «Մեսրոպաշունչ», Գահիրէ, 1946, էջ 89)

Իսկ կէս դար առաջ, ուրիշ բանաստեղծ մը սփիւռքեան մտածումը, հարցականը կը բռնէր իր տողերով, երբ կը գրէր՝

Լեռները մեր լուռ, սառած, ալեւոր,
անդունդ խոհերի գաղտնիքներ ունին
Եւ յիշատակներ,

digitised by A.R.A.R.@

ողբերգութիւններ,
ծալ-ծալ ժողոված, այնքա՜ն սիաւոր:
. . . . . .
Մի ժանտ գազանիք կայ հեռանկարի
ալեծուի գծի ոլորումներում
եւ թաքնուած մի միտք երփներանգ լոյսի
արիւնռուշտ ողբի կայծակ ոստերում:

(*Կոստան Զարեան*, «Օրերի պսակը», *Բ. տպագրութիւն*, 1971, *Գիրք*, *էջ* 46)

Ահա այս գազանիքը, այս անքոլիժիք *բովանդակութիւնը հայրենիքին, սա խորհուրդը, որուն մոտաբերումը կը տանջէ ու կը հալածէ հայ միտքը դարերէ ի վեր — ինչպէ՞ս սահմանելի է անիկա այսօր եւ ի՞նչ լուծում կամ գոնէ մեկնաբանութիւն կու տան անոր Հայոստանի արուեստագէտները: Իրաւունք ունինք պահանջելու, որ մեր բանաստեղծները ազգային թեմային այս կողմէն մօտենան, առեղծուածին վրայ քիչ մը լոյս սփռեն՝ փոխանակ յիսուն տարուայ ապուրը ամէն անգամ նորէն տաքցնելու ու մեզի հրամցնելու իբրեւ թէ նոր ըլլար...: Բարեբախտաբար, Միլիտոնեան շատ աւելի անձնական շեշտ մը ու մոտածումի խորք ունի, քան միջ-պատերազմեան տաղաշափ իր երէցները ու իր սերունդին միջինը: Պարոյր Սեւակ 26 տարեկանին, որ մօտաւորապէս իր տարիքը ըլլալու է, տապէս բաներ կը գիլանէր գրել՝*

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Բառեր չկան կարծես քեզ երգելու համար
Եւ ես որդու նման անուանում եմ քեզ «մա՛յր»:

«Հարազատ» եմ ասում եւ այնուհետ լռում.
Սիրող սիրտն է այդպէ՞ս խօսքը շուտ սպառում:

Իսկ թէ ոնց եմ սիրում՝ դու գիտենաս պիտի,
Բայց քեզանից առաջ՝ ո՞ թշնամին գիտի...:

Անբաղդատելիօրէն աւելի բարդ ու խոր է Միլիտոնեանի հոդելիճակը, հայրենիք ու Հայաստան իրարու զուգադիպող իրողութիւններ չեն իրեն համար ու հայրենիքի յղացքին մէջ կը մտնեն թէ՛ պատմութիւն եւ թէ ալ մը շակոյթի հոլովոյթը, բայց մա՛նաւանդ ամէն բանաստեղծի մէջ թաքնուած՝ այդ սրբազան բարկութիւնը, որ վերջին վայրկեանին քերթուածը կը յաջողի հողէն վեր հանել՝ անոր տալով նշանակութիւն մը, որ քաղաքականէն աւելի քաղաքակրթական է ու մեզ կը տանի ետ, ե՛տ՝ մինչեւ դիցաբանական ակունքները մեր ազգին: Այսպէս կը վերջանայ քերթուածը՝

Տուր ինձ աղօթքի մաքրութիւն, տուր ճգնաւորի անկեղծութիւն,
Տուր մանկան վճիռ, տուր աստղի պայծառութիւն,
Տուր ճշմարիտ պարծանք, տուր ճշմարիտ յիշողութիւն,
Տուր քաջութիւն խօսքի,
Որ կանգնած լեռներիդ վրայ, որ կանգնած քարէ դաշտերիդ

digitised by A.R.A.R.@

Ձայնիս սէրն ու հառաչանքը չգպած
Առասպել պատմող Մոսկէսիդ պէս յիշատակեմ փառքերդ,
Ապա եւ խարազանեմ ինձ, ապա եւ խարազանեմ քեզ, քե՛զ
Ով երկնքի որդի, ով եղէգնի զաւակ:

Խոովիչ բան մը կայ հայրենիքի ու բանաստեղծի սա դիրկընդխառնումին մէջ, ուր սէր ու ցաւ, տխրութիւն եւ յոյս կը թելադրեն ապրումներ, որոնք լոկ Հայաստան բնակող մը կրնայ ղգալ: Իսկ թէ ի՞նչ է այդ հայրենիքը՝ այդ մենք ալ կ'ըմբռնենք Սփիւռքի մէջ, հաւանաբար շատ աւելի խորքին ու այլազան գոյներու ընդմէջէն, մենք՝ որ հայրենիքի բոլորովին ոգեղինացած, հակասութեանց մէջ ինկած մէկ իրականութիւնը կ'ապրինք:

Որքան սր կարելի է չափել բուռ մը քերթուածներէ՝ Մելիքոնեանի գործը հակայ վատնում մըն է, մախում մը բառերու, ընթացիկ խոհերու ու դիւրին տողերու, որոնց հեղեղը երբ անցնի-երթայ՝ քանի մը վհիտ, պապզուն մտածումներ, պատկերներ դեռ կը յամենան յիշողութեան հունին մէջ: Եւ ի՞նչ կը վկայեն ատոնք — թէ՝ Մելիքոնեան չէ կրցած բանալ ամբողջութեամբ միտքն ու զգայարանքները, դեռ իր երեւակայութեան վարագոյրները զոց կը մնան, թէ՝ ան դեռ դերին է երկրի մտաւորական ղեկավարութեան ու իր սիրած բանկարին, թէ՝ տասնապատիկ աւելի ուժեղ, նշանակալից կրնայ ըլլալ իր գրիչը, եթէ քաղաքի, արդի մարդու, քաղաքակրթութեան ճշմարիտ ապրումին մէջ փոխադրէ ինքզինք: Շուտ պիտի ապառի այս բանաստեղծը դիւրին գրականութեան մը գիրկը ինկած (կ'ակնարկուի այդ ածան, զոյնը թափած գրութեան, որ «Իմ մանկութեան հեքիաթի արքաները» կը կոչուի), եթէ չատ չարունակէ իր պզտիկ վարկին կառչիլ, եթէ տնտնայ ասոր-անոր նախագաւթիներուն՝ առանց անդրադառնալու, թէ ուրտեղեր արդէն հասեր են իր սերունդի արկածախնդիր յառաջապահները:

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

(Շար. 4)

digitised by A.R.A.R.@

ՀԵՐԱՆՈՅՇ ԱՐՇԱԿԵԱՆԻ «ՀՈԳԻՆԵՐՈՒ ԱՐՅՈՒՆՔԸ»

«Հոգիս ճուազ երգ մըն է, յանկերգ մը հանդարտիկ,
Զոր հավերք շուտով կը կտրեն չորս կողմէն»:

(«Հնչեակ»)

Մանկամարդ ու քաղցրալար այս երգչուհին, իր նման վաղամեռիկ միւս «սոխակ»ի՝ Դուրեան Պետրոսի՝ զուգակցորդ այս աղջիկը, երկրին վրայ միշտ համբորդեց անծանօթ գեղեցկութեանց հայրենաբաղձ կարօտը սրտին(1): Թոքախէ վարակուած աղջիկ մըն էր Հերանոյշ, որուն ձայնը, ծայրայեղ ու նրբօրէն, զգայնօրէն յուզական, էջին վրայ, չի դադրիր երբեք յիշելէ, ըղձալէ, երազելէ, սիրելէ(2):

«Հոգիներուն արցունքը» գողտր հատորը հայելին է արիւնլուայ ու մեծազգաց սրտի մը, այդ սրտի ծնունդն ու սընունդը միանդամա՛յն: Հերանոյշի թարմ, զտարիւն նկարագիրը կը պատսպարէ մեծ բանաստեղծուհիի մը հարազատ խմորը, որ անկեղծ եւ տակաւին շատ մաքուր ձայն է, ցայտաղբիւրէն նո՛ր բխող կարծես (շատ շուտ, ափսո՛ս, կը ցամքի): Դուրեանի նման, մահուան մոտիկն ու անոր ընտելութեան մէջ ապրող այս լարը, հոգին «արցունքոտ», փորձ մըն էր, թուղթերու մէջէն եւ թոքախտի մոտանուեռումին ներքեւ ու սարսափին տակ մոտալուտ լռութեան, ձգելու բա՛ն մը, իրակա՛ն, յաւիտեանս երգ-պատարիկը իր կենսաւէտ, բայց անցնող էութեան:

Այս ամէնը՝ բացարձակ անկեղծութեան եւ զտուած զգայնութեան մը սիրելի կնիքին ներքեւ: Հերանոյշ իր նամակներուն մէջ 'ըսէր.

«...Իմ զգացածս, տրտմութիւններս տողեցի: Երբ ես գրեմ՝ գրելիքս չեմ մըտածեր, այլ զգացածս կը գրեմ»:

digitised by A.R.A.R.@

Ապա՝ «եթէ ցաւերու ճամբով երգն ալ արցունքոտի», քանի՝

«Անշուշտ բանաստեղծները աւելի կը զգան եւ թերեւս ամոր համար է, որ շուտ կը մեռնին: Զգայուն մարդը միշտ դժբախտ է, իր աչքերը միշտ արցունքոտ են»: Եւ «Այն բանաստեղծները, որ զբաղած ատենին կու լան՝ մեծ ու ճշմարիտ բանաստեղծներն են» եւ... «Ձեր զգացումներն են, որ ձեր գրիչը կը վարեն»:

Ցիդիք հիւանդութիւն մը իր մէջ արդէն իսկ կը սրէր խոր եւ բազմանուրբ զգայնութիւն մը, հոգեկան վառ ապրումներով չաղախուած զդայասուր մրթնոլորտ մը (տե՛ս, «Հոգիներուն արցունքը», համանուն բանաստեղծութիւնը): Շեշտը տակաւ կը դրուէր հոգիին վրայ, անոր «կապոյտին», կուսութեան վրայ: Այս ամէնը Հերանոյշ չէր կրնար պարզօրէն խօսիլ. ան պէտք էր երգէր իր օրօրոցայինը, այն «հոգեպարար» երգը, որով «Սիրտս հրճուանքով կը թրկրի» («Կոխօրրան»): Այս երգը բնութեան սէրն է, անոր ձայնը, որ կը գիրկընդխառնուի, կը միաձուլուի այն մի՛ւս երգին, որ սրտէն կու գայ, ու սրտին կ'երթայ(3): Հերանոյշ, ճիշդ է, լացաւ իր ցաւը (ու անոր երգն ալ «Գանգատ» կը մնայ), բայց նաեւ փնտռեց անդորր մը, որ զինք անխուսափելիօրէն կը մղէր գերբնականին հետ հանդիպման մը(4): Ինք «որբ» մ'էր ու չդադրեցաւ խօսելէ ծովուն հետ, եւ լուսնին, որ զուարթ է, իր երազին հետ (միշտ կապոյտ), սէրերուն: Բանաստեղծութիւնը Հերանոյշի համար «վէրք» էր, «երշանք»:

Դաշնակ մը լոկ կ'ուզէի,
. . . . . .
Դաշնակիս հետ իմ յոյզերս ալ խօսէին.
Ու անիկա թո՛ղ հեծէր,
Դողդոջէին, կարկամէին իմ մատներ,
Թո՛ղ իմ ցաւս անիկա ալ ազդուէր:

(«Ընդանիք»)

Մխիթիք ձդտումով յունչը կը զարգանայ մա'նաւանդ «Կապոյտը» երգով, ուր կայ իր յիշատակի, վաղանցուած յիշատակի պահպանման քաղցր կանչն ու պահանջը: Հերանոյշի կեանքի ամբողջ իրականութիւնը կզգուած է, ընկղմած, «Ալպիմ-մեռնիմ»ի թեքսթին մէջ: Հոս հակադրութիւնը, որ հիմն է գրութեան, կը զարնէ յոյսը յուսալքման, եւ լոյսը, երապը՝ մութին: (Ինչպէ՞ս չյիշել Դուրեանի «Տրտունջք/Զդջում» գոյգը: Հերանոյշի համբան է այս, իրեն համար միայն գծուած, ու «տարբեր» է ան, քանի «ուզին է ցաւերու» («երկու ճամբաները»): Ցորցած վարդը անուն երգը կ'ըլլայ փոխաբերական մէկ տարբերակը, պատկերը, աղջկայ խոր էութեան ու կը բացուի անմահութեան վերջնագոյն տենչանքին: Հոգին կու լայ («Լացին գիշերը» եւ «Մահուան մօտ»), բայց սիրտը անսահման խորհուրդ մըն է, ուր կը կարգաս համաչնական եղրը Հերանոյշի էութեան, որուն փչրանքները, իր թուղթերը, երգերը, չա՛տ անձնական, դեռ գազանի՛, չեն դադրիր մնալէ եւ առյաւէտ զգայուն:

Հերանոյշի էջերը սրտամօտ ու տրոփուն լացեղանակներ են գրեթէ: Եթերային պարը, ռոմանս, ուր կը խօսուին ցաւ, արցունք, եւ կ'արիւնին «շրթունքներս կանացի»: Բայց կ'արժէ՞ր երգել այն «երգը սիրտիկ սիրտի ցաւերու», երբ աղջկայ հոգին, շնորհն իսկ, որ պէտք ըլլար հանոյքը վառեմ, ու սէրը, գա'նձը, այդ հոգին լաց մը ընդմիշտ կը մնայ եւ իր «վէրքը սեւ անդունդէն ալ է խոր» («Գանգատ»):

Ահա ինչու՝

«Ազուոր աչքեր արցունքի մէջ կը լոգան» («Գանգատ»):

Որբը պէտք է որ մեռնի եւ Հերանոյշ որքն է աշխարհին, մա'նաւանդ որքա՝ ի՛ր զանձը, իր հոգի՛ն: Կամաց կը ծնի ու կը զարգանայ փափաքը մահուան, «մէջ ծովին», «նոճին քով», ուր ցաւը կ'ածի:

Ո՞վ չի գիտեր «մատաղ մեռնիլն է գծուարը»: Գէթ Հերանոյշ չի կորսուիր, ուրիշին նման, «Անանուն, անքերթուած»,

digitised by A.R.A.R.@

եւ չատեր պիտի յիշեն զինք՝ «տրտմա-
դին ու սիրով»։

. . . . . .

Սիրուած գիրքի մը թերթերուն մէջտեղ
Կապոյտ ծաղիկ մը կը դնեմ շատ հեղ,
Որպէսզի ով որ օր մը զայն տեսնէ,
Ծաղկին հետ անուշ յոյզերս ալ յիշէ։
(«Կապոյտը»)

Շ. Տ.

ՆՈԹԵՐ.—

1.— «Կին Դուրեանն էր ան. կին ըլլալուն համար չէր կրնար երբեմ անոր արտայայտուելու ազատ ուժգնութիւնը, անոր բոցեղէն երեւակայութեան էլեկտրահոս սատկութիւնը ունենալ. չէր կրնար բնաւ իր բառերը շրջափոխել, անոնց նոր ձեւ, նոր օրէնք տալ, սակայն փոխադարձօրէն կանացի փափկութիւնով մը հագուեցուց իր բանաստեղծութիւնները, իր կնոջական շունչովը ծծեց անոր յանգերն ու վանկերը»։

Մերուժան Պարսամեան, տե՛ս, «ՀԵՐԱՆՈՅՇ ԱՐՇԱԿԵԱՆ — ԻՐ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ», կազմուած՝ Հրանտ Նազարեանցի կողմէ, տպուած՝ Կ. Պոլիս, 1910, էջ 21։

2.— «Անիկա այն հոգիներէն էր, որոնք կ՚անցնին երգի մը կարճաւէտ եթերային թրթռացումով, աղօթքի մը երկնատենչ, երկնաթռիչ սլացքին պէս, անիրականանալի երջանկութեան մը խարկանքովը դողդահար։ Խե՜ղճ Հերանոյշ, երազէ, ճիրվանայէ, արցունքէ, սէրէ շինուած միակ էակն էր, զոր երբեմ ճանչցած ըլլամ, ճիշդ այն հոգիներուն պէս, որոնք երկրիս վրայէն կը ֆալեն իբր թէ երկինքը ներկայացնելու համար»։

Նոյն տեղը, էջ 7

3.— «Միւսէի բանաստեղծութիւնները երգերու կը նմանին եւ ես երգով կու լամ եւ երգով կը ժպտիմ՝ կը պաշտեմ այդ երգերը. արդէն աղջիկներու հոգին ու կեանքը երգ մը չէ՞»։

ՀԵՐԱՆՈՅՇ ԱՐՇԱԿԵԱՆ

4.— «...ալ իրմէ բժշկութիւն չեմ խնդրեր, ի՞նչ փոյթ, գիտեմ, որ ձայնս պիտի չի լսէ, եւ սակայն ԿԸ ՍԻՐԷԻ ԶԻՆՔԸ...»։

ՀԵՐԱՆՈՅՇ ԱՐՇԱԿԵԱՆ

Կամ՝

«..., ո՞վ Տէր, այս պատուհանին քով նստած պիտի նայիմ ներմակ, միապաղաղ դաշտերուն ու պիտի սպասեմ, որ քու անուշ կամքդ կատարուի։ Ո՞վ Տէր, այս դաշտերը քու վրադ կը խօսին, այս վերջալոյսը քու փառքդ կ՚երգէ, ու հոս նստող այս սեւազգեստ նուաստ աղջիկը քու ներող սիրոյդ առջեւ կը խոնարհի»։

ՀԵՐԱՆՈՅՇ ԱՐՇԱԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՏՈՆԻՍ
կամ այլափոխուելու անոգառ նիգը

Բուն անունով Ալի Ահմէտ Սա'իտ: Ծնած է 1930ին, Սուրիոյ ծովեզերեայ գիւղերէն մէկուն՝ Թարթուսի մօտակայ Քասապինի մէջ: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայր գիւղին և Լաթաքիոյ մէջ, իսկ բարձրագոյն ուսումը՝ Դամասկոսի պետական համալսարանի գրականութեան եւ իմաստասիրութեան բաժանմունքին մէջ: 1956ին կը հաստատուի Պէյրութ եւ կը զբաղի ուսուցչութեամբ ու լրագրութեամբ՝ իբրեւ մը-շակութային բաժնի խմբագիր: 1957ին, եռասփ էլ խալի հետ, կը հրատարակէ «Շի'ըր» հանդէսը, որուն շուրջ կը խմբուին նորարարութեան ցանգով արաբ երիտասարդ բանաստեղծները: 1968ին լոյս կ'ընծայէ «Մաուաքֆ» հատորեան, որ կը դառնայ արաբ յառաջապահ գրագէտներու եւ մտաւորականներու բեմը: 1973ին կը պաշտպանէ իր տոքթորան, Պէյրութի Սեն Ժոզէֆ համալսարանին մէջ: Փենսիլվանիոյ համալսարանէն ստացած մասնաւոր թրաւէրին ընդառաջելով, Ատոնիս մէկ տարուան պայմանագրութեամբ վերջերս մեկնեցաւ Միացեալ Նահանգներ, վերոյիշեալ հաստատութեան արաբագիտական ամպիոնին մէջ դասախօսութիւններ տալու համար:

Արաբական ժամանակակից բանաստեղծութեան ամէնէն եզակի դէմքերէն մէկը ճկատուող այս յառաջապահ հերթը ցարդ հրատարակած է ութ հերթաղգիրքեր, տեսաբանական եւ ուսումնասիրական հինգ հատորներ եւ իր խմբագրութեամբ լոյս տեսած է արաբական դասական բանաստեղծութեան հատընտիր հատորեան: Ատոնիս նաեւ զբաղած է թարգմանչութեամբ, յատկապէս արաբերէնի վերածելով Սէն-Ժոն Փերսի, ժարժ Շեհատէի եւ Ռասինի կարգ մը գործերը, իսկ իր բանաստեղծութիւնները թարգմանուած են ֆրանսերէնի, անգլերէնի, գերմաներէնի, սպանիերէնի, իտալերէնի, ռուսերէնի, հայերէնի եւ թարգմաբիւ այլ լեզուներու:

Կաշկինգ
ՀԻՔՄԷԹ Ալի
եւ փոգոցը՝ յառաջապահ արեւուն, /
հովը՝ անցագիր,
եւ թաչունը՝ ճանապարհ...

ԱՏՈՆԻՍ

Մարդկային էութեան վերասլաց այլափոխումի ճիգը կը կազմէ Ատոնիսի բանաստեղծութեան այն գլխաւոր լծակը, որ այդ ստեղծագործութեան կը հաղորդէ հեղեղալին իւրայատուկ կենսունակութիւն մը: Միշտ «անծանօթին հետ ժամադրուած» արաբ այս բանաստեղծը կ'աշխատի վերաթարմացնել արաբական բանաստեղծութիւնը, զայն վերածելով մշակութային բազմաշերտ ու բարդուն մարմինի մը:

digitised by A.R.A.R.@

Շուրջ երեսուն տարուայ ստեղծագործական իր երթին մէջ, որուն արդիւնքը կը կազմեն բանաստեղծական ութ հատորներ եւ անոնց փորձառութիւնը տեսաբանող շարք մը ուսումնասիրութիւններ, Ատոնիս միշտ հաւատարիմ մնացած է իր հիմնական առաջադրանքին՝ վերաիմաստաւորել մարդը եւ անոր փոխյարաբերութիւնները շրջապատի երեւոյթներուն ու արժէքներուն հետ, բնազանցական ներուժ կարողութիւններուն յայտնաբերումով ու սանձաղերծումով։

«... Կրնանք ըսել, թէ նոր բանաստեղծութիւնը տեսակ մը իմացութիւն է, որ ունի գիտութեան օրէնքներէն առանձնացող իր իրայատուկ օրէնքները, — *կը դրէ Ատոնիս։* — Անիկա մեր ներկայութեան մէկ համապարփակ զգացողութիւնն է, եւ հրաւէր մը՝ երեւոյթներու իմաստը նորովի քննարկումի եւ հարցադրումի ենթարկելու։ Այդ պատճառով, անիկա կը մեկնի բնազանցական զգայնութենէ մը, որ իրերը կը զգայ յայտնաբերական ըզգացողութեամբ։ Նոր բանաստեղծութիւնը, այս դիտանկիւնէն, մարդկային էութեան բնազանցութիւնն է»(1)։

Իր առաջին երկու հաւաքածոներով՝ «Առաջին քերթուածներ» (1957) *եւ* «Թուզքեր՝ հովուն մէջ» (1958), *Ատոնիս կը ցուցաբերէ նորարարական թաւամ չունչ մը, որ ամբողջովին արմատական չըլլալով հանդերձ, յայտարարն է բարոյ ու ստեղծագործ խառնուածքի մը։ Ցաջորդ քերթողագիրքին մէջ՝* «Դամասկոսցի Միհիարին երգերը», *այդ չունչը կը հաստատեայ եւ բանաստեղծին յախուռն խառնուածքը աւելի բիւրեղացած, արմատական ու կաղմաւորուած նկարագիր կը ստանայ։ Այս հատորէն սկսեալ եւ յաջորդող բոլոր հատորներու տարածքին, բանաստեղծը կը լծուի շրջապատի իրերը եւ ըմբռնումները այլափոխելու, զանոնք բոլորովին նոր դիտանկիւններէ քննելու եւ արժեւորելու հեռեւողական ճիգի մը։ Արդարեւ,* «Մատեան այլակերպութեանց եւ զարդի՝ ցերեկուան ու գիշերուան աշխարհներուն մէջ» (1965), «Թատրոնն ու հայելիները» (1968), «Ժամանակ մը՝ մոխիրին ու վարդին միջեւ» (1970), «Եզակի մը՝ յոգնակիի տարազով» (1977) *եւ* «Հինգ քերթուածներու մատեանը» (1980) *հատորներուն մէջ, նորարար բանաստեղծը արմատական հարուածներով կ'ուզէ քանդել նուիրագործուած ու քարացած գէմքեր, ըմբռնումներ եւ սովորութիւններ, որոնք ազգային կամ ընկերային սրբութիւն կը համարուին, եւ որոնց դէմ բանաստեղծը ինքզինք կը կոչէ «քաղաքակրթութեան ականը»։*

Պիտի ըսենք ճշմարտութիւնը։— Այս երկիր մրն է,
որ իր ծունկը վերցուցած է
երբեւ դրօշ...

Պիտի ըսենք ճշմարտութիւնը։— Երկիր մը չէ այս,
մեր ախոռն է լուսնային
սուլթաններու անթացուպը մարգարէին
գորգրն է...

Պիտի ըսենք պարզութեամբ։— Տիեզերքին մէջ կայ բան մը, որ կը կոչուի
ներկայութիւն, եւ բան մը, որ
կը կոչուի բացակայում։ Ճշմարտութիւնը
կ'ըսենք։—
Բացակայումն ենք այդ մենք

digitised by A.R.A.R.@

մեզ երկինք մը չծնաւ, հող մը չծնաւ մեզ,
մենք փրփուր ենք շոգիացող՝ բառերու
գետէն
ժանգ մը երկնքին եւ աստղերուն մէջ, ժանգ
մը կեանքին մէջ

(Գաղտնի թռուցիկ)

Հայրենիքս տարագիր է իմ մէջս

եւ թող դէմքս հովանի մը ըլլայ···(2)

Ատոնիսի քերթուածը, ուր բազմաթիւ ձայներ կը խօսին բազմաթիւ մակարդակներու վրայ, կը ստեղծէ ու կ'ապրի գոյութենական-մշակութային տագնապ մը, որ կը դրսեւորուի նոր, ճկուն ու պայթուցիկ լեզուի մը որոնումին ու յայտնաբերումին ընդմէջէն։

«Նիւթական արտադրութեան իրականութիւնը կամ առարկայականութիւնը կը կայանայ ո՛չ թէ անոր նիւթականութեան, այլ՝ ձեւին մէջ», ինչպէս յստակացուցած է Մարքս, — *կ'ըսէ Ատոնիս։* — Նոյն խօսքը կարելի է կիրարկել, ասելի պատշաճօրէն, մշակութային արտադրութեան վրայ։ Ռոմիեոսեւ, այս արտադրութեան առարկայականութիւնը կամ իրականութիւնը խօսքին նիւթին մէջ չի կայանար, այլ կը կայանայ խօսքին ձեւին մէջ։ Եւ այս կը կիրարկուի մասնաւորաբար բանաստեղծութեան, եւ ընդհանրապէս արուեստի վրայ։ Այս պատճառով, այն քննադատութիւնը, որ կ'ուզէ փոխել, այսինքն՝ իրականութիւնը վերստեղծել յեղափոխութեան ուղղութեամբ, չի կրնար բաւարարուիլ իր քննադատած բովանդակութեան բացատրութեամբ, այլ պէտք է առաջին հերթին քննէ անոր խօսքային ձեւը, այսինքն՝ անոր ձեւական-կշռութային կառոյցը, ըսել կ'ուզեմ՝ անոր առարկայականութիւնը, կամ իրականութիւնը, իբրեւ կտոր մը, որ ընթերցողին տրուած է եւ առարկայականօրէն անոր առջեւ կը գտնուի։ Քանի որ, կտորին յեղափոխականութեան արժէչափերը ան կը շօշափէ ո՛չ թէ բովանդակութեան, այլ՝ արտայայտչական կառոյցին մէջ···»(3)։

Արդարեւ, Ատոնիսի բանաստեղծութեան մէջ առաջնահերթ կարեւորութիւն կը ստանայ կառոյցը՝ իր լեզուական ու գեղարուեստական մակարդակներու հորիզոնական խաղերով։ Բանաստեղծին լեզուն մտածում մը կամ յղացք մը արտայայտելէ անդին անցնելով՝ կը թափանցէ իրերէն ու յղացքներէն ներս եւ, հոն գոյութիւն ունեցող յարաբերութիւններն ու առընչութիւնները քանդելով՝ կը ստեղծէ նոր յղացքներ, յարաբերութիւններ ու առընչութիւններ, եւ զանոնք կը կարկառէ սանձազերծ ու տարերային լինելութեան մը ընդմէջէն։ «Բանաստեղծական ստեղծագործութեան մէջ ենթակային եւ առարկային միջեւ անջատում մը գոյութիւն չունի··· այլ անոնց միջեւ գոյութիւն ունի սկզբնական միասնութիւն մը, որ կը բխի բանաստեղծութեան մէջ բառին ու առարկային, լեզուին ու աշխարհին սկզբնական միութենէն»(4)։ *Եւ ճիշդ այս պատճառով, Ատոնիսի բանաստեղծութեան մէջ ձեւը բովանդակութեան կաղապարը չէ, այլ՝ քերթուածին ընդհանուր շարժումը եւ մթնոլորտային ճդռուածութիւնը։ Հետեւաբար,* «քերթուածը ամբողջութեամբ կը դառնայ քերթուածը գրելու փորձ մը» (*Իլիաս Խուրի*) *եւ քերթուածին ձեւը՝ զայն ընթերցելու եղանակը։*

digitised by A.R.A.R.@

Այս բոլորը, որովհետեւ Ատոնիսի քերթուած-տեսիլքը զպանակող ժամանակը դեռ չծնած ժամանակ մըն է, որուն հասնելու համար քերթուածը կ'ապրի լինելութեան ժամանակ մը։

Մոխիրին ու վարդին միջեւ կը ժամանէ ժամանակ մը,
ուր կը մարի ամէն ինչ,
ուր կը սկսի ամէն ինչ(5)։

***

«Դամասկոսցի Մխիթարին երգերը» *հաւաքածոն՝ իր ամբողջութեանը մէջ դիտուած, վաւերական արուեստի տոկուն իրագործում մը եւ Ատոնիսի առաջին մեծ դիրքը՝ կը ներկայացնէ արաբական բանաստեղծութեան մէջ անսովոր կերպար մը՝ Դամասկոսցի Մխիթարը, որ առասպելները քանդելու կոչուած է և էապէս ազատութեան ձգտումով տագնապող կերպար մըն է։ Ինքին մէջ, Մխիթար կը ներկայացնէ մարդկային հոգեկան տագնապ մը, որ անոր թոյլ չի տար որեւէ բան վերջնական համարելու, որեւէ յղացք կամ արժէք, նոյնիսկ իր անձը, իր լրումին հասած նկատելու։ Մխիթարին համար ոչ մէկ պատուանդան, ոչ մէկ աստուած կամ սատանայ գոյութիւն ունի կամ ընդունելի է, որովհետեւ «ան հող մըն է, ետ չի դառնար եւ չուրը՝ իր ակին չի վերադառնար։ Իր տեսակը ան կը ստեղծէ սկսելով իր անձէն — ան նախնիներ չունի եւ իր բայերուն մէջ են իր արմատները»։ Սարթրեան իմաստով՝ Մխիթարը գոյութենապաշտ մարդն է, որ կը կրէ սպասուածեան կիսաստուածեան նկարագիր, եւ ազատութեան մինչեւ ծայրը երթալ փորձելով, գոյութենական ընտրութիւն մը կատարելու պարագային՝ «կ'ընտրէ ինքզինք»։*

— Ո՞վ ես դուն, զո՞վ կ'ընտրես, Մխիթա՛ր.
ո՛ւր որ ուղղուիս՝ աստուած է կամ սատանային անդունդը,
անդունդ մը, որ կը մեկնի կամ անդունդ մը, որ կու գայ,
եւ աշխարհը ընտրութիւն է։

— Ո՛չ աստուած կ'ընտրեմ եւ ո՛չ՝ սատանան,
երկուքն ալ պատ են,
աչքերս կը փակեն —

պատը պատո՞վ փոխարինեմ,
երբ շփոթանքս շփոթն է մէկուն, որ լոյս կը սփռէ,
շփոթն անոր, որ ամէն ինչ գիտէ···(6)

«Մխիթար»էն *սկսեալ ուշադրաւ է ա՛յն պարագան, որ բանաստեղծը տեսակ մը քիմիագէտի վերածուած՝ կը մտնէ բնութեան տարրերու աշխարհին մէջ ու կը վերստեղծէ զանոնք, կամ կը վերագտնէ անոնց թաքնուած ինքնութիւնը, բացայայտելով անոնց ներուժ կարողութիւնները։ Ատոնիսեան տրամաբանութիւն բանաստեղծութեան բնոյթին վրայ ժամանակակից արաբը հանգէս կու գայ հակադրուելով իր ազգային քարացած աւանդութեանց* («Յառաջաբան արաբ համայնքներու թագաւորաց պատմութեան», «Այս է անուն իմ»···) *եւ արդի քաղաքակրթութեան մարդկայնական տարրէ գուրկ*

digitised by A.R.A.R.@

երեւոյթներուն («Գիրեզման մը՝ նիւ Յորքի համար»)։ Այս երկու հակադրութիւնները յաճախ կը վերածին խզումի մը, որ բնականօրէն կը դրսեւորուի նաեւ լեզուի մակարդակին վրայ։ Արդարեւ, լեզուն կը քանդէ դուշձերու վերածուած իր աւանդոյթները եւ բանաստեղծը, բանաստեղծութեան ձեւական բոլոր «չրջանակները պայթեցնելով»՝ կ'ուզէ անհետացումը այն արեան, որ «կը մակարդուի, կը վազէ իրրեւ խօսքի անապատներ»։

*Առոնիսի բանաստեղծական վաստակը նաեւ խորասոյզ խուզարկում մըն է մարմնականութեան ու սեռականութեան առեղծուածային ու մթնշաղ աշխարհներուն մէջ։ Այս գծով յատկապէս ուշագրաւ են «Սիրահարին այլակերպումները» անուն երկարաշունչ քերթուածը եւ «Եզակի մը՝ յոգնակիի տարազով» հատորը։ Վերջինին մէջ հեղինակը կ'օգտագործէ արտայայտչական ամենատարօրինակ ձեւերը, ինչպէս՝ դիրքերու ուղղահայեաց կամ շեղակի ցու
ումը էջին վրայ, զանազան նշաններու գետեղումը տողերուն մէջ կամ մէջեւ, եւայլն, եւ բարոյական առումով ամենայանդուգն պատկերներն ու դարձուածքները, պատգամելու համար.*

Եգիր հեշտա՛նմն, հեշտա՛նմն, հեշտա՛նմն,
եւ ստեղծէ մարմինը
ու զայն կոչէ մարգարէն
ու բանքերը(7)։

Մարմնականութիւնը եւ սեռականութիւնը այս հատորին էջերուն բազմաթիւ ձեւերով եւ զանազան ուղղութիւններով կ'ակնարկեն ու կ'ակնարկեն, դառնալու համար յարաճուն կերպով ինքզինք վերանորոգող ու վերստեղծող տիեզերական պիրկ ուժ մը.

Դէմքս կը ջնջեմ/դէմքս կը գտնեմ,
թշուառակա՛ն այրուրեն,
դեռ ինչո՞վ կրնամ քեզ բեռնաւորել
եւ ի՞նչ անտառ քեզմով ցանել,
անձնատուր կ'ելլամ բնութեան երէշին/եռեւէդ կը քաշկռտուիմ
ես վայրենի արմատն եմ
Ասիայի ոտքերուն միջեւ,
ուրկէ կ'անցնին ճոյզնիր՝ կիներու յետոյքներով,
մոլորակներ, որոնք խունկ ու համեմներ կը կաթկթին,
ուր երկինքը կ'անձրեւէ դիակներ ու աստուածներ/
եւ դուք՝ բեկորներն մեր երազներուն,
մեր ձգտումներուն շուրջը թռչեցէք,
մարմինները մեր սանձազերծումն են յորդումին
եւ մեր փլատակներուն մէջ ոսկիանոներէն զատ ոչինչ կայ
եւ արդ սկիզբն է ծովուն.
ես կայմ, կայմ եմ եւ ոչինչ աւելի բարձր է ինձմէ/
եւ արդ սկիզբն է երկրին...(8)

Առոնիսի բանաստեղծութեան մէջ յաճախ քերթուածին նիւթը կամ նիւթերը կ'ելլան ոչ թառեր, հաւանաբար մաքրամիտական այն ըմբռնումով, որ բանաստեղծութիւնը ո՛չ թէ դաղափարներով, այլ բառերով կը ստեղծուի։ Հոս միտքը տրամաբանութեան օրէնքներով չի գործեր եւ հա-

digitised by A.R.A.R.@

մոգելէ աւելի՝ կը ձգտի ազդելու եւ տպաւորելու։ Հոս գերիշխանութիւնը կը պատկանի ո՛չ թէ տրամաբանութեան, այլ՝ տեսիլքին։ Այս պատճառով Առոնիսի գրութիւնը կը կոչենք քերթուած–տեսիլք (տարազը նոյնինքն Առոնիսի կը պատկանի)։

Վերլուծական ընթերցումի մը պարագային, բանաստեղծական այս իրագործումին մէջ կարելի է հանդիպիլ սուֆիզմի, խորհրդապաշտութեան (յիշել մալարմէական յղացքը...) եւ գերիրապաշտութեան հոսանքներէն քաղուած եւ ստեղծագործաբար իւրացուած գաղափարներու եւ ըմբռնումներու։ Բանաստեղծը իր քերթուածով ընդհանրապէս կը ներկայացնէ գեղարուեստական ճշմարտութիւն մը, զոր ինք՝ հեղինակը, կը ստեղծէ եւ որ ընթերցողը չի յղեր ընկերութեան կամ բնութեան մէջ գոյութիւն ունեցող ճշմարտութեան մը։ Այս բոլորը խտացուած են արտակարգօրէն ցնցիչ պատկերներու (մա՛նաւանդ փոխաբերութիւններու) մէջ, որոնք առոնիսեան քերթուած–տեսիլքին շարժուն ծիրէն ներս իրարու հետ կը յարաբերին ներքին օրկանական կապերով, եւ բանաստեղծութեան խորհուրդին կը բաշխեն անսպառելի ու հմայիչ հորիզոններ։ Որովհետեւ, ինչպէս կ՚ըսէ քերթողը, «Բանաստեղծութիւն մէջ չեմ կրնար որոնել ինքնանպատակ պատկերը, այլ՝ բանաստեղծական տիեզերքը»(9)։ Եւ, մա՛նաւանդ՝ որովհետեւ մարդկային լինելութեան տագնապահար յորձանքին մէջ բռնուած ու խիզախող բանաստեղծը համոզուած է, որ «արդի քերթուածը միայն արտայայտութեան ձեւ մը չէ, այլ՝ նաեւ գոյութեան ձեւ մը»(10)։

ԿՈՐԻՒՆ ՇԱՀԻՆԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

(1).— «Բանաստեղծութեան ժամանակը» յօդուածներու ժողովածուն, բ. հրտ., 1978, Գէյրութ, էջ 10։
(2).— «Ամբողջական երկեր», Բ. հատոր, բ. հրտ., 1971, Գէյրութ, էջ 620–621։
(3).— «Բանաստեղծութեան ժամանակը», էջ 299։
(4).— «Բանաստեղծութեան ժամանակը», էջ 288։
(5).— «Ամբողջական երկեր», Բ. հատոր, էջ 608։
(6).— «Ամբողջական երկեր», Ա. հատոր, ա. հրտ., 1971, Գէյրութ, էջ 367։
(7).— «Եզակի մը՝ յոգնակիի տարազով», 1977, Գէյրութ, էջ 200։
(8).— «Եզակի մը՝ յոգնակիի տարազով», էջ 350–351։
(9).— «Բանաստեղծութեան ժամանակը», էջ 155։
(10).— «Բանաստեղծութեան ժամանակը», էջ 147։

digitised by A.R.A.R.@

ՆՄՈՅԵՆԵՐ՝ ԱՏՈՆԻՍԻ ՔԵՐԹՈՂՈՒԹԵՆԷՆ

ՍԱՂՄՈՍ

Կու գայ անգէն անտառի պէս, ամպի նման ետ չի մղուիր, ու երէկ ան ցամաքամաս մը շալկեց եւ իր տեղէն ծովը շարժեց:

Ցերեկուան ծոծրակը կը գծէ, իր սրունքներէն ցերեկ մը կը շինէ եւ գիշերուան կօշիկը փոխ կ'առնէ, ապա կը սպասէ բանի մը, որ չի գար: Ան իրերու բնագիտութիւնն է — զանոնք գիտէ եւ կը կոչէ անուններով, զորս երբեք չ'արտասաներ: Ան իրականութիւնն է եւ հակապատկերը ատոր, կեանքը եւ այլ բան:

Հոն ուր քարը կը վերածուի լճակի եւ ստուերը՝ քաղաքի, ան կ'ապրի — կ'ապրի եւ յուսաբեկումը կը մոլորեցնէ, ջնջելով միջոցը յոյսի, պարելով հոգին համար, որ յօրանջէ, ծառին համար, որ ննջէ:

Եւ ահա ան ծայրամասերու խաչաձեւումը կը յայտարարէ, մեր դարու ճակտին կախարդանքի նշանը քանդակելով:

Ան կեանքը կը լեցնէ, բայց զայն ոչ ոք կը տեսնէ: Կեանքը փրփուր կը դարձնէ եւ անոր մէջ կը սուզուի: Վաղը որսի կը վերածէ եւ յուսահատ՝ անոր ետեւէն կը վազէ: Իր բառերը փորագրուած են դէպի կորուստ, կորուստ, կորուստ...

Եւ վարանումը անոր հայրենիքն է, բայց ան լեցուն է աչքերով:

Կը սարսափեցնէ եւ կը կազդուրէ,

Ազէտ կը ծորի եւ ծաղրանքով կը յորդի.

Մարդը կը կեղուէ սոխի նման:

Ան հոգմանն է, ետ չի դառնար եւ ջուրը՝ իր ակին չի վերադառնար: Իր տեսակը ան կը ստեղծէ սկսելով իր անձէն. ան ճախնիքներ չունի եւ իր քայլերուն մէջ են իր արմատները:

Խորխորատին մէջ կը քալէ եւ հոգմին հատակը ունի:

(«Դամասկոսցի Միքիաելին Երգերը»)

ՍԱՂՄՈՍ

Հովին կուրծք մը եւ կոզ մը կը ստեղծեմ ու հասակս անոնց կը կրոնքընցնեմ: Մերժումին դէմք մը կը ստեղծեմ եւ զայն դէմքիս հետ կը բազդատեմ: Ամպերէն կ'առնեմ սեստրակներս ու մելանս, եւ լոյսը կը լուամ:

Հարսնեստունկերն ունին պսնանք մը, զոր կը հագնիմ: Շոնին ունի մէջք մը, որ կը խնդայ ինծի: Եւ ես ոչ ոք կը գտնեմ զայն սիրելու. ուրեմն, մա՜հ, շա՞տ է, որ ես զիս սիրեմ:

Կը հնարեմ ջուր մը, որ զիս չի յագեցներ: Օդի նման եմ ես ու կանոններ չունիմ — կը ստեղծեմ կլիմայ մը, ուր գոմխին ու դրախտը կը խաչա-

digitised by A.R.A.R.@

ձեւուին: Կը ստեղծեմ այլ սատանաներ եւ անոնց հետ կը մտնեմ մրցումի ու գրաւի:

Աչքերը կ'աւլեմ փոշիս մէջ: Անցեալի նեարդներու մէջ կը սպրդիմ՝ նախնիներու յիշողութիւնը բանալով: Անոնց գոյները կը հիւսեմ եւ սեղմերը կը գունաւորեմ: Կը յոգնիմ ու կապոյտին մէջ կը հանգստանամ — յոգնութիւնս կ'արեւուն ու կը լուսինուն նոյն բոլէին:

Հողը ազատ կ'արձակեմ ու երկինքը կը բանտարկեմ: Ցեսայ կ'ինչամ, որպէսզի լոյսին հաւատարիմ մնամ, որպէսզի աշխարհը դարձնեմ խրթին, դիւթող, փոխուող ու վտանգաւոր: Որպէսզի շրջանցումը յայտարարեմ:

Աստուածներու արիւնը թարմ է զգեստներուս վրայ: Թուղթերուս միջեւ նայի ճիչ մը կը բարձրանայ — ուրեմն, բառերս առնեմ մեկնիմ...

(*«Դամասկոսցի Մխիթարին երգերը»*)

ԱՆ ԱՍՏՂ ՄԸ ՉԷ

Ան աստղ մը չէ, ոչ ալ բանքերը մարգարէի մը,
լուսնին երկրպագող դէմք մը չէ ան:

Անաւասիկ ան հեթանոս ճիզակի մը պէս կու գայ՝
բառերու աշխարհը նուաճելով,
արիւնլուայ — իր արիւնը արեգակին բարձրացնելով:

Անաւասիկ ան կը հագնի մերկութիւնը քարին
եւ կ'աղօթէ քարայրներուն

Անաւասիկ ան կը գրկէ երկրագունտը թեթեւ:

(*«Դամասկոսցի Մխիթարին երգերը»*)

ՀԱՅՐԵՆԻՔ

Թախծի դիմակին տակ թառամող դէմքերուն համար
ես կը խոնարհիմ: Ճանապարհներուն,
որոնց վրայ արցունքներս իմ ես մոռցայ,
հօր մը համար, որ մեռաւ դեռ կանչ՝ ամպի մը նման,
դէմքին՝ առագաստ,
ես կը խոնարհիմ: Եւ մանուկի մը, որ կը վանառուի՝
աղօթելու եւ կոշիկ սրբելու
(իմ երկրին մէջ բոլորս կ'աղօթենք, կոշիկ կը սրբենք),

digitised by A.R.A.R.@

ժայռի մը, որուն վրայ քաղցուկս փորագրեցի,
թէ ան անծրեւ ու շանթ է՝ կոպերուս ներքեւ թաւալող,
եւ տան մը համար, որուն հողը իմ կորուստիս պահուն հետս կրեցի,
ես կը խոնարհիմ — այս բոլորը իմ հայրենիքս է, ո՛չ Դամասկոսը:

(«Դամասկոսցի Մխիթարին երգերը»)

ԱԼՔԻՄԻԱՅԻ ԾԱՂԻԿԸ

Հարկ է, որ ես մոխիրի դրախտին մէջ ճամբորդեմ,
անոր անտես ծառերուն միջեւ,
մոխիրին մէջ կը գտնուին մատանիներ եւ աղամանդ ու ոսկի բուրդ:

Հարկ է, որ ես քաղցին մէջէն, վարդին մէջէն, դէպի հունձքը ճամբորդեմ,
հարկ է, որ ես ճամբորդեմ ու հանգստանամ
որք շրթներու ալեղին տակ,

որք շրթներուն մէջ անոնց, ստուերին մէջ վիրաւոր
կը գտնուի ալքիմիայի ծաղիկը հին:

(«Մատեան աշխարհաբարութեանց եւ գաղթի՝
ցերեկուան ու գիշերուան աշխարհներուն մէջ»)

ՀԱՅԵԼԻ ՄԸ՝ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ՀԱՄԱՐ

Դազաղ մը, որ մանուկի դէմք կը հագնի,
մատեան մը, որ ագռաւի
ազիքներու մէջ կը գրուի,
հրէշ մը, որ ծաղիկ բռնած կ'ընթանայ,

Ապառաժ մը,
որ խենթի մը թոքերուն մէջ կը շնչէ.—

Ահաւասիկ
այս է դարը քսաներորդ:

(«Թատրոնն ու հայելիները»)
Հայացուց՝ Կ. ՇԱՀԻՆԵԱՆ

ԱՏՈՆԻՆ

digitised by A.R.A.R.@

ՍՊԻՏԱԿ ՈՒ ՍԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
(ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏՐՇԵԱՆԻ ՀԵՏ)

«Լիբանանի ներկայ կացութեան մէջ մարդը խնդացնելն ալ մեծ բան է, յուրջ կատակերգութեան բուժիչ դերն ալ օգտակար է, այնպէս չէ՞...»: Այս կուարք տրամադրութեամբ վերջ գտաւ Վարուժան Խտրշեանի հետ մեր ունեցած գլուխ գլխի զրոյցը, որ բակմիցս ընդմիջուեցաւ մէկէ աւելի հայաստանեան յուշերու միջանկեալ նախադասութիւններով, լիահազագ քահ-քահներով եւ «հայաստանոտ» մթնոլորտով նուաճուած Վարուժան Խտրշեան հայուն սրտաբուխ բացականչութիւններով:

Վարուժան կը խօսէր անդադար, բաց դաշտի մը մէջ արձակ-համարձակ ցատկրտող կայտառ նժոյգի մը նման: Իր մթնոլորտին մէջն էր: Կը մարմնաւորէր Հայաստանով փոթորկած սիւրէալիստ արուեստագէտին կերպարը՝ առանց դերասանական աւելորդ շպարի: Ջուսպ չէր, բայց անպսպելի գետի մը հոսքէն բռնուած լուղորդն ալ չէր: Մտքի եւ սրտի սքանչելի հաշտեցում մը կար իր դատումներուն մէջ, իր շարժումներուն մէջ, իր ձայնին ոստոստուն կշռոյթին մէջ...

Մոռցած էինք ժամ ու ժամադրութիւն, երբ, յանկարծ, «օ՜, ժամը 1.30 է արդէն, ուշացայ, ծօ՛ ժամը 12.30ին ինծի պիտի սպասէին», գրեթէ գոռաց:

digitised by A.R.A.R.@

Հապճեպով հատաքեց ծխախոտի տուփը, հրահանը, բանալիներու տրցակը եւ մեծ-մեծ քայլերով դուրս ցատկեց «Բագին»ի խմբագրատունէն: Հապիւ վերելակին մէջ ոտք կոխած՝ «Երեքշաբթի կը հանդիպիմ, սպասէ՛», ձայնեց:

Օրն էր Ուրբաթ: 3 Օգոստոս 1980:

. . . . . .

Կիրակին կանխեց Երեքշաբթին՝ իր չարաբաստիկ լուրով:

«Ռումբ մը պայթած է Խոշրեանի տան դրան առջեւ», ըսին:

«Ամբ սրունքը, ծունկէն վար, տեղն ու տեղը անդամահատուած է», շարունակեցին: «Հախը վտանգի մէջ է», աւելցուցին: «Ստոյգ մահէ փրկուեցաւ», եպրակացուցին կացութեան հետ չհաշտուող մարդու նոյն անհամոյկեր շեշտով: Ու զացին:

Երեքշաբթի օր մենք զացինք: Յետոյ դարձեալ զացինք եւ կրկին զըտանք նո՛յն Վարուժանը, անխորտակ, զուարթարիւն, պատրաստաբան ու կատակասէր Վարուժանը, զամուած՝ սպիտակ անկողնին, հայեացքը՝ պատուհանէն դուրս, միտքը՝ հայեացքէն առաջ, մայթերէն անդին, հորիզոններէն անդին...

Հո՛ն՝ ուր այնքան հաղորդելիք ունէր իր Սօսին ու Գուժին, «Տրամաթիքական»ի տղոց, ծանօթներուն, բարեկամներուն, որոնց հետ գլուխ գլխի խօսակցութեան պիտի նստէր, պիտի պարպուէր ու դարձեալ պիտի լեցուէր, հիշդ ա՛յպէս...

● Սիրելի Վարուժան, շուրջ երկու տարիէ ի վեր Հայաստան կը գտնուէիք, յատուկ հրաւէրով, Երեւանի մէջ թատերախաղ մը բեմադրելու համար: Այս շըրջանին, անկասկած, ունեցաք սերտ շըփումներ հայրենի թատերական կեանքին հետ, ծանօթացաք պատասխանատուներուն եւ, ինչպէս գիտենք, անցեալ տարեշրջանի աւարտին հայրենի հանդիսատեսին հրամցուցիք «Տրամաթիքական»ի տղոց հետ ձեր ունեցած գործակցութեան արդիւնքը՝ Նիլ Սայմընի «Զբօսայգում ոտաբոպիկ» թատերախաղը:

Քիչ մը շատ հաճելի չէ ըսել, որ ամբողջ առաջին մէկ տարին մասնաւոր բան մը չկրցայ ընել: Ուրեմն, «Սունդուկեան»ի խումբին մօտէն հետեւեցայ, որոշ մասնակցութիւն բերի իրենց գործունէութեան եւ շատ յոյսով էի, որ Հայաստանի գլխաւոր թատրոնի բեմին վրայ բեմադրութիւն մը պիտի ընեմ: Այդ բեմադրութիւնը իմ ամէնէն նախասիրած թատերախաղերէն մէկը պիտի ըլլար:

Նախ ըսեմ, որ ես պատրաստուած հասայ Երեւան եւ իմ նախընտրութիւնս կեդրոնացած էր Արթըր Միլրըի «Կամուրջէն դիտուած»ին վրայ: Բայց այդ մէկը կարելի չէր, որով՝ խումբ մը դերասաններու հետ որոշեցի բեմադրել «Ո՞վ է վախցուցը Վերճինիա Վուլֆէն» թատերախաղը: «Սունդուկեան»ի պատասխանատուները վարեցին կանաչ լոյսը, թատերախաղը արեւելահայերէնի վերածուեցաւ, դերասանները որոշուեցան, բայց, յանկարծ, չեմ գիտեր ինչ պատճառով, ինծի քիչ մը տարօրինակ պատճառներով... սառեցաւ ամէն ինչ:

● Ընտրուած թատերախաղին անը դեր մը ունեցա՞ւ այս սառեցման մէջ:

digitised by A.R.A.R.@

Հաւանաբար, անհեթեթի թատրոնը ըլլայ պատճառը, որովհետեւ որքան գիտեմ՝ թատերական այս դպրոցը խորհրդային Միութեան մէջ միայն կնաապաշտօնական ճանաչումի արժանացած է, առհասարակ կը բաւականանան թարգմանելով եւ այդ գործերը բեմ բարձրացնելէ կը խուսափին:

— *Կրնայ դեր մը ունեցած ըլլալ։ Բայց մինչեւ այսօր, իրական պատճառը չեմ դիտեր։ Հոգ չէ, կու գայ օրը եւ «չատ սեֆտուալ» բացատրութեամբ ամբաստանուած այս թատերախաղն ալ կը բեմադրուի Հայաստանի մէջ, անհեթեթի թատրոնին պատկանող այլ թատերախաղերու կողքին։ «Կը լինի, էլի՛··· Է՛դ էլ կը լինի՛···», ինչպէս կ'ըսեն Հայաստանի մէջ։*

● Ցետոյ անցաք «Դրամաթիքական» եւ լծուեցաք «Զբօսայգում ոտաթոպիկ»ի բեմադրական աշխատանքներուն:

— *Մեր բուն աշխատանքը սկսաւ Սեպտեմբերի վերջին օրերուն, Հոկտեմբերն ու Նոյեմբերը պատրաստութեան ամիսներ եղան, Դեկտեմբերի առաջին երկու շաբաթը յատկացուցինք վերջին ընթացքներուն եւ ամսուն 18ին խումբը բեմ բարձրացաւ՝ իր առաջին ներկայացումը տալու համար։*

Հոյակապ էր, հանդիսատեսները ոտքի ելած՝ երկար-երկար կը ծափահարէին։ Սկիզբը մտահոգ էի։ Կրնար խորթ թուիլ իրենց, բայց անոնք ընկալած էին եւ իրենց խանդավառութեան պատճառը այն նոր չունչն էր, այն նոր կշռոյթը, որ կու գար «Զբօսայգում ոտաթոպիկ»ի մարդկային իւրայատուկ մթնոլորտէն։

Եւ այդպէս ալ շարունակուեցաւ։ Ներկայացուեցաւ 35 անգամ, ամիսը՝ 5-6 բեմադրութիւն եւ կը շարունակուի նոյն թափով՝ իբրեւ յայտագրի գլխաւոր երկու ներկայացումներէն մէկը։

● Ցարդ քանի՞ հանդիսատես ունեցաւ «Զբօսայգում ոտաթոպիկ»ը եւ, ըստ ձեզի, դեռ քանի՞ անգամ կը ներկայացուի։

— *Երեւանի «Դրամաթիքական» թատրոնը ունի 400 աթոռ։ Ներկայացումները կը շարունակուին միշտ լեցուն սրահներով եւ, իմ դնահատումով՝ նուազագոյնը 150 անգամ կը խաղցուի, երեք տարուան ժամանակաշրջանի մը ընթացքին։ Հաշիւը կարելի է հանել։*

● Լաւ, կը հուսի՞ք խօսիլ աշխատանքի ձեր ոճին մասին. թատերախաղի բնագիրը փոփոխութեան ենթարկեցի՞ք, եթէ ենթարկեցիք՝ ի՞նչ մտահոգութիւններ թելադրուած, յետոյ՝ որո՞նք եղան ձեր գործակիցները, աշխատանքային դժուարութիւններ ունեցա՞ք···

— *Իրաւունք ունիք։ Առաջին հերթին, պիտի ուզէի անպայման յիշատակել «Դրամաթիքական»ի գլխաւոր բեմադրիչ Հրաչեայ Ղափլանեանը, որ ո՛չ միայն տէր կանգնեցաւ «Զբօսայգում ոտաթոպիկ»ը բեմադրելու ցանկութեանս, այլեւ իմ տրամադրութեանս տակ դրաւ «Դրամաթիքական»ի ամենաշնորհալի դերասաններն ու աշխատակիցները։ Ինչ կը վերաբերի թատերախաղի թարգմանութեան, նկատառելի փոփոխութիւններ չկատարեցինք, թատերախաղին մթնոլորտը եւ հոգեվիճակներուն ու վայրին սերտ առընչութիւնները հարազատ պահելու նախանձախնդրութեամբ։ Աշխատեցայ Վալերի Թումանեանի հետ, որ անդլերէնէ արեւմտահայերէնի կատարած իմ թարգմանութիւնս վերածեց արեւելահայերէնի։ Կրնամ ըսել, որ հազիւ քանի մը հպումներ կատարեցինք, որովհետեւ երբ թատերախաղին ցուցմունքները յարգող բեմադրութեան ոճը կ'որդեգրեմ՝ բնագրին հետ խաղալու իրաւունք չունիմ։*

Գիտէ՞ք ինչ, իմ միակ մտահոգութիւնս այն էր, որ ամերիկեան բարքերը, հոգեբանութիւնն ու մտքի ճկունութիւնը պիտի կարենա՞յ ընկալել արեւելահայ հանդիսատեսը։ Առաջին օրերուն շատ

digitised by A.R.A.R.@

մտահոգ էր, նոյնիսկ դերասաններուն հետ բաւական չարչարուեցայ: Հոս, Պէրլինի մէջ, կացութիւնը տարբեր է. պատկերասփիւռ, շարժապատկեր, արեւմտեան բարքեր կան, բաւական վարժուած ենք ամերիկեան կեանքի կշռոյթին: Հոն, կեանքը բոլորովին տարբեր է, յետոյ՝ շեշտուած է կեանքը ապրելու եւ դիտելու հայկական կշռոյթը: Բայց, հակառակ իմ մտահոգութիւններուս՝ ժողովուրդ-բեմ հաղորդակցութիւնը ուղղակի շշմեցուցիչ էր, անմիջական՝...

● Ըսիր, թէ առաջին օրերուն նոյնիսկ դերասաններուն հետ դժուարութիւններ ունեցած էք: Ի՞նչ բանի պէտք է վերագրել ձեր ու դերասաններուն միջեւ ըստեղծուած այս կացութիւնը, խառնուածքայի՞ն տուեալներու, թէ թատերական ներհակ ըմբռնումներու:

— *Անկեղծ ըլլալու համար, նախ կ'ուզեմ ըսել, որ գործակիցներս աջանչելի խառնուածք ունեցող դերասաններ ու դերասանուհիներ էին: Ինչպէս արեւելահայերէնով կ'ըսեն՝ «տոխց-գլուխ» մաքրամաքուր հայեր: Բայց հարցը կը կայանար անոր մէջ, որ թէ՛ Գուժ Մանուկեանը (Փօլ), թէ՛ Վիոլետա Գէորգեանը (Կորի), թէ՛ Իշխան Ղարիբեանը (Վերլասքօ) եւ թէ Իմմա Վարդանեանը (տիկին Պենքօ) կազմուած եւ թատերականօրէն նկարագիր ունեցող դերասաններ են: Ես միշտ ըսած եմ, որ սիրողներու հետ աշխատիլը շատ աւելի դիւրին է, շատ աւելի նպաստաւոր է, քան կազմուած ու արհեստավարժ դերասաններու հետ:*

Նոյնիսկ Գուժ Մանուկեանը, որ բեմադրիչին մտածումները լաւագոյնս մարմնաւորելու արտակարգ կարողութիւն մը ունի, երբեմն կ'ապրէր խոր տագնապ մը, երբ փարագիթ ձայներ կը խանգարէին մեր պայծառ փոխհասկացողութիւնը: Անոնք դժուարաւ կ'ամերիկանանային, իրենց տիպարներու մորթին մէջ կը մտնէին մեծ ճիգ թափելով, ինչ որ հասկնալի է: Վերջապէս, Գուժ Մանուկեան կամ Վիոլետա Գէորգեան հայը՝ իր խառնուածքով, մտածողութեամբ, զգայնութեամբ, հարցերը ընկալելու իւրայատուկ եղանակով, կ'արթընցնար յանկարծ, ամերիկեան ընկերութեան համար պարզ իրողութիւն մը նը-կատուող կացութիւնը չէր կրնար տանիլ ու կը սկսէր մարդուն եւ դերասանին բախումը՝ միւեւոյն անձին մէջ:

Ահիկա ապրեցանք խմբովին, փորձերուն առաջին-երկու շաբաթներուն: Յետոյ, կամաց-կամաց սկսաւ սառցահալը, աւելի ուժեղացաւ, վերապահութիւններն ու անհասկացողութիւնները նահանջեցին եւ ստեղծուեցաւ այնպիսի՛ ջերմ մթնոլորտ մը, այնպիսի՛ եղբայրացում մը, որ կարելի չէ բացատրել: Կամքը, հաւատքը եւ նուիրումը յաղթահարեցին ամէն խոչընդոտ եւ ստացուածը... եղաւ անակընկալ մը թէ՛ ինձի համար, թէ՛ թատերական շրջանակին համար եւ թէ հանդիսատեսներուն համար:

● *«Զբօսայգում ոտաթոպիկ»*ի արձանագրած յաջողութեան մասին ծանօթենք, հայրենի մամուլի էջերուն լոյս տեսած անդրադարձները խօսուն են եւ միայն կրնան ուրախացնել մեզ: Կարծեմ, Ռոստովի մէջ նաեւ լաւ ընդունելութեան արժանացաւ: Կը հանի՞ք լուսաբանել մեզ:

— *Հա, լաւ յիշեցուցիք: Ռոստովի հիւրախաղերու վեց թատերախաղերէն մէկը եղաւ եւ, իրենց խոստովանութեամբ, ամէնէն աւելի գնահատուեցաւ, հակառակ լեզուի արգելքին: Փաստը ա՛յն է, որ Ռոստովի հիւրախաղերուն ներկայացուած վեց թատերախաղերուն առիւծի բաժինը խլեց «Զբօսայգում ոտաթոպիկ»ը, հինգ անգամ բեմ բարձրանալով: Մինչդեռ, մասնակից խումբերը միասնաբար ունեցան տասնութ ներկայացում:*

● *«Զբօսայգում ոտաթոպիկ»*ին յաջողութենէն ետք, եղաք Լենինական, ուր բեմադրեցիք Ց. Պարոնեանի *«Ալաֆրանկա»*ն: Կ'ենթադրեմ, որ Հայաստանի զուարթախոհութեան մայրաքաղաքը՝ իր

digitised by A.R.A.R.@

Գիւմրիով ու սրամիտ լենինականցիներով, ո՛չ միայն տպաւորեցին ձեզ, այլեւ ձեր յիշողութեան մէջ դրոշմուեցան անջնջելիօրէն:

— Օ՛, Լենինականը, հոյակապ քաղաք է Լենինականը, զարմանալի քաղաք, զարմանալի ժողովուրդ: Լենինականցիները շատ դժուարահաճ են, նուրբ է իրենց ճաշակը եւ, այդ պատճառով, ենթածուած ապրանքը դժուար կ'ընդունին: Իրաւունք ունին: Իրենց գեղարուեստական ճաշակը խոր արմատներ ունի: Ժամանակին, Լենինականը եղած է Հայաստանի թատերական կեանքի մայրաքաղաքը, որուն բեմին վրայ փայլել ուզած են տաղանդաւոր դերասաններ, ինչպէս՝ Վարդան Ամեմեանը, Աննա Պետրոսեանը, Վարդուհի Վարդիրեսեանը, Մհեր Մկրտչեանը, Բարգէն Ներսիսեանը, ժան Էլոյեանը, Գուժ Մանուկեանը եւ արժէքաւոր այլ դէմքեր:

Այսօր եւս Լենինականը կ'ապրի թատերական եռուն կեանք մը: Թատրոնը Լենինականին սիրոն է, իսկ իւրաքանչիւր լենինականցի դերասան է այս ըսքանչելի, կենսախինդ բեմին վրայ: Լենինականը ունի 700 աթոռ հաշուող հոյակապ թատրոն մը, ամէն տեսակի յարմարութիւններով, 170 անձ հաշուող իր անձնակազմով: Ուրեմն, Ազգանդ Վրամեանի անուան թատրոնի գլխաւոր բեմադրիչը՝ Գրիգոր Մկրտչեան, որ խումբ մը գործակիցներով երեւան իջած էր «...Ոտաբոպիկ»ը դիտելու համար, Նիկայայումէն եաք ընեց զիս եւ... հրամայելու պէս աշխատանքի հրաւիրեց: Չէի կրնար մերժել, ինչպէ՞ս մերժէի: Գայինք Լենինական, ուր մնացի աւելի քան շորս ամիս: Մարտի 7ին սկսանք մեր փորձերուն եւ «յանձնումը» կատարեցինք Յունիս 7ին: Դերասաններուն բնաւ ծանօթ չէի եւ, արդար դերասաչիում մը կարենալ կատարելու համար, առաջին ամիսը յատկացուցի փնտռտուքներուն: Ամբակում տղայի դերը վստահեցայ 82 տարեկան եւ 120 քիլօ կշռող դերասանի մը: Ընկեր Ղազարեան կը կոչուէր: Ինչպէ՞ս չյարգեմ: Փորձերը վերջացնելու վրայ էինք, երբ Նիկողիմոսը մարմնաւորելու բաժինը վերցուցած 70ամեայ գրքասէր դերասանը՝ Լեւոն Արրահամեան, անակնկալօրէն հիւանդացաւ: Ըսինք՝ մէկ-երկու շաբաթէն կ'ազէկնայ: Հիւանդանոց մտաւ, հոնկէ Երեւան ղրկեցին եւ իմացանք, որ ան կոկորդի քաղցկեղէ կը տառապի: Մտիպուած՝ ես խաղցայ: Գրժուեցան, ինչպէս իրենք կ'ըսեն, է՛... լեզուն ալ իր դերը ունեցաւ, արեւմտահայերէնը կը լսէին արեւմտահայու առոգանութեամբ եւ չատ սիրեցին: Իրենք որքան ալ փորձեն, մեր հարազատութեամբ չեն կրնար արտասանել: Հոյակապ էր: առմսերը օրեր առաջ կը սպառէին: Ունեցանք 22 ներկայացում, շաբաթական չորս ելոյթ եւ ամառնային արձակուրդը վրայ եկաւ: Կ'ենթադրեմ, որ վերադարձիս 15-20 անգամ խաղալու առիթ կ'ունենանք, որովհետեւ Երեւանի պատկերասփիւռին հետ պայմանաւորուած եմ՝ «Կոճատ զոյգը» բեմադրելու համար:

● Ասկէ առաջ պատկերասփիւռի եւ շարժապատկերի փորձառութիւն չէիր ունեցած կարծեմ: Ի՞նչ բնոյթ պիտի ունենայ ձեր բեմադրութիւնը, զուտ շարժապատկերայի՞ն պիտի ըլլայ, թէ թատրոնի եւ շարժապատկերի ոճերուն հաշտեցումը ձեւով մը: Ցեղոյ, որո՞նք պիտի ըլլան ձեր գործակիցները:

● Ճիշդ է: Ասիկա իմ առաջին փորձս պիտի ըլլայ եւ, կը կարծեմ, որ բաւական ուսանելի աշխատանք մըն է: Գիտի աշխատիմ սթիւտիոյի մէջ բեմադրել տեսարաններուն մեծ մասը, ինչ որ գործին պիտի տայ թատերական դոյն մը: Ինչ կը վերաբերի գործակիցներուս, «Տրամաթիքական»ի ուժերէն պիտի փորձեմ լաւագոյնս օգտուիլ: Սկզբունքային կերպով՝ իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Լեւոն Թոխիկեանը, Ռաֆֆի Քոչանջեանը, Անահիտ Թոփչեանը...

● Վերադառնանք հայրենի թատրոնի ներկային, ուր այժմ կը խօսուի հսկա-

digitised by A.R.A.R.@

ներում կորուստին, այսինքն՝ Փափազեանի, Ղեբսխանեանի, Ամեմեանի «անփոխարինելի բաց»ին շուրջ: Բայց, հայրենի թատրոնը ներկայիս կ'ապրի երիտասարդացում մը, որ յուսատու է եւ գեղեցիկ: Սերնդափոխութեան պատճառով առաջացած այս թարմացումն ու նոր դէմքերու մագլցումը ի՞նչ տպաւորութիւններ ձգեցին ձեր վրայ:

— Ճիշդ է, Հայաստանի մէջ անդադար կը յիշուին երկու անուններ՝ Փափազեան եւ Ամեմեան: Ամեմեանը մեծ տպաւորութիւն ու դրոշմ ձգած է հայրենի թատրոնին ու հանդիսատեսին վրայ եւ ժողովուրդը անդադար զինք կը փնտռէ: Ասիկա հասկնալի է: Բայց արդար ըլլալու համար պէտք է ըսել, որ այսօր կան այնպիսի՛ բեմադրութիւններ, որոնք առանց տատամսումի պիտի ուզէի դնել Լոնտոնի ամենանշանաւոր բեմերուն վրայ: Օրինակ, «Վերջին ուսուցիչը», «հաթաթալա»ն, «հայմեռուկ»ը, «Կորիոլա»ն, «Մթին պատմութիւն»ը եւ երիտասարդ բեմադրիչ Արմէն Խանդիկեանի «Մոռանալ Հերոսդրատ»ինը, որ աքանչելի գործ մըն է, կարծես թատերական երեք հազար տարուան պատմութիւն ունի, երեք հազար տարի ետ գացած է, առաջ եկած է եւ, այսպէսով, Խանդիկեանը յղացած է այս արտակարգ, կուռ եւ ինքնուրոյն բեմադրութիւնը:

Ինչ կը վերաբերի դերասաններուն, իմ կարծիքով՝ Հայաստանի մէջ, այսօր, քառասուն տարեկանէն վեր դերասան դժուար է գտնել: Արդէօք կը չափազանցե՞մ: Բայց այս է տեսակէտս, կրնայ ճիշդ չըլլալ, սակայն նորէն կ'ըսեմ, որ Հայաստանի մէջ այսօր իսկական դերասանները պէտք է փնտռել քառասունին չհասած տարրերուն մէջ: Սօս Սարգսեանը հոյակապ է, աքանչելի մարդ, զլուսարիւն հայ եւ նոյնքան զուարիւն արուեստագէտ: Ուրիշներ ալ կան իր սերունդէն:

Բայց ինծի հրճուանք պատճառողը երիտասարդներն են, որոնց անունը հրապարակեմ կու տամ: «Մոռանալ Հերոսդրատ»ի գլխաւոր տիպարը մարմնաւորող Վոլոդիա Մարեանը՝ այս ջղուտ տղան, որ համակ եռանդ է եւ ապրում: Յետոյ՝ Գուժ Մանուկեանը, իմ ուզած դերասանս է, Հայաստանի Մարլոն Պրանտոն. նաեւ կան ուրիշ անուններ, որոնք այսօրուան ձայնով, թատերական աշխարհի մեծօրեայ կշռոյթով ըսելիք ունին, մասնակցութիւն բերելու արդար իրաւունք ունին: Այս երիտասարդներն են՝ Իշխան Ղարիբեանը, Բաֆֆի Քոթանջեանը, Վոլան, Գուժն ու իրենց ընկերները, որոնք պիտի հիմնեն հայրենի թատրոնին ներկան ու ապագան:

● Իսկ դերասանուհիներու զծով...

— Ես անպայման պիտի ուզէի խօսիլ Անահիտ Թոփչեանի մասին: Անկեղծ ըլլալու համար պէտք է ըսեմ, թէ Հայաստանի բեմին վրայ Անահիտը գուցէ միակ կինն է, որուն բերնէն կը լսես բիւրեղեա՛յ հայերէն, իսկապա՛ն գեղցում, թաւշային ու հասուն, կրքոտ ու տաք՝ իր արտաքին հրապոյրէն աւելի: Նմանապէս, կարելի չէ չանդրադառնալ Վիոլետա Գէորգեանին, Տաթեւիկ Ղարիբեանին, որոնք քառասունէն վար են: Այս երիտասարդներն ու հայուհիները ինծի կը ներշնչեն ա՛յն հաստատ յոյսը, որ նոր սերունդը ընելիք ունի, իրակա՛ն թատրոն կրնայ ստեղծել:

● Այս բոլորը, անշուշտ, ուրախութիւն կը պատճառեն: Բայց թոյլ տուէք, որ թատերասէր հասարակութեան եւ մեր անունով կրկնենք բազմիցս կրկնուած հարցումը. «Ե՞րբ Պէյրութ պիտի վերադառնաք, լիբանանեայ թատրոնին համար ի՞նչ ծրագիրներ ունիք»:

— Իրաւունք ունիք: Բոլորը իրաւունք ունին: Սկզբունքով՝ պիտի վերադառնամ Նոյեմբերի կիսուն, երբորդ անգամ ըլլալով պիտի կազմեմ խումբ: Այս օրերուն՝ Համալսարանին հետ ալ պիտի պայմանագրուիմ, առաջարկեցին եւ բե-

digitised by A.R.A.R.@

ղանայի համամտութիւնս յայտնեցի։ Վաղը միւս-օր պայմանագրութիւնը պիտի ստորագրեմ եւ պիտի վերադառնամ զատախօսի պաշտօնս։

● Իսկ ծրագիրներդ...

— *Գիտէք։ Արթուր Միլլրի «Կամուրջէն դիտուած» մնայուն մտասեւեռումս է։ Անպայման պիտի բեմադրեմ օր մը։ Հաւանաբար, դալ տարի չկարենամ, պէտք եղած ուժերը դժուար թէ գտնեմ, այս կացութեան մէջ դժուար իրականանալի ծրագիր մըն է։ Յետոյ, մարդիկ ա՛յնքան ճնշուած հոգեվիճակ մը կ'ապրին, մթնոլորտը ա՛յնքան ծանր է, որ վիշերու լարում պահանջող նման թատերախաղ մը բեմադրելը առայժմ հիւղ ալ չէ։ Եւ յետոյ, Լիբանանի ներկայ կացութեան մէջ մարդը խնդացնելն ալ մեծ բան է, լուրջ կատակերգութեան բուժիչ դերն ալ օգտակար է, այնպէս չէ՞...*

Վերջակէտ։ Վերջակէտը պիտի գրուէր հոս։ Բա՛յց...։ Հիմա, օրերը կ'երկարին կախման կէտի պէս։ «Եղաւ, բայց ինչո՞ւ եղաւ, եղբա՛յր, ինչո՞ւ ըրին... ո՞վ էր... ի՛նչ կ'ուզէին ինձմէ, ի՞նչ ըրած էի... չեմ հասկնար, իրա՛ւ որ չեմ հասկնար... տալը՝ տուինք... բայց առանց պատճառի ալ բան կ'ըլլա՛յ... գոնէ պատճառը գիտնաս... այս ինչ անհեթեթ կացութիւն է, եղբա՛յր»։ Ու քահ-քահն ու սրտի խորերէն ժայթքած հարցումները կը գրկեն կիրար, կը ցնցեն հիւանդանոցին սենեակը, որ դարձեալ կը լեցուի համակ կեանք ու ջիղ Վարուժան Խաղշեան մարդուն կենսախայտութեամբ, կատակներով, լիսահազագ քահ-քահներու պոռթկումով, յոյսով, երազներով...

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԹԻՐՆ ՈՒ ԹԵՐԻՆ ԱՅՍՕՐ

Շարունակելով պարբերական մեր մատնանշումները հայերէնի կիրառական հարցերուն շուրջ, ստորեւ՝ քանի մը առարկայական սխալագրութիւններ. ապա, նոյնքան շահեկան մեր աչքին, քանի մը վիճարկելի դրոյթներ, ստուգաբանական բնոյթի:

1) ԲԱՑԸ՝ ՈՐ ԻՐ ԽՆԴԻՐԸ ԿԸ ՓՆՏՌԷ...

Նախորդ յօդուածով խօսուած էր ստորագիչ - ենթակայ համաձայնութեան խախտումներու մասին, մանաւանդ այն պարագաներուն, ուր ենթական շրջուած է, կու գայ ստորագիչէն (բայէն) ետք: Հոս մատնանշուելիքը բայերու խնդրաւութեան խախտումի յաճախագէպ երեւոյթն է: Պարզ օրինակ մը տալու համար, կ'ակնարկենք սա տեսակի սխալի մը. Ես կը հետաքրքրուիմ ու կը հետեւիմ իրեն: *Ո՞ւր է սխալը. հո՛ն՝ ուր կը հետաքրքրուիմ գործական հոլով խնդիր կը պահանջէ, եւ իրենը կրնայ վերաբերիլ միայն կը հետեւիմ բային: Պէտք է ըսել՝* Ես կը հետաքրքրուիմ իրմով ու կը հետեւիմ իրեն:

Մեր մամուլին ու գրականութեան մէջ, ըսինք, դժբախտաբար հազուադէպ չէ այս սխալը, որ նոյն խնդիրը կու տայ տարբեր սեռի իրարու շաղկապուած բայերու: Օրինակնե՞ր. Անմնապէս ծանօթ եմ եւ կը բաժնեմ Լիբանանին կառչելու հայութեան վճռականութիւնը: *Անշուշտ պէտք է ըլլայ՝* Անմնապէս ծանօթ եմ հայութեան վճռականութեան՝ կառչելու Լիբանանին, եւ կը բաժնեմ զայն: *Ուրիշ օրինակ մը, քիչ մը տարբեր տիպի.* Ես միշտ խուսափած ու միշտ պայքարած եմ, որպէսզի առնուի որոշում մը...: *Անշուշտ յստակ է, որ երկրորդական նախադասութիւնը* (որպէսզի առնուի...) *կրնայ կապուիլ միայն պայքարիլ բային, ոչ՝ խուսափիլ բային: Այս վերջինը կը կարօտի ուրիշ խնդիրի մը, բացառական հոլով* (բանէ մը խուսափիլ...), *որ կենսական է նաեւ արգելելու համար նախադասութեան տրամաբանական թերին:*

Ոմանց բայերու խնդրական պաշտօնը, անկախ վերեւի հարցէն, կը թուի դեռ բիւրեղացած չըլլալ որոշ մտքերու մէջ: Այսպէս, անդրադառնալ բայի գործածութիւնը. բանի՞ մը անդրադառնալ, *թէ՝* անդրադառնալ բանի մը մասին: *Անշուշտ՝ առաջինը: Կարելի չէ* անդրադառնալ իրաւի կարիզային բաղաձականութեան մասին. *կարելի է* անդրադառնալ բաղաձականութեան (*առանց* մասին): *Նոյնը՝ տեղեկանալ բային մասին, որ կ'առնէ անուղղակի խնդիր՝ տրական հոլով, ոչ՝ ուղիղ խնդիր, հայցական հոլով:* Ձեմ տեղեկանար վարչապետին Աթէնք գտնուիլը, *կ'անդրադառնանք* Աթէնք գտնուելուն:

digitised by A.R.A.R.@

2) ԸՄԲՌՆՈՒՄ ԵՒ... ԸՄԲՌՆՈՂՈՒԹԻՒՆ

Սկսինք երկրորդէն։ Ըմբռնողութիւնը, որուն մէջ հայ լեզուի... նախախնամութիւնը ձեւն ալ դուած է ենթակայական դերբայի -ող մասնիկը աւելցնելու, մարդկային մտքի պաշտօնն է, կարողութիւնն ու յատկութիւնն է, որ... կ'ըմբռնէ։ Սխալ է ուրեմն խօսիլ, ըսենք, ընկերվարութեան ըմբռնողութեան մը մասին։ Ատոր համար ունինք ըմբռնումը, որ և՛ ըմբռնելու արարքը կը նշէ, և՛ ըմբռնողութեան պաշտօնի կատարած այդ արարքին արդիւնքը։ (Այս վերջին իմաստով, ըմբռնում բառը հոմանիշ է յղացքին)։

Մերժե՛նք ուրեմն բաղադրական ըմբռնողութիւնները սխալախօս մեր ազուցակիցին, իրեն թելադրե՛նք բաղադրական ըմբռնումներ։

Նշենք, որ միեւնոյն սխալագրութիւնը կը կատարենք, խօսելով, օրինակ, կեանքի մեր հասկացողութեան մասին։ Հասկացողութիւնը, կրկին, հասկնալու ատակութիւնն է, ո՛չ՝ այդ ատակութեան արդիւնքը եղող... հասկացութիւնը, հասկացումը։ Այս վերջին բառերը լայն գործածութիւն ունին արեւելահայերէնի մէջ, ուր անոնք խնամքով կը զանազանուին հասկացողութեան մասնաւոր պաշտօնէն։

Իբր եզրակացութիւն, արձանագրենք ու պահենք, որ հոգեբանական ոլորտի բառերու մէջ, -ող մէջադաս մասնիկը, ընդդի, կատարող ենթակայի իմաստ արտայայտող, մինչ ալ կը նշէ պաշտօնը, բան մը ընելու կարողութիւնը. յիշողութիւն (որ վարժուած ենք զանազանել յիշատակէն...), ճանաչողութիւն, դատողութիւն...

3) ԸՆԿԵՐԱՅԻՆ ՈՒ ԸՆԿԵՐԱԿԱՆԸ

Այս զոյգն ալ թշնամի է սխալագրութեան բարեկամներուն։ Ցանախ կը հանդիպինք ընկերային հաւաքոյթներու, ուր կը լսենք ընկերային զրոյցներ։ Չեղա՛ւ։ Ընկերայինը մարդկային հաւաքականութիւններու կնիքը տուող ընդհանրական որակականն է. ընկերային հայց կ'ըլլայ, ընկերայինն հակադրութիւն ու բախում ալ կ'ըլլայ. բայց ընկերային հաւաքոյթ ու զրոյց չեն ըլլար։ Այս հոգեշահ բաներուն վերապահուած է ընկերական որակականը. ընկերական զրոյց, ընկերական հաւաքոյթ։ Արեւելահայերէնը ձեւը գտած է խուսափելու այս տիպի չփոթէ մը, քանի սկիզբէն արդէն՝ ընկերայինի տեղ կը գործածէ հասարակականը. հասարակական հայց, հասարակական գործունէութիւն։ Անշուշտ երբ շափիոն «հոմանիշ» մը չի գար գործը խանգարելու, այսինքն՝ երբ հասարակականը, նրբերանգի մը արտայայտութեան պարբերակով, տեղը չի գիջիր... սոցիալականին...։ Բայց ասոր մասին՝ աւելի վար։

Ուրիշ առիթի վերապահենք նաեւ զանազանումը՝ ընկերային/ընկերաբանական զոյգին եւ նմանատիպ այլ զոյգերու միջեւ։

4) ԻՆՉՈ՞Ի ՈՉ՝ «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ»

Վերեւի պարբերութեան մատանշումէն բիւած առաջարկ մը՝ ասիկա, յանուն հայ լեզուի միութեան, անոր երկու ճիւղերու մերձեցման, եւայլն։

digitised by A.R.A.R.@

Արդարեւ, ինչո՞ւ չորդեգրել, արեւմտահայերէնի մէջ, հասարակական որակականը, երբ հասարակութիւն գոյականը, նաեւ հասարակագիտական որակականը յաճախ կը գործածուին, փոխարինելով ընկերութիւնը՝ առաջինի պարագային, ընկերաբանականը՝ երկրորդի պարագային։ Հասարակականը, ինքը, անշուշտ պիտի փոխարինէր ընկերայինը։

Առաւելութիւնն՞ը այս գործածութեան։ Նախ՝ ընկերայինի գործածութենէ վերնալով՝ ընկերականի իմաստն ու օրինավիճակը կը հաստատուին։ Երկրորդ, արեւելահայ/արեւմտահայ այս մերձեցման անուղղակի արդիւնքը կ'ըլլայ, յուսանք, արեւելահայերէնէ վերացումը սոցիայական բառին, եւ ամրացումը հասարակականին, անոր գործածման ընդհանրացումը։

Նշենք, որ հասարակագիտութիւնը ընկերաբանութիւն եզրին վրայ ունի իմաստային որոշ առաւելութիւն մը եւս, գործածութեամբ շահուած։ Մեր մամուլի որոշ օրկաններ կը կրեն «հասարակագիտական» նշումը, իրենց տիտղոսին տակ. «ընկերաբանական» եզրը դժուար թէ կարենար գործածուիլ անոր տեղ։

Ճիշդ է, որ իմաստային երանգ մը կայ հասարակականի եւ ընկերայինի միջեւ. վարժութիւնը չունինք լսելու հասարակական հակադրութիւններու, հասարակական տագնապի մասին։ (Այս պարագաներուն է, որ արեւելահայերէնը կը դիմէ սոցիալականին...)։ Սակայն ատիկա գործածութեան հարց է պարզապէս, եւ հասարակականի տեւական գործածութիւնը ընկերայինի փոխարէն՝ կը ստեղծէ այդ վարժութիւնը։

5) ԻՆՉՈ՞Ւ «ՀԱՄԱՑՆԱԳԻՏԱՐԱՆ» ՏԱԿԱՒԻՆ...

Հայկական առաջին Հանրագիտարանի (ՀԱՀ) հրատարակութիւնը սկսած է վեց տարիէ ի վեր։ Հանրագիտական հրատարակութիւններ ունեցած ենք անցեալին, սակայն բառին բուն իմաստով առաջին հայկական հանրագիտարանն է ՀԱՀը։ Պատմական այս իրողութիւնը բաւ չէ՞ այլեւս միութիւն ստեղծելու համար հրատարակութիւնը բնորոշող գոյականին շուրջ. հանրագիտարա՞ն, թէ համայնագիտարան։

Արեւմտահայերէնը, մինչեւ վերջերս, կը հակէր երկրորդին. թէեւ հանրագիտարանը (նաեւ այս վերջինի հանրագիտակ ձեւը, երբ տիտղոս, երբ յատուկ գոյական նաեւ գործածուած աւանդաբար) եւս կ'օգտագործուէր յաճախ։ Պէտք է նշել, սակայն, որ համայնագիտարանը ունէր (եւ ունի) անպատեհութիւնը վանկով մը աւելի երկար ըլլալու, առանց խօսելու համայնարմատի արդէն բազդիր բառ ըլլալու (համ-այն) իրողութեան մասին, ինչ որ չէնսորէն կը ծանրացնէ ամբողջութիւնը։ Այս իմաստով, կրնանք հաւատալ որ համագիտարան եզրը, ստացուած՝ -այն- մասնիկի յապաւումով, աւելի յաջող, թեթեւ եւ կուռ պիտի ըլլար, եթէ... գոյութիւն ունենար։ Այս վերջինի առաւելութիւնները կը վերագտնուին հանրագիտարանի մէջ, որ հայրենի պետականութեան վաթսուն եւ երկու տարիներու հաւասար իր տարիքին կ'աւելցնէ նոյն տեւողութեան նախա-տարիք մը, արեւելահայոց մօտ գործածուած ըլլալով հաւանաբար արդէն 1860ական թուականներէն սկսեալ։

Եզրակացութիւն՝ գործածե՛նք հանրագիտարանը, հանրագիտականը, եւ մոռնա՛նք ծանր ու երկարապատում համայնագիտարաններն ու համայնագիտականները։

Ե. ՔԻՒՐՔՃԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

- «ՀՈՂԷՆ ԵՐԿԻՆՔ» (բանաստեղծութիւններ), Մկրտիչ Հաճեան, Մեքսիքօ, 1977, 127 էջ:
- «ԲՈՅԵՐ» (բանաստեղծութիւններ), Մկրտիչ Հաճեան, Մեքսիքօ, 1973, 150 էջ:
- «ՍՐՏԻ ԶԱՅՆԵՐ» — Գ. հատոր (բանաստեղծութիւններ), Դեւ, Թեհրան, 1974, 313 էջ:
- «ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ — բանաստեղծ-նկարիչ Դեւի» (վիպայութիւններ), խմբագիր՝ Անդրանիկ Սարեան, Թեհրան, 1974, 114 էջ:
- «ԴԻՒԱՆ» (արձակ էջեր եւ քերթուածներ), Մեսրոպ Դ. Թաղիադեան, խմբագիր՝ Մեսրոպ Եպս. Աշճեան, Նոր Զուղա, 1979, 654 էջ:
- ԹՐՔԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ» (բանաստեղծութիւն), Երուանդ Գարաճեան, Զէյթուն, 1965, 50 էջ:
- «ԳՈՎԵՐԳ ՀԱՅ ԴՐՕՇԻՆ» (բանաստեղծութիւն), Շահպան, Նիւ Եորք, 1978, 20 էջ:

⁂

• *Տեղի անձկութեան պատճառով՝ ստիպուեցանք յետաձգել Դ. Վարուժանի «Ո՛, Տալիքա» եւ «Սադուռնական» բանաստեղծութիւններուն, ինչպէս նաեւ Վ. Տէրեանի գերեզմանին կապակցութեամբ կազմուած մեր նշումները:*

Անոնք պիտի հաղորդուին «Բազմն»ի հետագայ թիւերով:

digitised by A.R.A.R.@

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵՐԻՆ

ԼԻԲԱՆԱՆ	60 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	27 ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	5 Լ. ՈՍԿԻ

باكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

المدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE

LITERAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր

ՊՕՂՈՍ ՄՆԱՑԵԱՆ

Խմբագրութեան անդամներ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՊԷՐԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

B. P. 11-8404 - Beyrouth - LIBAN

Tel. 296898

digitised by A.R.A.R.@